№ 374

520

№ 2000



I
1051

1594-Kz

Գիրք պայքար ճոռթեան կայսերը փրկ-
կրանեցուք և կենդ և որդւոյն ...

յԱղէք Կոնեալ

1696

8

105

պատմութիւն կայսեր և [illegible]
[illegible] [illegible] [illegible] [illegible]:
[illegible] [illegible] ([illegible]
[illegible] [illegible] 5զ 364)

Բ-1696

25-57

Գիրք պատմութեան կայսերն [illegible]
և կնոջ և [illegible] ...
[illegible], 1696.
История императора
Юстиниана, его жены и
сына. Ливорно, 1696 г.



28782-63

Պ․ ոշէ քննաստատութեան տաէ ցնոսա․
առէք մանուկս [illegible] ուսուցէք զա

Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна

1595-ԱԳ

սրբոյ
Էջմիածնի, և սրբոյն Սարգսի զօրավարի։
Ի հայրապետութեանն Տ՟ն Նահապե
տի ամ՟ից հայոց կաթուղիկոսի։
Ի Յուլինոսայ։
Բարդուղի։

Թվ՟ոջ Փրկչին. 1696։
Հայոց. 1145. Մայիսի. 25։

4259

Պատմութիւն հօրն փոնցիանոսի. եւ կնոջն. եւ որդւոյն դիոկղետիանոսի. եւ է իմաստասիրացն.

Այր ՚ի Հռոմ Թագաւորմի. եւ անուն նորա մոզոլոս կայսր. եւ ունէր իւր սպա-րապետ մի փոնցիանոս անուն. յոյժ զօրեղ եւ քաջ. որ եւ բազում տեղիս ՚ի պատերազմի՛ արարեալ էր քաջութիւնս. որ եւ հաճոյ թուեցաւ փոնցիանոսն առաջի կայսերն մոզոլոսի. որ եւ գովեաց զնա յոյժ. եւ խոստացաւ տալ նմա զդուստրն իւր գեղեցիկ ՚ի կնութիւն. զի յետ մահուան իւրոյ ժառանգեսցէ փոնցիանոսն զաթոռն իւր. որ եւ եղեւ իսկ. Իսկ յորժամ էառ փոնցիանոս զդուստրն մոզոլոսի եւ փեսայացաւ նմա. յայնմ հետէ Յանձնեաց մոզոլոս զԹագաւորութիւն իւր փոնցիանոսի փեսային իւրոյ եւ ասէ. ահա ես ծերացեալ եմ. եւ այլ ոչ կարեմ կառավարել զզօրսդ իմ. արդ օրհնութեամբ իմով բարով եւ խաղաղութեամբ վայելեսցես զաթոռն քո. եւ տուեալ հրաման որ աղաղակեաց մունետիկն իմէջ քաղաքին ասելով. թէ այսուհետեւ կայսր եւ թագաւոր հռոմայ փոնցիանոսն է. Իսկ ամ Նախա

1594-ԱԴ

րարքն և կուսակալքն և մեծամեծ իշխան
քըն՝ եկեալ երկրպագեցին փոնցիանոսին և
ասէին. կեցցէ արքայ։ Եւ կայսրն մոզոլոս
յետ տարոյ միոյ մեռաւ խաղաղութբ։ Եւ
յոյժ զուարճացոյց փոնցիանոս զերկիրն իւր
Որ և մեծամեծաց մինչև ցփոքունս ամենե
քեան գո՛հ կու մատուցանէին։ Եւ յետ եր
կու ամի թագաւորութե իւրոյ. եղև նմա
զաւակ արու. որ եղև յոյժ խնդութի արքային
և նախարարացն. որ և անուանեցին զանունն
նր դիոկղետիանոս. աճեալ և զարգացեալ
եղև Է ամաց։ Եւ յորժամ եղև մանուկն
դիոկղետիանոս Է ամաց. մայր նրա հիւան
դացաւ մե՛րձ 'ի մահ. և կոչեաց առ ինքն
զկայսրն և ասէ ցնա՛։ Արքա՛յ աղաչեմ զքեզ.
զի ունիմ խնդիրքմի փոքրիկ կատարես ինձ։
Ասէ կայսրն խօսեաց թագուհի, և ես շու
տով կատարեցից զխնդրուածս քո։ Ասէ
թագուհին. գիտեմ որ այս ցաւս որ դի-
պաւ յի՛ն՝ ցաւ՜ մահու է։ աղաչեմ զքեզ ար
քայ՝ զի յետ մահուան իմոյ յորժամ առնես
այլ թագուհի. մի՛ տացես հրաման թա
գուհւոյն քո որ իշխեսցէ իվր որդւոյ իմոյ։
Ո՜ի եթէ նա՛ իշխեսցէ ի վր որդւոյ իմոյ՝
որդին իմ ոչ զերծանի իմահուանէ։ Այլ
եղիցի պահեալ յօտա՛ր երկրի՝ մինչև զար
գասցի և զօրասցի որդին իմ։ Եթէ զայս ա-
րասցես՝ բազում բարութիս հանդիպի քեզ՝
և որդւոյ իմոյ։ Ասէ կայսրն. ո՜վ սիրելի թա
գուհի իմ կատարեցից զխնդրուածս քո։

Եւ ապա յետ սակաւ աւուրց վաղճանեցաւ
Թագուհին. և արար կայսրն կոծ մեծ ի վե՛ր
Թագուհւոյն. և Թաղեաց զնա պատուով:
Յայնժամ Թագաւորն յետ կոծոյն սակաւ
տրտմիլ և մտաւ՛ ածել թէ զինչ արասցէ ընդ
միամօր որդւոյն իւր: Եւ հարցեալ իշխանա_
ցըն. Թէ զմիամօր որդին իմ զի՞նչ արարից որ
և յետ մահուան 'ի մոյ կառավարեսցէ զա_
Թոռն իմ: Ասեն նախարարքն և իշխանքն.
արքայ յաւիտեան կաց: Կան արտաքոյ քա
ղաքիս իմաստասէրք է. կոչեա զմինն ի նո
ցանէ. և տուր զորդին քո ի ձեռս նր. զի
իմաստնացուսցեն զնա: Յայնժամ հրամայ
եաց արքայն գրել հրով արտաք. զի եկեա
ցեն նք առ ինքն. որ և եկին իսկ: Եւ ար
քայն ողջունեաց զնս՛ սիրով. և մեծարեաց
զնս և պատուեաց: Եւ ասէ արքայն ցիմաս
տասէրսն. գիտէք սիրելիք իմ վս էր կոչե
ցի զձեզ. և նք ասեն ոչ գիտեմք: Ասէ ար
քայն. ունիմ որդեակ մի, որ միամօրէ ինձ.
և կամիմ զնա տալ ձեզ. զի իմաստութբ ձե
րով ուսանիցի զհանճար. որ և յետ մահու_
ան իմոյ կառավարեսցէ զաթոռ Թագաւո
րութե իմոյ: Ասէ առաջին դպրապետն ո_
րում անուննէր պանցիլիաս. արքայ յաւի
տեան կաց. տուր զորդին քո 'ի ձեռս իմ. և ես
ծառայեցից որդւոյ քո. և ուսուցից նմ զոր
ինչ ես՝ և ընկերքն իմ՝ գիտեն. մինչև է ամ:
Եւ ասէ երկրորդ դպրապետն. արքայ յա

ւիտեան կաց․ տուր զորդին քո ՚ի ձեռս իմ
և ես ծառայեցից որդւոյ քո․ և ուսուցից
նմ̃ զոր ինչ ես և ընկերքնիմ գիտեն․ մինչև
՚ի ժ̃ ամ․ և անուանի ծառայ քո չենթուլոս։
Նա յառաջ գայ երրորդ դպրապետն որ-
ում անուններ գարդոն․ խօսի և ասէ․ ար
քայ յաւիտեան կաց․ տուր զորդին քո ՚ի
ձեռսիմ և ես յօժարութ̃ ծառայեցից որ-
դւոյ քո․ և ուսուցից նմայ զոր ինչ ես՝ և ըն
կերքնիմ գիտեն․ մինչև ՚ի հինգ ամ։ Նա խօ
սի չորրորդ դպրապետն որում անուններ
մալխիօրախ․ և ասէ՝ արքայ յաւիտեան կաց․
տուր զորդին քո ՚ի ձեռսիմ․ և ես յօժար կա
մօք ծառայեցից որդւոյ քո․ և ուսուցից
նմա զոր ինչ ես՝ և ընկերքնիմ գիտեն․ մինչև
՚ի չորս ամ։ Նա յառաջեաց հինգերորդ
դպրապետն խօսի և ասէ․ յիշեա զիս տր̃․ զի
բազում ամ ծառայեալեմ հօր քո․ արդ
տուր զորդին քո ՚ի ձեռսիմ․ և ծառայեցից
որդւոյ քո և ուսուցից նմ̃ զոր ինչ ես՝ և ըն
կերքնիմ գիտեն, մինչև երեք ամ․ և անուա
նի քո ծառայն յովսէփ իմաստասէր։ Նա
գայ յառաջ վեցերորդ դպրապետն որում
անուններ կղէոպաս․ և խօսի ասելով ար
քայ յաւիտեան կաց․ ծառայեմ արքայիս
իմոյ․ արդ տուր զորդին քո ՚ի ձեռսիմ․ և
ես միամտութ̃ ծառայեցից որդւոյ քո և
ուսուցից նմ̃ զոր ինչ ես՝ և ընկերքիմ գիտեն․
մինչև երկու տարի։ Նա եօթներորդում
դպրապետն անուամբ յովակիմ․ ձայնեաց

առ արքայն և ասէ․ արքայ յաւիտեան կաց․
և ունկնդիր լեր ծառայիս․ զի ծառայ քո
եմ ես՝ և ընկերքն իմ․ արդ տուր վորդին քո
՚ի ձեռս իմ և ծառայեցից նմա ակամայ կամօք
և ուսուցից նմա զորինչ ես և ընկերքն իմ գի-
տեն․ մինչև ՚ի մէկ տարի։ Նա այսպէս եօթա-
ներքին իմաստասէրքն խոնարհութեամբ և հեզու-
թեամբ եւ ամօթխածութեամբ զայս ասացին արքա-
յին։ Նա ասէ արքայն․ շնորհակալեմ ձեզով
իմաստունք դպրոցք․ որ սիրով ընդունեցիք
զմխամօր որդեակն իմ․ եթէ տաց զորդին իմ
միոյ միայն՝ միւսքդ արհամարհեալ եղանէք
ատի արդ տաց զորդին իմ ձեզ ամենեցուն․
և զձեզ յանձն եմ այ․ որ խնամ տանիք որ-
դւոյն իմոյ կասկածանօք․ և հոգաբարձու-
թեամբ ուսուցանէք զիմաստասիրութիւն և զհան-
ճար․ մանաւանդ զաստղագիտութիւն և զամ
փիլիսոփայական արարողութիւն։ Օ այս ա-
սաց արքայն․ և առեալ զձեռանէ որդւոյն
և համբուրեաց․ և ետ ՚ի ձեռս դպրապետա-
ցըն և ասէ․ երթիջիք խաղաղութեամբ․ և տէր
եղիցի ընդ ձեզ։ Նա դպրապետքն խոնարհեալ
երկիրպագին արքային․ և առեալ զորդի
արքային զմանուկն դիոկղետիանոս․ և գնա-
ցին յօթևանս իւրեանց։ Նա դպրապետն
պանցիլիաս․ ետուր կազմել գեղեցիկ դար-
պասմ զարմանալի յօրինուածով արտաքոյ
քաղաքին․ և անդ եդին զորդի արքային։
Նա զդարպասի բոլորն․ և զառաստաղն․
թէ ի ներքուստ եթէ արտաքոյ դարպասին․

զամենեսեանն բովանդակ գրով լցին. զի
յելանելն և 'ի մտանելն որդին արքայի 'ի գե_
րըն հայլ. և ինքեանք հոգաբարձութ՟ կա
կածէին ուսուցանել զմանուկն մինչև յամ
մի։ Եւ ի լինել ամին. ասէ պանցիլիաս դպրա
պետն. թէ ո՞չ փորձեսցուք զաշակերտս մեր
թէ առեալէ ինչ իդպրութէս մերմէ, եթէ
ոչ։ Պատասխանի ետ դպրապետն գաթոն
և ասէ բարիէ զոր ասէքդ. յորժամ ննջես
ցէ՛ յայնժամ դիցուք իներքոյ չորեցունց
ոտիցն մահճին տերևս ծառոց. և մեք կաց
ցուք յանդիման նր մինչև զարթիցէ. և տե
սանեմք թէ զինչ խօսի մեզ մանուկն։ Եւ
դպրապետքն ամենեքեան ասացին այո այդ-
պէս արասցուք։ Եւ յորժամ ննջեաց որդի
արքային. յայնժամ եդին զծիւղս ծառոյն
իներքոյ ոտից մահճին. և ինքեանք կացին
յանդիման նր մինչև զարթեաւ մանուկն։
Եւ յորժամ զարթեաւ մանուկն, յարեաւ
և պշուցեալ հայէր ընդ առաստաղն՝ և ընդ
գետինն։ զոր տեսեալ դպրապետքն ասեն որ
դեակ ընդէր պըշուցեալ հայիս ընդ առաս
տաղն և ընդ գետինն։ Պատասխանի ետ որ
դի արքային և ասէ. վն այն հայիմ զի կամ
առաստաղ տաճարիս ցածացեալէ. և կամ
գետնին յատակն բարձրացեալէ։ Օ այն տե
սեալ դպրապետացն ասեն ցմիմեանս. եթէ
մնասցէ մանուկս կենդանի՛ լինի կատարեալ
իմաստասէր ո՞չ պղատոն. կամ ո՞չ արիստո



տել

տել: Եւ յայն ժամ ժողովեցան դպրապետ-
քն և եկին առ կայսրն և ասեն արքայ յաւի-
տեան կաց. երանի է քեզ և երանի է օր ծնն-
դեան մանկանն քո. որ այսպիսի սուր միտք
մանուկ չէ տեսեալ մեր. զի դեռ ամ մի է ջա-
նա որ զմեզ անցանի: և եթէ հասանի նա 'ի
չափ հասակի՝ ոչ նմանն լինի ի վ̄ր երկրի:
բայց լաւ է̂ր քեզ արքայ զի ունկնդիր լիցիս
մեզ զոր ինչ խօսելոցեմք առաջի արքայիս.
և մի բարկանայցես խօսից մերոց: Ասէ կայս-
րըն. վ̂նէր բարկանամ եթէ բարի լինի խօսք
ձեր: Ասեն դպիրքն լաւ է̂ր քեզ արքայ զի
ամուսնանայիր դու. և լինէր քեզ ի բազում
որդիք. որ յայսպիսի յիմաստս վարժէին
ո̄պ այս որդին քո դիոկղետիանոս: որ և յետ
մահուան քո մի մի տիրեսցեն աթոռոյ թա-
գաւորութե̄ քո: Հաւանեցաւ կայսրն և
ասէ՝ ելէք խնդիր և գտանէք գեղեցիկ աղ-
ջիկ մի. և ես առից զնա ի կնութե̄: Եւ գնա-
ցեալ շուրջ եկին 'ի բազում տեղիս. և գտին
զդուստրն մողոլոսի արքային գեղեցիկ յոյժ.
և բերին առ կայսրն. որ և հաճոյ թուեցաւ
աչաց կայսերն. և արարին հարսանիք. և եղև
ուրախութի̄ մեծ: Եւ եդ կայսրն ի գլուխն
թագ. և անուանեաց զնա թագուհի. և սի-
րեաց զնա յոյժ վ̄ս գեղեցկութե̄ նր: և պըճ-
նեաց զնա զարմանալի կերպիւ. և կացին բա-
զում ժամանակս. և ոչ եղև նմ̄ զաւակ. և
կինն խիստ տարակուսեալ էր վ̄ս ան զաւա-

 կու

կութ՟ն իւրոյ. կարծէր թէ յարքայէնն է։ Ու եա գտանել գտեղւո 'ի յարքայէն գեղեցիկ երիտասարդ մի. և բերեալ առ ինքն պր՟նեաց զնա կանացի զգեստիւ. և հանապազ շնայր ընդ ն՟մ. մի թէ զաւակ ծնանիմ ասելով. և այսպէս պահնկէր. և պահէր զնա 'ի սենեկի իւրում ո՟չ կոյս աղջիկ։ Յետոյ լուաւ թագուհին թէ ունի թագաւորն որդի մի միամօր. և տուեալէ զնա 'ի ձեռս իմաստասիրաց. ուսանիլ զիմաստութ՟ն և զհանճար։ Ու վաղվաղակի խորհեցաւ թագուհին իւր և ասէր. լինէր մեռանէր որդ՟ոյ կայսերն. և ես ծնանէի որդի որ լինէր ժառանգ. և այսպիսի խորամանկութ՟բ խորհէր օրըստօրէ. թէ որպիսի հնարիւք կարող լինիցի ըսպանանել զմանուկն։ և գտեալ ժամ զի աշչէսցէ արքայն բերել զմանուկն։

Խնդիրք թագուհւոյն ի կայսերէն զի մեռցէ զորդ՟ն.

Ու ի գիշերի միում մինչ դեռ ընկողմնայէր կայսրն ի վ՟ր մահճին իւրոյ. խօսեցաւ ը՟ն թագուհոյն և ասէ. սիրելի տիկինիմ արդ՝ զծածուկ խորհուրդ սրտի իմոյ ծանուցից քեզ. գիտեա զի ոչ գոյ այլ ստեղծուած ինե րքոյ երկնից որ սիրելի քեզ առաւել քան զիս։ Ասէ թագուհին. եթէ այնպէս սիրէ որ սիրես զիս. փոքրիկ խնդիրք մի ունիմ. արդ՝ խնդրեցից 'ի քէն. եթէ կատարես՝ երևի սիրոյ նշոյլն։ Ասէ կայսրն. զոր ինչ խնդրես՝ արարից վաղվաղակի։ Ասէ



թա

թագուհին․ տեսանես զի դեռ զաւակ ոչ ու-
նիմք որ մնին թարեսցէն զմեզ։ Արդ՝ յղեա՛ և
կոչեա՛ զորդին քո առ քեզ որ տուեալ ես 'ի
ձեռն իմաստասիրաց․ և ես տեսութ̃ նորին
ուրախացայց․ մինչև տր̃ ա̃ծն իմ պարգևես-
ցէ մեզ զաւակ։ Պատասխանի ետ կայսրն
և ասէ ով սիրելի թագուհի իմ․ է ամէ զոր
չեմ տեսեալ զորդին իմ․ վս̃ աղերսանացքոց
կատարեցից զխնդրուածս քո։ Եւ նոյն ժա-
մայն հրաման արար արքայն գրել հրովար-
տակ առ է իմաստասէրսն․ և կայսերական
կնքովն կնքեալ առաքեաց․ զի 'ի տօնի պէն-
տակոստէին բերցեն զորդին նր̃․ եթէ յա-
պաղեսցեն՝ մահու մեռանիցին։ Եւ յորժամ
հասին թղթատարքն առ իմաստասէրսն․
ետուն զհրովարտակն 'ի ձեռս նց̃․ և նք̃ ա-
ռեալ բացին և ընթերցան․ և վերահասու
եղեն կամաց արքային։ Եւ իգիշերին եղեալ
դպրապետքն հայեցան յաստղն․ եթէ ար-
քային հրամայեալ օրն տարցուք զորդին․ զինչ
լինիցի նմ̃։ Տեսան և ծանեան, որ թէ հրա-
մայեալ օրն տանիցեն՝ վնաս լինի մանկանն,
և թէ ոչ տանիցեն՝ իւրեանց վնաս լինի․ և
այսպէս արտմեալ և տարակուսեալ կային
յոյժ․ զի ոչ գիտէին թէ յոր կողմն դասէին
այլ լաւ համարէին իւրեանց մեռանիլն՝ քան
զորդւոյ արքային։ Եւ մանուկն տեսեալ
զվարժապետքն այնպէս տրտում և տխուր․
ըսկաւ և ինքն տրտմիլ և ասէ ը̃ միաս իւր․

թէ ինչ պատահեցաւ վարժապետաց իմոց
որ այսպէս տրտումէն․ և երկնչէր հարցա
նել։ և յետոյ վստահացեալ սկսաւ հարցա
նել զվարժապետսն իւր և ասէ․ ասացէք
ինձ զպատճառն յաղագս որոյ իրաց տրտմեալ
էք․ Ասեն դպրապետքն․ զքեզ խնդրեալէ
հայր քո․ և հրամայեալէ թէ ՚ի տօնի պէն
տակոստէի բերիցէք զորդինիմ․ և յորժամ
ընթերցաք զհրովարտակն հօր քո․ ՚ի նոյն գի
շերին գնացեալ հայեցաք աստղն․ և տեսաք
որ թէ հրամայեալ օրն տարցուք զքեզ առ
հայրն քո՝ նոյն ժամայն սրով մեռանիս դու․
վս այն տրտումեմք, և ոչ գիտեմք թէ զինչ
արասցուք։ Ասէ մանուկն․ ցուցէք ինձ զաստ
ղն զայն զի ես այլ տեսից զնա։ և յորժամ
ցուցին նմ զաստղն՝ հայեցաւ և ետես զայն
յայտնի․ զոր ինչ ասացին վարժապետքն
իւր։ Իսկ մինչ դեռ ապուշ մնացեալէր և
հայէր յաստղն․ ետես այլ փոքրիկ աստե-
ղունք շուրջ զնովաւ ով գիր գրեալ․ և ցու
ցանէր թէ՝ մինչև Է օր եթէ ոչ խօսեսցի
մնայ կենդանի։ բայց Է օրն Է անգամ տար
ցեն զնա սպանումն․ և բազում նեղութբ
ազատի։ Իբրև ետես մանուկն զաստղն զայն։
կոչեաց զվարժապետքն իւր և ասէ․ կարո
ղէք դուք այն Է օրն որ փրկէք զիս ՚ի ձեռաց
հօր իմոյ․ և եցոյց նմ զաստղն զայն։ Իսկ նայե
ցեալ վարժապետքն զաստղն որ ըստուգէ
խօսք մանկանն զոր ինչ և ասաց։ Իսկ ասեն

վարժապետքն․ օրհնեալէ ա՟ծ որ այսպիսի
շնորհս ետուր աշակերտին մերոյ․ որ կատա
րեալ բուն իմաստասէր եղեալ․ որ իմաստու
թե՟ իւրով և ողորմութե՟բն ա՟յ կարողացաւ
իմանալ զմահն իւր․ և ո՟տի ապրիլն։ Եւ ա
սեն վարժապետքն․ ա՟յ կարող զօրութե՟ն
ամենքս մէկ մէկ օր փրկեսցուք զքեզ չար
պատահմանէն որ գալոցէ իվ՟ր․քո։ Եւ ընկե-
ան պատրաստիլ և գնալ առ կայսրն․ և մա
նուկն ննջէր իմիջ օրէի 'ի վ՟ր մահճին իւ
րոյ։ Ետես երազին զի չորս արմատ ծառոյ
բուսեալ էր 'ի մահճի իւրում․ և 'ի նոցանէ
ելեալ է ճիւղ․ և իմիջի նոցա կինմի նման
վիշապի․ որ կազմէր 'ի ճիւղիցն մահադեղ
այնորիկ, որ ննջէր 'ի մահճին։ Զարթեաւ
որդին արքային 'ի քնոյն․ և պատմեաց վար
ժապետացն իւրոց․ և վարժապետքն գնա
ցեալ հայեցան յաստղն․ և իմացան թէ զինչ
էր երազն․ և եկեալ պատմեցին որդ՟ոյ ար
քային։ Եւ ասեն․ դ՟ արմատքն ծառոյն դ՟
տարերքնէ․ և կինն վիշապ յետնամայրնէ․
և է՟ ճիւղն է՟ օրնէ․ եթէ խօսեսցես այն է
օրն՝ մահու մեռանիցիս։ Յետ այսորիկ ելան
'ի ճանապարհ․ և եկին առ հայր արքայն։
Իբրև լուաւ զձայն իւրոյ որդ՟ոյն, կայսրն
փոնցիանոս․ ել ընդ առաջ ն՟ր թմբկօք, և
փողօք և զանզազան արուեստականօք, և
բազում զօրօք։ Եւ տեսեալ մանուկն զհայ
րըն իւր ասէ վարժապետացն․ ահա՛ գայ հայր

 նիմ

նիմ. և դուք պատրաստկացէք մի թէ փըր
կէք զիս յայնմ պատահմանէն որ գալոցնէ
իվ՛ր իմ. Մ՚սէն դպրապետքն. որպէս մի վա
խեր. ողորմութ՟ն ձ՟յ մեք պատրաստեմք՝ և
ոչ մոռանամք զքեզ։ այլ դու այսու հետև
ոչ ևս խօսեսցիս զի հասեալէ ժամ քո։ զայս
պատուէրս ետուն որդւո՛յ արքային։ Եւ
ահա գայր թագաւորն ծանր փառօք և բազ
մութ՟ հեծելեաց. և խոնարհեալ ետ ող
ջոյն վարժապետացն. և կալեալ զձեռանէ
որդւո՛յն իւրոյ. գիրկս արկեալ համբուրեաց
զնա. և ասէ որդեակիմ սիրելի. զի ա՛րդ կե
աս. քան զի բազում ժամանակէ որ չեմ տե
սեալ զքեզ։ Եւ որդին խոնարհեալ երկիր
եպագ հօրն, և ոչ ինչ խօսեցաւ։ Եւ կայսրն
տեսեալ զարմացա՛ւ ընդ միտս իւր և ասէ.
զի՞նչ ուսեալէ իվարժապետացն իւրոց
որ ոչ խօսեցի 'ի դէմ զօրացն։ Յորժամ
եկին 'ի դարպասն. առեալ թագաւորն զձե
ռանէ որդւո՛յ իւրոյ. և տարեալ նստոյց մերձ
առ իւր. և ասէ որդեակիմ ո՞վ հրահանգե
ցին զքեզ վարժապետքն քո. և զի՞նչ ուսար
'ի նոցանէ. և մանուկն խոնարհեալ երկիր
եպագ հօրն իւրոյ և ոչ խօսեցաւ։ սքանչա
ցա՛ւ կայսրն և ասէ. որդեակ ընդէ՞ր ոչ խօ
սիս ընդ իս։ Եւ թագուհին լուեալ զձայն
որդւո՛յ արքային, ուրախացա՛ւ յոյժ և ասէ
երթայց և տեսից զնա. և ընտրեաց կուսիցն
զգեղեցկատեսիլսն էառ ընդ իւր՝ և գնաց

առ նա։ Իսկ կայսրն տեսեալ զԹագուհին՝ նստոյց մերձ առ որդին իւր։ Իսկ հարցեալ Թագուհին զկայսրն և ասէ՝ այսէ որդին քո։ Ասէ կայսրն այո այսէ․ և ոչ գիտեմ զինչ եղև սմա որ ոչ խօսի ընդ իս։ Ասէ Թագուհին տուր ինձ հրաման․ և ես տարայց զնա ՚ի սենեակն իմ։ և խօսիմ ընդ նմա․ և խօսեցի ընդ իս։ Ասէ կայսրն․ առի կաց յատին որդեակ իմ և գնա ընդ մօր քո․ և մանուկն ելեալ երկրպագեաց հօրն․ և գնաց ընդ յետնամօրն․ Յետ տանելոյն զնա ՚ի սենեակն իւր հրամայեաց ամենեցուն ի բաց գնալ իւրմէն․ և առեալ զձեռանէ մանկանն նստոյց մերձ առ իւր ՚ի մահճի իւրում։ Խօսի և ասէ․ ով սիրելի իմ Դիոկղետիանոս․ լուեալ էի զհամբաւ գեղեցկութեան քո, որ տեսանելով տեսի և ծանեայ զգեղեցկութիւն քո․ և անձնիմ սիրեաց զքեզ․ ով սիրելի իմ Դիոկղետիանոս ուրախացիս ընդ իս․ և վ̃ն սիրոյ քո պահեցի զկուսութիւն իմ․ զի դու շատացեալ համդիցես ՚ի կուսութիւս իմ․ աղաչեմ զքեզ խօսեաց ընդ իս․ և տուր ինձ զոր ինչ և կամիս․ և ես կատարել պատրաստեմ զամ զկամս քո։ Իսկ զայս ասացեալ գիրկս արկեալ զմանկամբն․ և կամէր համբուրել զնա։ և մանուկն դարձուցեալ զերեսն իւր և ոչ ետ նմ համբուրել։ Ասէ Թագուհին ահա խեւացուցեր զիս ով սիրելի իմ Դիոկղետիանոս ե՛կ զի ննջեսցուք ընդ քեզ և ուրախ լինիցուք․

Իսկ մանուկն հայեր խոժոռ յերեսս թա
գուհւոյն։ Ասէ թագուհին. ո՞վ սիրելի
իմ դիտկիղետխանոս. եթէ պատկառես և ոչ
համարձակիս խօսելոյ ընդ իս. ահա կայ
թուղթ և թանաք. առ՝ և գրեա, և ծանոյ ինձ
զկամս քո. եթէ լիցի ինձ յոյս առ՚ի վայելել
զսէր քո։ Իսկ մանուկն առեալ զթուղթն
և գրեաց այսպէս։ ո՞վ թագուհի ոչ կամիմ
ես պղծել զտուննն և զանկողինն հօր իմոյ.
քան զի ոչ ինչ լինի ինձ շահ. այլ՝ չարաչար
մեղքէ առաջի այ. աղաչեմ զքեզ մի՛ բռնա
դատեր զիս. զի այդ գործդ որ դու կամես՚
ինձ զենէ և վնասակար. և ամօթ՚ի մարդկա
նէ. ոչ կարեմ գործել ես այդ գործդ. և
ետ զթուղթն՚ի թագուհին։ Յորժամ
էառ թագուհին զթուղթն՚ի ձեռանէ
մանկանն և ընթերցաւ. իսկոյն ճչեաց մե
ծաձայն. և պատառեաց զհանդերձս և
զբաճկոնն. և ըղընկամբն ճանկեաց զերես
սըն և եհան արիւն. և բացեալ զգլուխն փե
տեաց զհերսն. և սկսաւ աղաղակել և ասել
աղաչեմ զձեզ վն այ օգնեցէք ինձ. զի կամի
այս որդի արքային լլկել զիս չարեօք. ծա
նուցէք տն իմոյ գալառիս. և տեսանել զեղ
կելիս. և ծանուցին ծառայքն արքային։
Իսկ կայսրն եմուտ առ թագուհին և ասէ. ո՞վ
սիրելի տիկինիմ զի՞նչ գործես. ընդէ՞ր այդ
պէս ճչես և լաս. ի՞նչ պատահեցաւ քեզ։
Ասէ թագուհին. տէրիմ արքայ ողորմեա

ինձ• զի սա՛ չէ որդի տեառնս իմոյ արքայիս•
այլ սա՛ չարէ և անզգամ• և բարուք չնացող:
ձորժամ բերի զդա՛ իներքս՝ և ջանայի խրա
տեցուցանել• յանկարծակի սկսաւ ձեռն
արկանել 'ի յիս• և կամէր ընդ իս մեղանչել:
Իսկ իբրև ես ոչ կամէի՝ պատառեաց զհան
դերձսիմ• և արիւնեաց զերեսսիմ• և այս
պէս խայտառակեաց զիս զոր տեսանէ տէր
նիմ արքայ: Իսկ տեսեալ կայսրն զերեսս Թա
գուհւոյն արիւնաթաթախ• և հանդերձն
պատառեալ՝ հաւատաց• և բարկացեալ ասէ.
տարէք կախեցէք որ ոչ տեսանէ աչօքիմ այդ
պիսի անառակ որդին: Իսկ լուեալ նախա
րարացն գան առ կայսրն և ասեն• արքայ յա
ւիտեան կաց• որդին քո միամօրէ քեզ• և ոչ
ունիս այլ որդի որ ժառանգ լինիցի քեզ:
չէ արժան որ առանց քննութեն սպանցես
զորդին քո վն փոքր ինչ բանի• զի որդին քո
ոչ խօսի• ոչ գիտես տէրիմ թէ արժանէ
մահու թէ ոչ: Այլ պարտէ արգելուլ զնա
'ի բանտ մինչև իմաղեան օրն• և առասցես
դատաստան• եթէ գտանիցի մահու ինչ
արժանի՝ մեռցի• զի մի ասասցեն ժողո
վուրդքն թէ կայսրն սպանեալ առանց
իրաւանց և առանց դատաստանի հրամայ
եաց սպանանել զմիամօր որդին իւր: Իսկ
իբրև լուաւ կայսրն զայս 'ի նախարարացն
իւրոց չիջաւ սաստկա՛նկմն բարկութն նր
և ասէ• տարէք արգելէցէք 'ի բանտն մինչև



ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՌ - Арм. ССР
28782-63

խլաղեան օրն․ զի լինիցի դատաստան և
իրաւամբք մեռցի։ Ուրև լուաւ Թագու
հին թէ ոչ ըսպանաւ որդի արքային․
սկսաւ ճչել և լալ, և վայ տայր անձինն․
և այնպիսի ահագին ճչէր որ լսելի եղև
ամենեցուն․ և ծանուցին կայսերն։ Յայն
ժամ ելեալ կայսրն 'ի գահոյիցն իւր․ և
եմուտ առ Թագուհին․ և տեսանէր զի
յոյժ անմխիթար լայր։ Ասէ կայսրն․ ով
սիրելի տիկինիմ զի՞նչ եղև քեզ, որ այդ
պէս անմխիթար լաս։ Եւ Թագուհին
անկեալ առ ոտս արքային և ասէ․ մի թէ
ոչ գիտես զինչ արար նզովեալ որդին քո․
որպ̃ կամէր բռնադատել և լլկել զիս ոպ̃
դու տ̃րդ իմ տեսեր․ և ասացեր թէ կոր
ուսից ըզ նա դառն մահուամբ․ և նա
դեռ ևս՝ կենդանի է։ Ասէ կայսրն․ վ̃ն
այն արգելեցի զնա և ձգեցի 'ի վաղիւն․
զի կամիմ քննութ̃ի առնել առաջի նա
խարարաց իմոց․ և թէ գտանիցեմ 'ի նմա
մ̃ղս ինչ մահու, յայնժամ հրամայեմ
չարաչար սպանանել զնա։ Ասէ Թագու
հին․ եթէ որդին քո մնասցէ կենդանի՝
յայնժամ եղիցի քեզ․ ո̃պ եղև ծառի միոյ
բարետունի 'ի մոլեալ արմատոյ նորին։
Ասէ՝ կայսրն․ պատմեա ինձ զառակդ
զայդ։ Ասէ Թագուհին․ պատմեմ քեզ
զառակս զայս․ բայց լուր 'ի միտ առ․ և
սկսաւ ասել։

Առակ տասնըէրն ընձղամնայն. որ հաստատեցոյց զեւ
նոյսոն սպանանել զորեէն.

Այր 'ի քաղաքի միում այր մի. և ունէր
գեղեցիկ դրախտ մի. և էր ի մէջ դրախ
տին ծառ մի եր և ելի. յոր յամ յամէ
տայր զպտուղս յոլովս և պտուղ նորա
այնպիսի զօրութիւն ունէր՝ որ ամ̃ ցաւոց դեղ
լինէր՝ բայց 'ի հոգւոց։ Այս եղև յաւուր մի
ում եկն տ̃ր այգւոյն 'ի պարտէզ իւր. և նայ
եցեալ ի վ̃ր ծառին՝ ետես ահա փոքր ձիւղ
մի ելեալէր ընդ արմատն. և կոչեալ զայ
գեգործն և ասէ. դարման տար ձղոյս այ
սորիկ. զի յուսամ՝ 'ի սմանէ առաւել առ
նուլ պտուղ՝ քան 'ի ծառոյն մեծէ։ Այս յետ
աւուրց դարձեալ եկն տ̃ր այգւոյն ի պար
տէզ իւր. և նայեցեալ ետես զծառին ձիւ
ղն որ ոչէր աճեալ. կոչեաց զայգեգործն
և ասէ. վ̃ն էր ոչ աճէ ձիւղս այս ո՞վ այգէ
գործ։ Պատասխանի ետ այգեգործն և ա
սէ. ծառս մեծ և բարձրէ յոյժ. որ ոչ թո
ղու ծագել արև ի վ̃ր սորա. վ̃ն այն ոչ աճի.
Ասէ տ̃ր այգւոյն. հարթեա զձիւղսն ծա
ռոյն. զի ծագեսցի արևն ի վ̃ր ն̃ր. զայս աս
ցեալ և գնաց. և արար այգեգործն այնպէս.
Այս դարձեալ եկն տ̃ր այգւոյն, և նայեցեալ
ետես զի այժմ ևս ոչէր աճեալ ձիւղն. կո
չեաց զայգեգործն և ասէ. ընդէր և այժմ ոչ
աճէ ը̃ս կամաց իմոց։ Ասէ այգեգործն՝ ոչէ
զարմանք որ ոչ աճի. զի բարձրութիւն ծա
ռոյս ոչ թողու գալ անձրև ի վ̃ր ն̃ր, վ̃ն այն

ոչ ածի։ Ասէ տէր այգւոյն. հատ զծառն
մեծ. զի լաւէ ձիւղն քան ըզ ծառն մեծ.
զայս ասաց և գնաց։ և այգէգործն եհատ
զծառն՝ և նոյն ժամայն չորացաւ և ձիւղն։
Իսկ աւուրց ինչ դարձեալ եկն տէր այգւոյն
'ի պարտէզըն իւր. և տեսեալ չորացեալ
զծառն ձիւղովն ապուշ մնաց. քանզի զօ
րութիւն որ 'ի ծառոյնէր. յորժամ հատին
զծառն՝ չորացաւ և ձիւղն։ Իսկ ասէ թա
գուհին լուար արքայ. զբան ծառոյն. զոր
ան իմաստ խորհրդով 'ի զուր չորացաւ ծա
ռըն. որ և աղքատք և ցաւագարք նզովեցին
զչորացնողն ծառոյն։ Ասէ արքայն յո՞ւմ
նմանեցուցեր զծառն զայն։ Ասէ թագու
հին արդ ծա՛ռն մեծ և երևելի դու ես. թէ
կոյրք թէ ցաւագարք ամենեքեան 'ի տիրու
թիւն քո խնդան. և ա̃մ աղքատք և տնանկք
խրատով քո ապրին. և որդին քո Ջանա՛ հար
թել զձիւղդ քո այսինքն զզօրութիւն քո. և
յետոյ խափանէ զքեզ. որպ̃ այգէգործն զծա
ռն. և թագաւորեսցէ իտեղի քո. և ոչ կարէ
թագաւորել. որպ̃ ձիւղն որ չորացաւ ը̃ ծա
ռոյն։ այլ խափանի թագաւորութիւն քո.
և դու ընդունիս յանէծս աղքատաց և
տնանկաց. զի խոստացար ըսպանանել զնա՛
և ոչ սպաներ։ Ասէ կայսրն. լաւ առակ ա
սացեր. զի ոչ կարէ որդինիմ այնպէս անել
որպ̃ այգէգործն զծառն զայն. զի ընդ լու
սնալ առաւօտուն՝ առանց քննութե̃ և ա

ւանց դատաստանի տամ սպանանել։ Ո՞չ է
թագուհին թէ սպանանես՝ 'ի հանդիստ լի
նիցիս. և խաղաղութ՟ն վայելեսցես զթա
գաւորութիւնն քո։

Մ[illegible] է մահ.
և [illegible]

Յ վաղիւ անդր նստեալ կայսրն 'ի գա
հոյսն իւր. և հրամայեաց դահճապե
տին իսկոյն առ ժամայն տանել զոր
դին իւր իտեղի սպանման. փողով ազ
դեցութ՟բ։ Իսկ հանեալ դահճապետն զոր
դի արքային 'իբանտէն. կապեաց զձեռսն
'ի յետս. ո՟պ օրէնէ մահապարտաց. և ետ ձայ
նել առաջին ն՟ր մունետիկս ասելով. թէ ով
ոք կամի մեղանչել ընդ յետնամօրն՝ այսպի
մահուամբ մեռցի։ Իսկ լուեալ ժողովրդո
ցըն ողբալով մեծաձայն աղաղակէին և ասէ
ին. ա՜աղ աւաղ և ո՜վ վախ զմիամօր որդի
կայսերըն որ տանին 'ի զուր սպանումն։ Յայն
ժամ պանցիլիաս դպրապետն սրընթաց երե
վարօք եհաս ն՟ց և ասէ. մի ըշտապիք սպա
նանել զդա. զի յոյս ունիմ առ ա՟ծ որ եր
թամ առ կայսրն և ազատեմ զդա։ Իսկ ժո
ղովուրդքն փութացուցանէին զդպրապե
տն և ասէին. մեք արգելցուք զդահիճսն՝
այլ դու փութա փրկել զմանուկն զի մի ի
զուր մեռանիցի։ Իսկ մանուկն այլ խոնար
հեցոյց զգլուխն վարժապետին իւրոյ. ի՞բր

 թէ

թէ կամի ասել, յիշեա՛ զիս առաջի հօր իմոյ։
Եւ դպրապետն գնաց 'ի պալատն և եմուտ
առ կայսրն. և ողջունեաց մեծաւ պատուով
Եւ կայսր բարկութբ̄ ասէ. ո՞վ չար ծեր՝ ոչ
լինիցիս դու ողջ։ Ասէ դպրապետն. տ̄ր՛ ող-
ջութեն ծառայեցի՝ և ոչ մահու։ Ասէ կայ-
սրն. սուտ է ա̄մ խօսք քո. ետու զորդին իմ
'ի ձեզ լեզուաւ և խօսուն ուսուցանել և
դաստիարակել. և արդ եղև պապանձեալ
փոխանակ իմաստութե̄ և հանճարոյ. և յա-
ւել չարիս ևս զայս. զի կամեցաւ բռնա-
դատել և լլկել զտիկինն իմ. վ̄ն այն գործոյ
ահա մեռանի այսօր. և զձեզ իսկ կորուսից
դառն մահուամբ։ Ասէ դպրապետն. պա-
պանձումն որդւոյ քո յինէնջ ոչէ. զի ընդ-
մեզ խօսէր ուղիղ. ա̄ծ է գիտող թէ վ̄ն է՞ր
լռեալ կայ։ և որ ասացեր թէ կամի բռնադա-
տել զտիկինն. Ճշմարիտ ասեմ քեզ արքայ զի
սուտ է բանդ այդ. զի գիտեմ զնա՛ որ այդ-
պիսի իրս ոչ գործէ նա։ Եւ թէ վ̄ն բանի
կնոջ քո սպանցես զմիամօր որդին քո՝ դառ-
նագոյն լիցի քեզ քան զայն որ եղև զինուո-
րն միոյ. որ վ̄ն բանի կնոջ իւրոյ սպան զշուն
իւր. որ ապրեցուցեալ էր զորդին իւր 'ի մա-
հուանէ։ Ասէ կայսրն. ասա՛ զառակդ զայդ։
Ասէ դպրապետն. ոչ ասեմ և ոչ աշխա-
տիմ. զի մինչ ես պատմեցից՝ գուցէ սպան-
ցես զորդին քո անդ. և զինչ շահ լինիցի 'ի
պատմութենէս։ Եթէ կամիս զի պատմեցից

զատուակս նախ դարձոյ զորդ֊ին քո 'ի մահուա
նէ եւ ած 'ի բանտէ. Եւ յորժամ լուիցես յինէն
զատուակն իմ. եթէ հաճոյ լինիցի առուակս տ̄նդ֊
իմոյ՝ ապրեցոյ զորդ֊ին քո. եւ թէ ոչ՝ սպան զնա։
Եւ հրամայեաց կայսրն դարձուցանել զմա
նուկն 'ի բանտ. մինչեւ պատմեսցէ դպրա
պետն զատուակն։ Եւ սկսաւ ասել այսպէս.

Բանն առաջին փիլիսոփային պատմելեաց. զոր
ասաց ձայնելոյն եւ փրկելոյ զմանուկն ազատելոյ.

Այր զինուորմի զօրաւոր եւ անուանի
յոյժ. եւ ունէր որդեակմի փոքր տղայ.
եւ միամօրէր որպէս որդ֊ին քո. եւ յոյժ
սիրէր զնա. եւ երեք նաժիշտք ծառայէ
ին նմա։ Առաջինն դիեցուցանէր եւ կերա
կրէր։ Երկրորդն լուանայր եւ զգեցուցանէր։
Երրորդն օրօրէր եւ քնեցուցանէր. Արդ՝
զինուորն այն ունէր այլ եւս շահին մի, եւ շուն
մի, եւ սիրէր զնա։ եւ շունն այն այնպիսի լաւու
թի ունէր՝ որ զինչ եւ տեսանէր վայրի. ըն
թանայր զկնի նր. եւ ոչ դառնայր դատարկ՝
մինչեւ ըմբռնէր։ Եւ յորժամ ըմբռնէր՝
կանգնէր 'ի վ̄ր տոռանն. եւ հայէր մինչեւ ե
կեալ տ̄րն առնոյր զորսն 'ի նմանէ։ Այլ եւ
շունն այն ունէր բընութի զայս ինչ. իմա
նայր զլինելոցն. յորժամ կամենայր տ̄րն ու
րեք երթալ. եթէ բարի էր ճանապարհն
այն՝ գայր շունն եւ երիցս խաղայր առաջի
նր. եւ եթէ չար լինար ճանապարհն՝ ոչ գայր

 եւ ոչ

և ոչ խաղայր. այլ տրտում և տխուր հայ
էր. և տէրն այնու ճանաչէր զչարն և զբարին:
Եւ բազում այն ունէր սովորութիւն այսպէս
զի յորժամ յորս ելանէր տէրն իւր. ամենև
ին դատարկ ոչ դառնայր. այլ հանապազ
թռուցեալ ըմբռնէր զթռչունս և բերէր
առ տէրն իւր և սիրէր զնա: Եւ յաւուր մի_
ում կոչեցեալ եղև ՚ի խաղս առ զինուորն
կնոջն իւր. և բազումք ժողովեցան ՚ի խաղ
ըն այն. և գնաց զինուորն, և տիկինն ընդ նմ:
և աղախնայքն և՛ս. և մնաց տղայն միայն ՚ի
յօրօրոցին: Եւ շունն պահէր զտղայն. և
ննջէր շունն ընդ յորմով օրոցացն. և բա
զէն նստէր իվ՟ր ձողին: Եւ տանն որմն պա
տառեալ էր. և էր օձմի իներքոյ որմին. և
տեսեալ օձն որ ձայն մարդոյ ոչ ելանէր.
և լսէր զձայն շնչոյ ելանելոյ տղային ՚ի յօրո
ցացն. և հանեալ զգլուխն ՚ի ծակէն դուրս
և ետես և ահա՛ ոչոքէր ՚ի տանն. բայց միայն
տղին շնչոյ ձայնն գայր. որ ննջէր իմէջ օրո
ցին: և ելեալ օձն գայր ընդ օրոց.ք տղային
զի սպանցէ զնա: Տեսեալ բազային որ ելաւ
օձն ՚ի ծակէն դուրս. և նայէր շանն, և ե_
տես զի շունններ խոր ՚ի քուն: Եւ թռու
ցեալ բազայն որ և ՚ի ձայնէ թևոյն՝ զար
թեաւ շունն: և իբրև եբաց շունն զաչսն,
ետես զօձն իվ՟ր օրոցացն. և բարկացեալ
շունն անկաւ իվ՟ր օձուն. և օձն պատա
ռեցաւ ընդ շանն. օձն ջանայր սպանանել

 զտղայն

զտղայն. և շունն ջանայր սատակել զօձն։
և այն չափ կռուեցան ընդ իրեարս և վէրս
եառուն միմեանց՝ որք արիւնաթաթաւալք ե-
ղեն շուրջ զօրանօքն։ Իսկ սրտմտեալ շունն
յարեաւ ի վերայ օձուն. և 'ի պատերազմելն
ընդ միմեանս կործանեցաւ օրօցքն տղայինն.
և մնաց ոչ եղև տղայինն։ և շունն այնչափ ջա
նաց՝ մինչև սատակեաց զօձն. և նստեր ընդ
պարսպօքն օրանին. և լիզէր զվէրս իւր։
Յետ այնորիկ վաղվաղակի վճարեցաւ խա-
ղըն. և եկին նաժիշտքն 'ի տուն յառաջ քան
զտիկինն. և տեսին զօրօցքն կործանեալ.
և շուրջ զօրօցօքն լի՛ արիւն. կարծեցին թէ
շունն զտղայն կերեալ է. և անմիտ կանայքն
ոչ կանգնեցուցին զօրանն տեսանէին թէ
տղայն կայ՝ թէ ոչ։ Իսկ ասեն ընդ միմեանս՝
եկայք փախիցուք. ապա՛ թէ ոչ սպանանէ
զմեզ տէրն մեր փոխանակ տղայինն. և իբրև
փախչէին՝ պատահեցան տիկնոջն իւրեանց։
Ասէ ցնոսա տիկինն. զի՞ է զինչ եղև ձեզ։ Ասեն
նաժիշտքն. զսիրելի որդին տեառն մերոյ՝ կե-
րեալ է շունն. արդ՝ վա՛յ մեզ թէ զի՞նչ լի-
նիցիմք։ Իսկ լուեալ տիկնոջն անկաւ եր
կիր ի վ̅ր երեսաց իւրոց առ դրան սենեկին.
լա՛յր և կոծէր զանձն ասելով. ո՞հ թէ զինչ
արարից ընդ որդեակս 'իմոյ։ Իսկ նոյն ժա
մայն եկեալ զինուորն ետես զկինն իւր զի
լայր աղիողորմ. և նաժիշտքն ընդ նմ. և հար
ցեալ զինէ ձեզ՝ ընդ է՞ր լայք։ Ասէ տիկինն.

 վայե

վայե՛լ մեզ. զի շունն որ սիրեիր՝ կերեալ է ըզ
միամօր որդեակն քո։ Յորժամ լուաւ զխօսս
՚ի տիկնոջէն իւրմէ՝ եմուտ ՚ի սենեակն ուր
էր տղայն. և շունն իբրև ետես զտէր իւր՝
յարեաւ ընդ յառաջ նորա և փաթաթեր
զերեսն ընդ յոտս նր. և ուրախանայր առա
ջի տն իւրոյ. իբր թէ ըսպանի զօձն, և ա
պրեցուցի ըզ տղայն քո. արդ՝ արժանիցէ
պարգևաց։ Եւ տր նր հանեալ զսուրն.
էզարկ և կտրեաց ընդ մէջ. և սատակեցաւ
շունն. և գնացեալ ՚ի յօրօցքն տղային՝ և ե
տես զտղայն զի կենդանի էր և ան վնաս։
Եւ ետես մերձ ՚ի յօրօցքն օձ մի սատակեալ.
և եկեալ առ շունն, նայեցեալ ետես զի էր
վիրաւորեալ յոյժ. և ծանեաւ զի շունն
զօձն էր սպանեալ. և զտղայն ապրեցուցեալ.
Եւ տեսեալ բազային որ այնպիսի անիրաւ
ութիւն գործեաց տրն իւր. նոյն ժամայն
ճչեաց և կտրեաց զպարանն ՚ի յոտիցն. և թռ
եաւ գնաց և այլ ոչ եկն առ տրն իւր։ Եւ
ասէ զինուորն. ահա թէ զի՞նչ գործեցի
լսելով կնոջ իմոյ. և անկայ ՚ի մեղս մեծամե
ծս։ Եւ ելեալ բոլոր ստամբ գնաց յանապատ
և անդ ապաշխարեաց զմն ամուրս կենաց
իւրոց։ Եւ ասէ դպրապետն ցկայսրն. լու
ար արքայ զոր ինչ ասացի քեզ։ Ասէ կայսրն.
լուայ և ՚ի միտ առի. և յոյժ հաճոյ եղև ինձ
բան քո։ Ասէ դպրապետն. Ճշմարիտ ասեմ
քեզ արքայ. եթէ վն բանի կնոջ քո սպան

 ցես

ցես զորդին քո․ դառնագոյն լիցի քեզ
բանն՝ քն որ եղև նմ։ Ասէ կայսրն․ լաւ՞ առակ
ասացեր․ և վ(աս)ն քո բանիդ՝ ոչ սպանից զորդի
նիմ այսօր։ Ասէ դպրապետն եթէ ոչ սպան
ցես՝ շնորհակալեմ ես քեզ․ որ վ(աս)ն բանից ի
մոց կեանս շնորհեցեր այսօր որդւո՞յ քում․
և երկրպագեալ արքային և գնաց։ Իբրև
լուաւ Թագուհին թէ մանուկն դեռևս
կենդանի է․ նստաւ ի խլ(ի)ր մոխրոյ․ լայր լա
լիւն մեծ՝ և ոչ կամէր ՚ի վեր նայել․ և ծա
ռայքն ծանուցին կայսերն։ Եւ լուեալ
կայսրն գնաց առ Թագուհին և ասէ․ զմէ՞
այդպէս տրտումես՝ և ան մխիթար լա՛ս։
Ասէ Թագուհին․ մի թէ ոչ գիտես դու․
թէ ո՞րպի ամօթ և նախատինք արար ինձ նզո
վեալ որդին քո․ և դու խոստացար սպա
նանել զնա, ահա՛ դեռևս կենդանի է։ Ոչ
մարխտ ասեմ քեզ․ զի լինելոցէ քեզ․ ՚ի յոր
դւո՞յ քումմէ՝ ո՞րպ եղև հովլեան միում ընդ
վարազի խոզոյ։ Ասէ կայսրն․ աղաչեմ զքեզ
տէր սիրելի տիկինիմ․ պատմեա՛ ինձ զա
ռակդ զայդ։ Ասէ Թագուհին․ զինչ շա
հէ ինձ պատմելովիմ․ յերեկեան օրն պատ
մեցի քեզ առակմի՝ և ոչ ինչ շահեցայ․
Արդ՝ պատմեցից քեզ առակմի՝ եթէ ՚ի
միտ առցես բազում շահս օգտիս․ և
ասաց այսպէս․

Առակ երկրորդ զոր տայ Բոդոսահէն. վս հովուին և վս մարդոյ խոզէն. զոր հարստնեալ նոյորն յօծարէն.

Թագաւոր մի էր յերկրի միում. և ունէր անտառ մի մեծ մայրեաց. և կային ՚ի նմա՛ ծառք բազում լի՛ պտղօք. և կայր ՚ի մէջ անտառին վարազի խոզմի զօրեղ յոյժ. և շրջէր ՚ի մէջ անտառին. ուտէր զպտուղն ծառոց. և ոչոք կարէր գնալ ՚ի յանտառն այն կոտրել փայտ. այլ և զգնացեալսն ՚ի վե՛ր իւր խոզն, խողխողէր և կորուսանէր. մինչև Թագաւորն ձանձրացեալ ՚ի նմանէ՝ հրամայեաց քարոզ կարդալ ընդ ա՛մ Թագաւորութիւն իւր և ասել. եթէ ոք սպանցէ զխոզըն զայն՝ տաց նմ՛ զդուստրն իմ ՚ի կնութիւն. և յետ մահուան իմոյ ժառանգեսցէ զաթոռ Թագաւորութեն իմոյ. Եւ ոչոք էառ յանձն, զի երկնչէին ՚ի զօրեղութէ խոզին։ Եւ էր ՚ի ժամանակին այն մին հովիւ մի ոչ խարաց. խորհեցաւ ընդ միտս իւր և ասէ. եթէ սպանանիցեմ զխոզն զայն ես՝ ոչ միայն լինէր ինձ բարի. այլ և ա՛մ սերելեաց և բարեկամաց իմոց։ Նախ և յառաջ գնացից առ Թագաւորն և տեսից թէ եթէ սպանանիցեմ ես զխոզն՝ տայ ինձ զդուստրն իւր։ Եւ գնացեալ հովիւն եմուտ առ Թագաւորն և ասաց. Հզօր և մեծ Թագաւոր. եթէ սպանանեմ զխոզն զայն, տաս ինձ զխոստացեալդ. Եւ Թագաւորն երդուաւ և ասէ.

ով Հովիւ՝ եթէ կորուսանես զխոզն զայն·
ոչ թէ միայն տամ զդուստր իմ. այլ և զթա
գաւորութիւս իմ և ս տամ քեզ՝ որ յետ մա
հուան իմոյ դու թագաւորես 'ի տեղի
իմ. Յայնժամ ելեալ հովիւն յերեսաց ար
քային· և եառ զգաւազանն 'ի ձեռս իւր·
և ելեալ գնաց յանտառն այն ուրէր խոզն։
և տեսեալ զնա խոզն վազեաց ի վ՟ր ն՟ր· և հո
վիւն փախեաւ և ել 'ի ծառ մի· և եկեալ խո
զըն սկսաւ ատամամբն փորել զտակ ծա_
ռին, և կամէր կործանել զծառն։ Իսկ ե_
տես հովիւն զի անկանի ծառն· և կայր 'ի
ծառն քաղցրահամ պտուղ՝ հատանէր և
արկանէր ն՟մ. և խոզն տեսեալ զպտուղն՝
եթող զծառն և ուտէր զպտուղն, մինչև
հանգեաւ և ընկողմնեցաւ առ ծառովն։
Իսկ տեսեալ հովիւն ընկողմնեալ զխոզն՝
մեղմաբար էջ առ նա· և մին ձեռամբն զքու
ռն հարեալ էր 'ի ծառոյն· և միւսովն քերէր
զթիկունս խոզին· զի թէ կամեսցի խոզն
հարկանել զնա· փախիցէ դարձեալ 'ի ծա
ռն։ Իսկ այն չափ քերեաց՝ մինչև ննջեաց
խոզն՝ և եղև խոր 'ի քուն։ Յայնժամ եհան
հովիւն զսուրն իւր և ըսպան զխոզն։ Իսկ
այնու գործովն եառ զդուստր թագաւո
րին· և յետ մահուան ն՟ր ժառանգեաց զա
թոռ նորա։ Իսկ ասէ թագուհին ցկայսրն
Լուար արքայ և 'ի միտ առեր։ Ասէ կայսրն·
այո՛ 'ի միտ առի զոր ինչ ասացեր։ Ասէ թա
գուհին· մեկնեցից քեզ զառակս· վարազոյն


վայրե

վայրենացեալ՝ զօրհնութիւն յոյժ՝ ցուցանէ
զզօրութիւն քո. որ ոչ ոք կարէ կալ հակա
ռակ հրամանաց քոց։ Եւ հովիւն ցուցա
նէ զնզովեալ որդին քո. որ դաւաճանաւ
իմաստութեան իւրոյ դիմեալ է ի վր քո։ Ով հո
վիւն այն քերելով զթիկունս խոզին ննջե
ցոյց և սպան զնա։ Նմանապէս վարժապետ
քըն նզովեալ որդւոյ քո՝ քերեն զքեզ քաղ
ցըր բանն աւակօք և ստօք՝ իւրեանց մինչև
սպանցեն զքեզ. և որդին քո թագաւորա
ցուցանել կամին ՚ի տեղի քո։ Բայց կայսրն.
ոչ տացէ մահ զայն օրն որ ըսպանէ զիս որ-
դին իմ. ով հովիւն զխոզն։ արդ՝ ահաւասիկ
ոչ միայն նա կենդանի. և վս սրտի քո տամ
չարաչար սպանանել զնա։ Բայց թագուհին՝
եթէ սպանանես՝ մեծ լաւութիւն հանդիպի
քեզ. զի նա չէ արժանի որ միայն կենդանի.
այլ պատժոյ և պատուհասի արժանի է։

Երկրորդ [illegible]
[illegible]. և [illegible].

Ի երկրորդում աւուրն նստեալ կայսրն
՚ի գահոյսն իւր։ և կոչեաց բարկութեամբ
զդահճապետն և ասէ. երթ հան զոր-
դին իմ ՚ի բանտէն. և տար առժամայն
հատ զգլուխ նր. և հեռացոյ զգլուխն ՚ի
մարմնոյ նր. ժ. կանգուն։ Եւ եկեալ դահ
ճապետն եհան զորդի արքային ՚ի բանտէն.
և կապեաց զձեռս ՚ի յետս նր իբրև մահա

պարտի. և անցոյց ընդ մէջ քաղաքին. և մու
նետին առաջի ն՟ր ձայնէր և ասէր. Ամ֊ք
որ կամի մեղանչել ընդ յետնամօրն իւրոյ՝
այսպիսի մահուամբ մեռցի: Իսկ լուեալ
ժողովրդոցն ափսոսալով ասէին. ո՜հ ո՜հ
ահա՛ 'ի զուր տանին զմիամօր որդի արքայ
ին 'ի մահ և յըսպանումն: Յայնժամ չենթու
լոս դպրապետն սրընթաց երիվարաւ եհաս
ն՟ց և ասէ. մի շտապիք սպանանել զդ՟ա. քան
զի յոյս ունիմ առ ա՟ծ որ փրկեցից զդա այ
սօր 'ի մահուանէ. և սաստեաց դահճապե
տին և ասէ. ընդէր կապեցեր ըզ ձեռս դո
րա՛ մի թէ մահապարտէ որդի արքային. և
ետ արձակել զձեռսն: Ասէ դահճապետն.
ո՜վ դպրապետ՝ հրաման սաստիկէ թագաւ
որին թէ չարաչար սպան զնա. արդ եթէ
կարողես փրկել զդա՛ երթ առ կայսրն. և ես
ասա արգելից զսա. եթէ կարողես ազատեա՛
'ի մահուանէ: Իսկ մանուկն ո՟չ առաջնոյն
աղաչէր զվարժապետն իւր փրկել զինքն 'ի
մահուանէ: Իսկ ժողովուրդքն առաւել
փութացուցանէին զդպրապետն և ասէին:
Ո՜վ բարի դպրապետ. յերէկեան օրն ըն
կերն քո ազատեաց. այսօր դու երթ առ
կայսրն և ազատեա՛: Իսկ դպրապետն ընթա
ցեալ եմուտ 'ի պալատն. և եկաց առաջի
կայսերն, երկրպագեաց և ողջունեաց զնա
մեծաւ պատուով: Ասէ կայսրն. ո՜վ չար
ծեր մի մնասցես կենդանի: Ասէ դպրապ՟ն.

 տէր

տէր պարգևս առնուլ իւքէն ակն ունէի
և ոչ անարգանս։ Ասէ կայսրն. սուտ է ամ̅
բանք քո. ետու զորդինիմ ՚ի ձեզ լեզուա՛
և խօսուն. ուսուցանել և դաստիարակել
զնա։ և արդ եղև պապանձեալ փոխանակ
իմաստութե և հանճարոյ։ յաւելել ևս զչա-
րիս զայս. զի կամեցաւ բռնադատել և լռե-
կել զկիննիմ. վս̅ որոյ այն պատճառի մեռանի
նա այսօր. և զձեզ իսկ զամենեսեան կորու-
սից դառն մահուամբ։ Ասէ դպրապետն.
տէր արքայ՝ ասացեր թէ որդիմ պապան-
ձեալ եղև. և թէ վս̅ էր եղև. ա̅ծ է որ գի-
տէ. բայց խօսեսցէ ա̅ծ ՚ի ժամանակի իւ-
րում։ Իսկ որ ասացեր թէ կամեցաւ բռնա-
դատել զկինիմ, այդ՝ ամ̅իւ սուտ է. Քան
զի կինքո եթէ կրեալ լինէր զնա·թ̅· ամսիւ
յորովայնի իւրում, այդպիսի վնաս ոչ դնէր
ի վ̅ր̅ն̅ր̅։ Արդ զայս ասեմ քեզ արքայ. եթէ
վս̅ բանի կնոջ քո սպանանես զմիամօր որ-
դին քո. դառնագոյն պատահեսցէ քեզ քան
զայն. որ պատահեցաւ զինուորի միոյ. որ
վս̅ կնոջն իւրոյ ան մեղ դատապարտեցին ՚ի
մէջ հրապարակին։ Ասէ կայսրն. ասա զա-
ռակդ զայդ թէ վս̅ էր եղև այդպ̅։ Ասէ
դպրապետն. ոչ ասեմ և ոչ աշխատիմ՝ իզուր
և դատարկ. եղիցի մինչ ես պատմեցից զա-
ռակս սպանցի որդին քո անդր. և զի՞նչ
շահ լինիցի ՚ի պատմութենէս։ Արդ եթէ
կամիս լսել զառակնիմ. նախ դարձոյ զորդի

քո 'ի մահուանէ 'ի բանտ։ Այլ ես պատմեմ
զառակս եթէ հաճոյ լինիցի քեզ առակս՝
ապրեցոյ զորդին քո․ և եթէ ո՛չ՝ սպան զնա։
Այլ հրամայեաց կայսրն դարձուցանել զոր
դին իւր 'ի բանտ․ մինչև պատմեսցէ դպրա
պետն զառակն։ Եւ սկսաւ ասել այսպէս։

Առակ երկերորդ դպրին․ զոր ասաց վասն ծնողի միոյ
որ ետ զորդին անմեղ ի դաստիարակութիւն.

Ի քաղաքի միում էր զինուոր մի ծեր․
զոր առեալ էր մատղաշ աղջիկ մի 'ի
կնութիւն իւր․ ո՛վ տէր իմ արքայ առերէ
կին մատղաշ․ և յոյժ սիրէր զնա․ և բա
ղանիքն ոչ ումեք հաւատայր։ Այլ և ամ գի
շեր փակէր զդուռն․ և զբանալիսն պահէր
'ի ներքոյ բարձի իւրոյ․ Այլ զինուորն այն
ծերէր․ և ոչ ունէր կարողութիւն ամուսնու
թե՛ կատարել զկամս կնոջն իւրոյ։ Վասն այն
անմիտ կինն սիրէր զայլս․ և ամ գիշեր յոր
ժամ ննջէր այրն իւր առնոյր զբանալիսն
գաղտ․ և բանայր զդուռն և երթայր առ
սիրահն իւր, որ կատարէր զկամս նորա․ և լցեալ
զհեշտութիւն և զցանկութիւն մարմնոյն իւրոյ՝
դառնայր առ այրն իւր։ Այլ 'ի գիշերի մի-
ում յորժամ ննջեաց այրն․ ել կինն և գնաց
ըստ սովորութեան իւրոյ առ սիրահն իւր․
Այլ զարթուցեալ այր նորա 'ի քնոյն՝ ոչ եգիտ
զկինն իւր առ ինքն․ Այլ ելեալ ետես զդուռն
այն 'ի բաց․ և փակեալ պնդեաց․ և ելեալ 'ի վե

ըն դարպասն և հայեր 'ի պատուհանէն․ զի տեսցէ ըզ գալն նր։ Եւ յետ խօսելոյ հաւուն՝ դարձաւ կինն փութալով ի տուն․ զի մի եկեալ պահապանքն գտցեն զնա արտաքս։ Եւ կայր 'ի քաղաքին այն սահման այսպիսի․ յորժամ երեկոյ լինէր՝ յետ երից անգամ հաւն խօսելոյ հնչեցուցանէին զանկակ։ Եւ յետ հնչեցուցանելոյ զանկակին՝ եթէ զոք գտանէին արտաքոյ․ ըմբռնէին և տանէին 'ի բանտ։ և վաղիւն դատապարտէին զնա 'ի մէջ հրապարակին առաջի ամենեցուն 'ի նախատինս։ Եւ եգիտ կինն զդրունսն փակեալ․ զահի հարաւ և խորհէր թէ զի՞նչ արասցէ։ և յետոյ վստահացեալ բախէր զդուռն։ Ասէ այրն․ ո՞վ չարեաց մակարդ-չար կին․ այսօ քանիցս անգամ փորձեցի զքեզ որ ելեալ յանկողնոյ իմոյ երթեալ պոռնկիս ընդ այլում։ Ասեմ քեզ ըստոյգն․ կացցես դու այդր՝ մինչև պահապանքն եկեալ գտցեն զքեզ և տարցին 'ի բանտ։ և 'ի վաղիւն դատապարտեսցեն զքեզ 'ի մէջ հրապարակին։ Ասէ կինն․ ով տէր վէր ասես զայդ ասեմ քեզ զճշմարիտն։ Յորժամ ննջէի ես ընդ քեզ 'ի յանկողնին․ եկն աղախին մօր իմոյ կոչեաց զիս և ասէ․ փութայ եկ առ մայրն քո․ զի յետին շունչն է։ Եւ ես ոչ կամեցայ զարթուցանել զքեզ 'ի քաղցր քնոյդ․ և գնացի առ մայրն իմ տեսայ, և փութով դարձայ առ քեզ․ այն չափ փութով ընթացեալ եկի՝ որ վաստա

կեալ 'ի ճանապարհին տկարացայ յուժոյս։ Արդ աղաչեմ զքեզ՝ բաց ինձ զդրունսն զի մտից ի ներքս. զի մի եկեալ պահապանքն գտցեն զիս։ Ասէ այրն ճշմարիտ որ ոչ բացից. զի եկեալ պահապանքն առցեն զքեզ։ Ասէ կինն վն̃ այ̃ աղաչեմ զքեզ. բաց զդուռըն և առ զիս ի ներքս. զի ամօթ և նախատինք առնես զիս քեզի, և ծնողացիմոց և ազգականացս։ Ասէ այրն, 'ի միտ ած թէ քանիցս անգամ պղծեցեր զյանկողինս իմ պոռնկութե̃ քով. լաւ է քեզ աստ չարչարիլ մարմնով վն̃ մեղացքոց. և մի 'ի դժոխս։ Ասէ կինն, ով սիրելի տր̃ իմ վն̃ սիրոյ այնորիկ որ խաչեցաւ վն̃ մեր. ողորմեա ինձ և առ զիս 'ի ներքս։ Ասէ այրն, զուր կու աղաչես. զի այդպէս մնալոցես առաջի դրանդ՝ մինչև եկեալ պահապանքն առցեն զքեզ։ Ասէ կինն, ով տր̃ իմ. գիտես զի ոչէ հեռի ջրհորն 'ի դրանէս. եթէ ոչ բացցես զդուռըն և առցես զիս ի ներքս, ընկեցից զիս 'ի ջրհորն և խեղդեցայց։ Ասէ այրն. վաղուց պարտէր քեզ խեղդիլն. և ընդ ասելն զայս՝ ծագեաց և լուսինն։ Ասէ կինն կամիս զխեղդելն իմ՝ խեղդեցայց. այրդ՝ մինչ խեղդեալ չեմ՝ արարից կտակ։ Նախ և առաջին յանձն առնեմ յա̃յ զհոգի իմ. և 'ի ձ̃ռ կոյսն մարիամու և յամ սր̃ս. և զմարմին իմ յորժամ հանցեն 'ի հորոյն՝ թաղեսցեն յեկեղեցւոջ սր̃ոյն վառվառեայ. և զա̃մ ինչս զոր ունիմ, դու գիտես



տր̃ իմ

տ͞ր իմ ո͞ղ և կամիս այնպէս արասցես. Եւ
զայս ասացեալ գնաց մերձ 'ի ջրհորն. և էր
ջրհորոյն վէմմի մեծ. զորառեալ երկոքին
ձեռամբքն ա՛րկ 'ի ջրհորն. և լուեալ այրն
զձայնն քարին յատակ ջրհորին. կարծեաց
թէ կինն ընկեց զինքն 'ի հորն։ Եւ ասէ.
ա՜ւաղ թէ զի՞նչ գործեցից. զի կինն իմ
խեղդեցաւ։ և վաղվաղակի իջեալ ընթա
ցաւ 'ի ջրհորն. և կինն թագեա՜ւ յետոյ կող
մանէ դրանն. և իբրև ել այրն՝ եմուտ կինն
ի ներս՝ և փակեաց զդուռն ի ներքուստ. և
ել 'ի դարպասն։ Եւ զինուորն կանգնեալ
ի վ͞ր ջրհորին. ա՜ւաղէր զկինն և ասէր լա
լով. վա՜յ ինձ որ կորուսի զկիննիմ. չա՛րէր
ժամն որ ոչ բացի զդուռն. և կինն ծիծա
ղելով ասէ. ո՞վ նզովեալ ալէվոր՝ զի՞նչ
գործես մինչև ցայս վայր 'ի դուրսդ. մի թէ
սակաւէր քեզ շատանալ մարմնով իմով. որ
ա͞մ գիշեր գնաս 'ի բոզտունն պոռնկիլ ընդ
նմ͞ա։ Եւ այրն լուեալ զձայն կնոջն և ասէ
օրհնեալէ ա͞ծ. և գոհութի͞ն ա͞յ որ առողջ
ես։ Արդ բաց զդուռն զի մտից ի ներս.
ընդէր փակեցեր զդուռն. զի ես կամէի աս
կա՜ մի խրատել զքեզ. և երկեցուցանել. և
ապա՛ բանալ զդուռն։ Ասէ ցնա՛ կինն. եթէ
ոք փորեսցէ խորխորատ ընկերի իւրոյ՝ ինքն
իսկ ընկեսցի ի մէջ ն͞ր. դու ոչ կամէիր բա
նալ զդուռն ինձ. և ոչ ես բացից քեզ. մին
չև առցեն քեզ պահապանքն։ Վան զի ես

 ոչէի

ուշէի ի մէջ չարեաց զոր ասացեր Տ̃ր իմ.
ո̃վ ասեն առակաց՝ թէ սևացեալն մրով՝
մրձոտէ և զայլս: Այսինքն. չար ոք՝ զա̃մ
ո՞ք չար կարծէ. այնպէս դու շնացող գո-
լով զմեան քո Տ̃ր իմ բառնաս: Ճշմարիտ
ասեմ քեզ. զի այդր միայնոցես դու մինչև
առցեն զքեզ պահապանքն: Ասէ այրն. ոչ
երկնչիս դու յա̃յ. ընդէր ճշմարտես այդ-
պիսի բան Տ̃ր իմ. ծերացայ ՚ի քաղաքիս,
՚ի մանկութէ մինչև ցայժմ ոչ եղև անունդ
Տ̃ր իմ որ դու ասես. և թէ վաղիւն նա-
խատեն զիս ի մէջ հրապարակին՝ մի թէ ոչ
լինի ամօթ ինձ՝ և քեզ. և նախանձեաց մերոց
մինչև յաւիտեան: վ̃յ աղաչեմ զքեզ բա՛ց
զդուռն: Ասէ կինն. ոչ բացից մի՛ աշխատ
առներ զիս. և մի աղաչեր զիս ՚ի զուր. լաւ է
քեզ աստ չարչարիլ վ̃ս մեղաց քոց՝ քան թէ
՚ի դժոխս: Տես ինչ ասէ իմաստունն. երեք
բան ատելի է անձին իմոյ Աղքատ հպարտն:
Ստախօս մեծատունն, և զծերն պոռնիկ:
ո̃վ և դու իսկ ես ծեր և շնացող: Այլ և
այս մեծ ողորմութիւն է ա̃յ. որ տանջիս աստ
մարմնով և մի տեսցես զտանջանսն յաւիտ̃կն.
Ասէ այրն. ո՞վ սիրելի տիկին իմ. ա̃ծ ողոր-
մած է և գթած. և ոչ խնդրէ այլ ինչ՝ բայց
միայն զզղջանալ: վ̃ն ա̃յ սիրուն աղաչեմ
զքեզ բաց զդուռն. զի մտից ՚ի ներքս. և այլ
ոչ արարից զայդ զոր ասես Տ̃ր իմ. Ասէ
կինն նշաւակելով ասէ ո՞վ արար զքեզ

վրդով և բարոզող. և զայդ գիտես որ անձ-
ողորմած է. ընդէր ոչ բացեր զդուռն ինձ.
Ճշմարիտ ասեմ քեզ. ո՛չ առևից զքեզ լինել
քս. և մինչ դեռ նա զայս խօսէր՝ հնչեցու-
ցին ըզզանկակն. Ասէ այրն. ահա հնչե-
ցուցին զզանկակն, բաց զդուռն զի մի եկե-
ալ պահապանացն գտցեն զիս. Եւ մինչ նա
զայս խօսէր՝ եկին պահապանքն և գտին զնա
արտաքս. և ասեն ցնա. զի՞նչ գործես աստ
՚ի ժամ գիշերիս. Եւ լռեալ կինն զձայն
պահապանացն և ասէ ցնոսա. ով եղբայրքիմ
աղաչեմ զձեզ առէք զդամ այդի. և տարէք
դմա ըն մեղաց իւրում. զի ամ գիշեր թող-
եալ զիս. և երթայ ընդ բոզս. Եւ այս չափ
ժամանակ համբերեցի և ոչ յայտնեցի. մի
թէ դարձցի ՚ի գործոյն այն մեկ՝ և ոչ դար-
ձաւ. մինչև ինքն զինքն մատնեաց. Եւ պա-
հապանքն առեալ տարան զնա ՚ի բանտ. և
իվաղիւ անդր դատապարտեցին ըստ օրի-
նաց իւրեանց. Յայնժամ ասէ դպրապետն
ցկայսրն ՚ի միտ առեր արքայ զառակս զայս
զոր ասացի քեզ. Ասէ կայսրն. այո՛ ՚ի միտ
առի. զի՞նչ զովեալ և չար կինն այն՝ մատնեաց
զայրն իւր դառն տանջանաց ՚ի զուր. Ասէ
դպրապետն. Ճշմարիտ ասեմ քեզ արքայ.
եթէ վն բանի կնոջ քո սպանցես զորդին
քո՝ դառնագոյն լիցի քեզ քան զինուորին
այն. Ասէ կայսրն. ամէն ասեմ քեզ դպրապետ.
ոչ սպանից զորդի իմ այսօր վն բանի քո.

Ասէ դպրապետն. եթէ լուիցես խրատոյ
իմոյ և ոչ ըսպանանես զորդի քո՝ մեծ բա
րուն հանդիպեսցէ քեզ։ զայս ասաց դպն
և երկիր եպագ արքային և գնաց։ Իբրև
լուաւ թագուհին. թէ այսօր ևս ոչ մեռաւ
որդի արքային. եմուտ խսենեակ իւր և լայր
ան մխիթար. կոծէր զանձն ասելով՝ վայ
ինձ՝ զի ոչ կարացի խնդրուածքմի կատա
րել տալ արքային իմոյ։ այսպէսի աղիողորմ
և բարձր ձայնիւ լայր և հառաչէր՝ մինչև
ծառայքն ծանուցին արքային։ Իսկ եկեալ
կայսրն գնաց առ նա և ասէ. ո՞վ սիրելի իմ
կենիմ վա՞ է՞ր այդպէս ան ողորմ լաս։ Ասէ
թագուհին. եթէ սիրելի լինէի քեզ՝ զխնդ
րուածսիմ կատարէիր։ և դարձեալ ոչէի
սիրեցեալ զքեզ՝ ի բոլոր սրտէ՝ ոչէր ինձ կըս
կիծ, բայց իմ վէր խիստ մեծ է՝ զի իմէջ նա
խատանաց թողեր զիս. և ոչ սպաներ զնզո
վեալ որդի քո՝ որ այսպէսի խայտառակեաց
զիս. զոր և աչօքդ իսկ տեսեր տէրիմ արքայ։
Ասէ դու ունկնդիրես եղեալ վարժապե
տաց որդւոյ քո. և ոչ գիտես թէ ն՛քինչ կու
խորհին քեզ։ բայց ես առաւել կու սիրեմ՝
զքեզ՝ և կամիմ զառողջութի քո. և դու ոչ
գիտես. Ասա՛ լինելոցէ քեզ այնպէս՝ որպ
եղև զինուորի միոյ. որ որդի իւր գլխատեաց
զինքն։ Ասէ կայսրն. ասա ինձ ով սիրելի
թագուհի իմ. թէ ինչ պատճառի համար
արար այնպէս ան ողորմ բան հօր իւրում։

Ասէ Թագուհին. ասեմ քեզ առակս մի նուագոյնս. և դու տէր իմ լաւ 'ի միտ առ. և սկսաւ ասել:

## Առակ երկրորդ Թագուհւոյն. որ յօժարեցուցանէ զհայրն սպանանել զորդին.

Ի քաղաքի միում կայր անուանի զինուոր մի. և ունէր որդի մի և դուստր երկու. և զինուորն այն սիրէր զխաղս. մինչև զամ ինչս իւր և զստացուածս մսխեաց 'ի խաղս. և աղքատացաւ յոյժ: Իսկ 'ի յայնմ ժամանակին նստէր 'ի նոյն քաղաքին կայսր Օկտաւիանոս անուն. որ մեծացաւ ընչիւք քան զամենեսեան որ յառաջ քան զնա էին: Իսկ ժողովեաց բազում ոսկի և արծաթ. և շինեաց. Բ. աշտարակ. զմինն ելից ոսկւով. և զմիւսն արծաթով. և յանձնեաց պահապանաց: Իսկ զինուորն այն որ աղքատացաւ՝ կոչեաց զորդին իւր և ասէ. որդի աւասիկ աղքատացայ ես. և կամիմ վաճառել զժառանգութիւն իմ զոր ունիմ. և թէ վաճառեցից՝ կորիցես դու, և քորքդ ընդ քեզ յետ մահուան իմոյ: Ասէ որդին ցհայրն. արդ՝ խորհեա՛ թէ զի՛նչ արասցուք. զի լինիցիմք 'ի բարի կեանս. և ժառանգութիւն մեր ոչ վաճառեսցի: Ասէ հայրն. որդեակ գիտեմ զի կայսրն ունի. Բ. աշտարակս. մինն լի՛ ոսկւով. և միւսն լի՛ արծաթով երթիցուք և գողասցուք անտի՝ և ոչ վաճա

 ռեսցո.

ուեսցուք զմըլքերս։ Իսկ 'ի գիշերին այնմիկ
ելեալ գնացին յաշտարակն հանել ոսկի. և
մտեալ ի ներքս որ չափ որ կարացին բառ-
նալ՝ առին և դարձան։ Իսկ 'ի վաղիւն՝ տե-
սին պահապանքն աշտարակին՝ զի բացեալէ
ին զաշտարակն և գողացեալէին 'ի յոսկւոյն։
և վաղվաղակի գնացին առ կայսրն և պատ-
մեցին նմ. Թէ պատառեալեն զաշտարակն՝
և գողացեալեն յոսկւոյն։ Ասէ կայսրն. չէ
ինձ փոյթ. 'ի ձեզանէ գիտեմ ես զոսկին։
Իսկ պահապանքն ելեալ յերեսացն արքային.
և խորհէին Թէ զի՞նչ արասցեն. և ասէ մինն
'ի նոցանէ. եկայք արասցուք այսպէս։ առ-
ցուք պղինձ մի մեծ. և Թաղեսցուք 'ի ներ-
քուստ կողմանէ աշտարակին. և լցցուք 'ի
մէջ նր սոսինձ. եԹէ դարձեալ գայցէ գո-
ղն՝ անկցի 'ի պղինձն և սոսինձն ոչ Թողու-
ցու զնա ելանել անտի. և արարին այնպէս։
Իսկ յետ սակաւ ինչ աւուրց՝ դարձեալ աղքա-
տացաւ զինուորն այն. և կրկին եկն հնդերձ
որդւովն առնուլ ոսկի յաշտարակէ անտի. և
երԹայր հայրն ընդ առաջ՝ և որդին զկնի.
և իբրև եմուտ ի ներքս՝ անկաւ ի մէջ պղըն-
ձին. և խոր Թաղեցաւ մինչև ցպարանոցն։
և աղաղակեաց ի ձայն մեծ և ասէ. որդեակ
իմ մի գայցես այսր. քան զի այլ ոչ կարես
ելանել։ Ասէ որդին՝ եկից և փրկեցից զքեզ.
և եԹէ ես ոչ կարեմ օգնել՝ բերից զայլս
զի օգնեսցեն և հանից զքեզ այտի. քան զի

 եԹէ

եթէ գտցեն զքեզ այդր՝ զամենեսեանս
զմեզ կու սպանանեն։ Ասէ հայրն. մի տացէ
Ա̄ծ այն օրն՝ զի գիտասցէ ոք թէ ով եմ ես.
արդ լաւ է ինձ միայնոյ մեռանել՝ և ոչ ձեզ
ամենեցուն։ Դու ըզ սուրդ և հատ զգլուխ
իմ. զի յորժամ գտցեն զիս՝ առանց գլխոյ
ոչ ոք կարէ ճանաչել թէ ով իցեմ։ Ասէ որ
դին. բարի ասացեր հայր. և հանեալ զսուրն
եհատ զգլուխ հօրն՝ և եարկ ՚ի հորմի. և եր
թեալ ՚ի տունն պատմեաց քուերցն զեղեալ
գործն. և նք̄ա լուեալ զմահ հօրն իւրեանց՝
սկսան ողբալ լալ և կոծալ։ Իսկ ՚ի վաղիւ
անդր եկեալ պահապանացն տեսին մարդ մի
մեռեալ ՚ի մէջ պղղծին. և գլուխ ոչ կայր.
և գնացեալ պատմեցին արքային։ Իսկ հրա
մայեաց կայսրն. զի զմարմինն զայն կապես
ցեն յագի ձիոյ միոյ. և շրջեցուսցեն փողոցէ
՚ի փողոց. եթէ յորում տանէ լուիցեն ձայն
լալոյ՝ ՚ի նոցանէ է մարդն այն։ Իսկ արարին
այնպէս ոպ̄ հրամայեաց կայսրն. և շրջեցու
ցանէին զնա փողոց փողոց. որ և եկեալ հա
սին առաջի դրանն նր̄. և դստերացն տեսեալ
զհայրն իւրեանց՝ լային դառնապէս. և իբրև
՚ի մացին պահապանքն շրջեցուցանողք դե
ոյն նր̄. ՚ի սկոյն որդին մեռելոյն առեալ դա
նակ ծակեաց զերակ ձեռին իւրոյ՝ որ ել ար
իւն յոյժ սաստիկ. և ՚ի քննելն նց̄ ասաց վս̄
ինձ լան քուերքն իմ։ Ն յ̄ հաւատացեալ
նց̄ նր̄ խօսիցն՝ դարձան և շրջեցուցանէին

զմարմինն ընդ քաղաքն ած։ և իբրև ոչ գի-
տացին Թէոդոսիէր՝ տարեալ կախեցին 'ի
փայտէ։ Արդ՝ նզովեալ որդին որ սպան
նեաց զհայրն իւր. և այլ՝ ոչ հանգոյց զմար
մին նր 'ի հող տապանին։ Եւ ասէ Թագու
հին. տր իմ խրատ տուեր զառակս որ պատմեցի
քեզ։ Ասէ կայսրն. այո՛ խրատ տուի։ Ասէ
Թագուհին. երկնչիմ տր իմ՝ արքայ գուցէ
և քեզ պատահեսցէ դառնագոյն քան զնորայն։
Ասէ կայսրն. լուա՛ առակ ասացեր ինձ ո՛վ
սիրելի տիկին իմ. որդին այն նզովեալ էր որ
եհատ զգլուխ հօրն իւրոյ. և զմարմին նր և ս
ոչ եդ 'ի գերեզմանի։ Ո՛չ մարթի ասել քեզ
ո՛վ Թագուհի իմ. զի ոչ կարասցէ որդի իմ
առնել այնպէս՝ ոպ նա արար. քան զի Է լու-
սանալ առաւօտին տամ սպանանել զնա։

Յերկրորդ անգամ առնել զորդէ թագաւորին խմաստնոյն գալ
ծառայել գործոց դպրութեան. և տասնեօթ փիլիսոփայն.

Յերրորդում աւուր գայ նստի կայսրն
ի գահոյսն իւր. և կոչեաց զդահճապե
տըն և ասէ. հան զորդի իմ ի բանտէն.
և անցո Է մէջ քաղաքին փողոց ազդե
ցուե և տար սպան զնա ոպ մահապարտ և հե
ռացոյ զգլուխն 'ի մարմնոյն Է. կանգուն. Իսկ
եկեալ դահճապետն և հան 'ի բանտէն զոր
դի արքային, և կապեաց զձեռս 'ի յետս նր
ոպ մահապարտի. և եւ ձայնել առաջի նր
մունետիկս ասելով թէ ո՛վ ոք մեղանչէ
կամի ընդ յետ նամօրն՝ իւրոյ այսպիսի մա
հուամ

հուամբ մեռցի։ Եւ մինչ դեռ տանէին՝
եհաս դպրապետն սրընթաց երիվարաւ ո-
րում անուն էր Գաթոն։ Տեսեալ զորդի
արքային որ այնպիսի խեղճ և ողորմելի տա
նէ լին 'ի մահ. բարկացեալ դահճապետին
և ասէ. ընդէր այդպիսի կապերէք զորդի
արքային. և ետ արձակել զձեռս։ Ասէ դահ
ճապետն՝ ո՛վ դու. հրամանն թագաւորին սաս
տիկ է. և թագուհոյն ևս առաւել. մեք
զինչ արասցուք։ և ժողովուրդն որ շուրջն
կային՝ ողբալով աղաղակէին և ասէին. ո՛վ
բարի դպիր. փութա առ կայսրն և ազատեա
զորդի արքային և զաշակերտն քո. ո՜վ ըն
կերքն քո ազատեցին։ Եւ մանուկն անմռ
ունչ խոնարհեալ երկիր եպագ վարժա
պետին իւրոյ. ո՜վ թէ կամի ասել՝ ազատեա
զիս 'ի մահուանէ։ Ասէ դպրապետն. դա
դարեցէք դուք 'ի տեղիս այս՝ մինչ ես եր
թայց առ կայսրն. զի յոյս ունիմ առ ա͞ծ որ
փրկեմ զդա այսօր 'ի մահուանէ։ Եւ գնաց
դպրապետն ըշտապով 'ի պաղատն. եմուտ
առ կայսրն. և մեծաւ պատուով ողջուն
եաց զնա։ Ասէ կայսրն 'ի չարիս լինեցիս դու։
Ասէ դպրապետն. տե՛ր՝ պարգևի ակնունէի
'իքէն՝ և ո՛չ բարկանալոյ։ Ասէ կայսրն. ո՜վ
ծառայեցեր՝ նոյնպէս և ունիցիս. ք̃. զի ոչ
պարգևի ծառայեցեր՝ այլ դառն մահու։
Ետու զորդին իմ 'ի ձեզ լեզուաւ և խօսուն.
ուսուցանել և դաստիարակել. և այժմ եղև
 պապա

պապանձեալ փոխանակ իմաստութեն և հան
ճարոյ։ Նաև յաւելեալ ես չարիս զայս՝ որ կամե
ցաւ բռնադատել և լլկել զկինն իմ։ Ա՛յն
այն գործոյն մեռանի ահա այսօր։ և ձեզի
ես չարչարանք կազմեմ՝ որ աչօք ձերովք
տեսանէք զմահ ձեր։ Ասէ դպրապետն․
Տէր իմ արքայ․ զոր ասացեր թէ պապանձեալ
եղև որդին իմ՝ այն ոչ է դատաստան․ զի
նայէ միայն որ խելից լսել տայ․ և համերց խօ
սել, և գիտեմ որ ո՛չ է պապանձումն լեզուի
որդւոյ քո ճշմարիտ․ թէպէտ կամի խօ
սել՝ ապա զի չէ ժամանակ։ Նաև զոր ասացեր
թէ կամեցաւ բռնադատել և լլկել զկին
նիմ․ մի հաւատար Տէր իմ արքայ․ զի այդ զո՛ւր
է ի վերայ նորա․ ես ոչ հաւատամ։ վասն զի չկա՛յ այլ
ինչ չարագոյն ի վերայ երկրի քան զչար կանա
յս։ Նաև գիտեմ ցուցանել թէ որպէս լեալ են
կանայք սուտք և զրախօսք։ և դու եթէ կա
միս վասն բանի կնոջ քո սպանանել զորդեակն
քո։ Ինելոցէ քեզ որպէս եղև ումեմն․ որ վասն
բանի կնոջ իւրոյ սպան զսիրական անծեղն
իւր։ Ասէ կայսրն․ ասա ինձ թէ որպէս սուտ
խօսքեն և զրախօսք կանայք․ և ասա վասն ան
ծեղիդ։ Ասէ դպրապետն․ ոչ ասեմ և աշ
խատիմ․ մինչ ես պատմեցից զառակս՝ զոր
դին քո անդ ըսպանցեն․ և զի՞նչ շահ լինի
՚ի պատմութենս։ Նա թէ կամիս լսել զառակ
նիմ՝ նախ դարձոյ զորդին քո ՚ի բանտ։ և
ես պատմեցից զառակս․ եթէ լիցի հաճոյ
կամաց

կամաց քոյ տուակս՝ ապրեցոյ զորդին քո.
և թէ ոչ՝ նոյն ժամայն սպան զնա: Եւ հրա
մայեաց կայսրն դարձուցանել զորդի իւր
'ի բանտ. մինչև պատմեսցէ դպրապետն
զառակն: Եւ դարձուցին զորդի արքային
'ի բանտ. և սկսաւ դպրապետն ասել այսպ.

Առակ երրորդ դպրապետին. զոր ասաց վս անձնէին
[illegible] [illegible]. խաբեութեան [illegible] կնոջն.

Ի քաղաքի միում էր այր ոմն ազնուա
կան և անուանի յոյժ. և ունէր ան
ձեղմի զորուսուցեալէր լեզու ե
բրայեցերէն. որ իբրև զմարդ ուղիղ խօ
սէր: Եւ անձեղն այն զոր ինչ տեսանէր
կամ լսէր՝ պատմէր զամ տն իւրոյ: Եւ այրն
այն՝ ունէր կին մատղաշ և գեղեցիկ յոյժ.
նման թագուհւոյն քո: և կինն այն ոչ սիրէր
զայրն իւր. այլ ատէր զնա և արհամարհէր.
և սիրէր զայլս: Եւ յորժամ գնայր այրն 'ի
վաճառականութիւն: Նոյն ժամայն կոչէր
կինն զսիրաւն իւր. և ննջէին ընդ իրեարս
և պոռնկէին: Եւ յորժամ գայր այր նր.
պատմէր նմ անձեղն զամ. թէ այսպէս պո
ռնկեցաւ կինն քո: Եւ այն չափ եղև՝ մինչև
ամ քաղաքն լուան զպոռնկութիւն կնոջ նր.
Եւ վս այնորիկ այրն բազում անգամ խրա
տէր զկինն և ասէր. ընդ էր գործես զայս:
Ասէ կինն. քաւ լիցի ինձ տրիմ գործել
զայդ. այլ դու հաւատաս նզովեալ անձե

ղիդ։ զի՝ քանի որ նա կենդանի է՝ մեք 'ի նա
ղաղաղութեն ոչ լինիմք. քանզի դու հաւա
տաս առողջութեն նր։ Ասէ այրն. ով կին դու
ոչ գիտես որ նա սուտ ոչ խօսի. այլ զոր ինչ
տեսանէ և լսէ՝ զայն խօսի։ Իսկ յաւուր մի
ում եղև, եւ այլ իւր ըստ սովորութե իւ
րում և գնաց 'ի վաճառականութի։ Իսկ
կինն յղեալ կոչեաց զսիրաւն իւր զի եկեսցէ
առ նա։ Իսկ իբրև երեկոյ եղև. եկն սիրա
ւն իւր՝ և թախեր զդուռն. և կինն ելեալ ե
բաց զդուռն և ասէ. մի երկնչիր արի վստահ
լներս. զի ոչ ոք կայ աստ՝ որ տեսանէ զքեզ։
Ասէ սիրաւն. ով սիրելի իմ. անծեղն տե
սանէ և պատմէ ամենեցուն։ Ասէ ցնա կինն.
եկ և մի երկնչիր. զի յայսմ գիշերիս առից
զվրէժ սիմ 'ի նմանէ։ Իսկ լուեալ անծեղն
զխօսս նց և ասէ. ով եղկելի այր դու նեն
գես տն իմում. և նենգես ընդ կնոջ նր. թէ
պէտ 'ի խաւար գիշերիս ոչ տեսանեմ զձեզ.
այլ լսելով զձայնն ձեր գիտեմ թէ զինչ
գործէքդ։ Իսկ յորժամ եկեսցէ տրն իմ
պատմեցից նմ պէմ։ Ասէ սիրաւն ոչ ասացի
քեզ թէ անծեղդ այդ խայտառակէ զմեզ.
ահա լսես զինչ ասէ։ Ասէ ցնա կինն, մի եր
կնչիր. եկ ընդ իս զի 'ի սենեկի գնասցուք և
ննջեսցուք. և գնացին ննջեցին 'ի միասին
զգիշերն ողջոյն 'ի սենեկի անդ։ Իսկ 'ի հա
ւախօսին էլ կինն և կոչեաց զմինն 'ի յաղախ
նեացն իւրոց և ասէ։ Ել 'ի տանիսն և արա

ծակ իմ՛ո գլխոյ անծեղին. ա՛ծ ածել իմ՛ո
բոլորի ծակոյն՝ զի հողն և աճաղն տանխսին
ի՛ջցէ իմ՛ո գլխոյ անծեղին. և ջրցգեա՛լ ջուր
իմ՛ո նո՛ր. Եւ աղախինն արար այնպէս. մինչ
զի անծեղն եղև կիսամահ: Եւ յառաւօտուն
պահուն. ել սիրաւն և գնաց: Եւ յայնմ ա-
ւուրն եկն վաճառականն ՚ի տուն իւր. և
տեսեալ զանծեղն՝ ասէ. ո՞վ անծեղ՝ ո՞պ կե-
աս: Ասէ անծեղն. տէր իմ, զինչ որ լուայ և
տեսի՝ պատմեցից քեզ: Այն քո ՚ի գիշերիս
այսմիկ եբեր առ ինքն զսիր ա՛ւն իւր. և ես
անարգելով անարգեցի զնա և ասացի նմա.
Թէ յորժամ գայցէ տէրն իմ՝ պատմեցից նմ
զա՛մ. Եւ նա ոչ ինչ համարեալ զբան սիմ.
եմուտ ՚ի սենեակն քո. և ննջեաց ընդ կնոջ
քում: Եւ թէ զկեանքս իմ հարցանիցես հա
զիւ զերծեալ եմ ՚ի մահուանէ. զի այն չափ
անձրև և կարկուտ եկն ի վ՛ր իմ զգիշերն
ողջոյն՝ զի կիսամահ եղէ: Իբրև լուաւ զայս
կինն. ասէ ցայրն՝ զարմանամ ես ընդ խելս
քո. զի հաւատաս դու այդ ստախօս անծե
ղիդ. և ահա կասէ թէ ՚ի գիշերիս եկն անձ
րև և կարկուտ. որ և այս գիշերիս պարզէր
երկինքն քան զա՛մ գիշեր. ոչ անձրև եկն և
ոչ կարկուտ. և թէ ինձ չես հաւատար՝
երթ հարց զդրացիսն և զա՛մ մարդ: Եւ ե-
լեալ այրն գնաց եհարց զդրացիսն: Եւ ա-
նք ասեն. ճշմարիտ որ պարզէր այս գիշերս
քան զա՛մ գիշեր. Եւ եկեալ այրն ասէ

ցկինն. Ճշմարիտ եղեր՝ որ գիշերս այս պատ
զակայ եղեր. քան զա՟մ գիշերս։ Ասէ ցնա կինն.
Ո՞վ բարի և սիրելի այրիմ. Ճշմարիտ ասեմ
քեզ՝ զի անծեղդ այդ ստախօսէ. և սուտ
խօսելովն ձգեաց իմէջ մեր աղմուկ. և այսպ՟
արար զմեզ 'ի քաղաքիս աստ. և անկաք 'ի լե
զու ամենեցուն։ Եւ գնաց այրն առ անծե
ղըն և ասէ. ո՞վ անծեղ վ՟ն էր խաբեցեր զիս.
և սուտ խօսեցար ընդ իս. և մոռացար զբա
րերարութ՟ի իմ, յորժամ ես ձեռամբ իմով
կերակրէի զքեզ։ Եւ դու քո սուտ խօսե
լովն՝ արկեր չարութ՟ի իմէջ իմ և կնոջ իմոյ.
և արարեր զմեզ զրուցքաղաքիս. Ասէ ան
ծեղն. գիտէ ա՟ծ որ յիս ստութ՟ի ոչ կայ.
այլ զոր ինչ տեսայ և լուայ՝ զայն ասեմ։ Ասէ
այրն. սուտ խօսեցար ընդ իս. որ ասացեր
թէ յայսմ գիշերիս անձրև և կարկուտ ե_
կաւ. և սրտովդ քո խռովեցուցեր զիս ընդ
կնոջ իմոյ։ Եւ բարկացեալ այրն էառ զան
ծեղն. և էհատ զգլուխն նո՟ր. և մեռաւ ան
ծեղն։ Իբրև ետես կինն՝ ուրախացաւ, և
ասէ ցայրն իւր. արդ՝ այժմ խաղաղութ՟ի
լինիցի մեզ. զի լաւ արարեր որ սպանեցեր
զանծեղն։ Եւ այրն հայեցեալ աստ և անդ.
և ետես իվ՟ր բունոյ անծեղին ծակմի ծա
կեալ կայր 'ի տանիսէն. և եդեալ սանդուխտ
ելաւ 'ի տանիսն. և ետես անդ ամա՟ն ջրով.
և յեղերն առաղ և փոշի։ Եւ գիտաց որ կինն
արարեալ էր զայն. և ատեաց յոյժ զան

ծեղն․ որ վս̃ բանի կնոջ իւրոյ սպան զայն
պխսի լաւ և պատուական անծեղն։ Եւ-
նոյն ժամայն այրն այն վաճառեաց զա̃մ ինչս
իւր․ և գնաց ա̃ հեռի․ և այլ ոչ դարձաւ առ
կինն իւր։ Յետ այնորիկ եկն դպրապետն
ցկայսրն․ լուար արքայ զոր ինչ ասացի քեզ։
Ասէ արքայն․ այո՛ լուայ և ՚ի միտ առի։
Ասէ դպրապետն․ եթէ վս̃ բանի կնոջ քո սպա
նանես զորդեակն քո․ դառնագոյն պատա
հեսցէ քեզ՝ քան զնորայն։ Ասէ արքայն․ լաւ
առակ ասացեր ո՛վ դպիր․ և սակաւ մի բար
կութիւն սրտի իմոյ շիջաւ․ այսօր վս̃ բանի
քո ո՛չ մեռանի որդի իմ։ Ասէ դպրապետն․
և ես շնորհակալ եմ քեզ, որ ունկնդիր եղեր
առակի իմոյ․ և ապրեցուցեր զորդի քո։ և
ողջունեալ զարքայն ասելով․ օրհնութի
իմ ի վերայ արքայիս իմոյ ան պակաս եղիցի․
զայդ ասաց և գնաց դպրապետն։ Իբրև լու
աւ թագուհին․ թէ այսօր ևս ապրեցաւ մա
նուկն ՚ի մահուանէ․ սկսաւ ճչել և լալ և բար
ձր աղաղակել որ լսելի եղև ամենեցուն․ որ
կոծէր զանձն ասելով տէր զինչ արարից․
առ յո՞ երթայց․ և կամ յո՞ւմ հարցից․ յար
քայէս իմմէ ոչ գտի մխիթարութի․ տէր
վայ է ինձ, որ անուանեալ կոչիմ թագուհի․
լաւ էր որ մեռեալ էի քան թէ այս սահմա
նըս բերեալ եղէ․ և ծառայքն եկեալ ծա
նուցին արքային։ Եւ ելեալ կայսրն գնաց
առ նա և ասէ․ ընդէր այդպէս ճչես և լաս

Ասէ Թագուհին կին քո եմ ես. որ դու ես
հռոմայ կայսր. և դուստր եմ մոզոլոս արքային.
և արդ Թողեր զիս իձեան որդւոյ քո նզովե
լոյ. որ վիրաւորեաց և նախատեաց զիս. և նա
խատ և զրուց արար զիս բոլոր հռոմայ. որ
և տ՟ր իմ արքայ իսկ գիտակէ և աչօք տեսեր.
և խոստացար սպանանել զնա. և աՀա դեռ
ևս կենդանի է. ես ինչ պէս դադարիմ 'ի լա
լոյ՝ կամ ի վ՟ր երկրի կենդանի կելոյ. Արդ
լաւ է ինձ մեռանիլ՝ քան թէ այսպիսի վիշ
տըս և նախատինս կրել: Ասէ կայսրն. յօժա
րեի առնել զբանդ զայդ և սպանանել: ա
պա յերրեկեան օրն եկն դպ՟րոց մի որդւոյն իմոյ
առ իս. և պատմեաց ինձ առակմի և հաւա
նեցոյց զիս. վ՟ն այն ձգեցի զնա ի վաղիւն.
Ասէ Թագուհին. դու այն չափ ունկնդիր
լինելոցես դպրո՟ց որդւոյ քո. մինչև պատա
հեսցէ քեզ այնպէս՝ ո՟րպ պատահեաց Թագա
ւորի միոյ իմաստասիրացն իւրոյ. որ՟ք էր
յանձնեալ զքաղաքն: Ասէ կայսրն. աղա
չեմ զքեզ ո՛վ Թագուհի. պատմեա ինձ
զառակդ զայդ թէ ո՟րպ եղև. Ասէ Թագու
հին. վ՟ն էր՝ 'ի զուր աշխատիմ. եթէ գիտէի
որ լինելոցէր ինձ սակաւ մի շահ՝ պատմէի
քեզ զառակս. Ասէ կայսրն. զինչ շահ կա
միս լինիլ քեզ. մի թէ ազատ արարի զորդի
նիմ. այլ միայն երկարեցի զկեանք ն՟ր մինչ
ի վաղեան օրն վ՟ն բանի դպրո՟ցն. Ասէ Թա
գուհին. բանք դպրապետացն՝ քեզ մահ


գու

գուշակէ։ Եւ բանքն իմ փրկէ զքեզ իմա
հուանէ։ Արդ՝ լուր բանից իմոց. եւ 'ի միտ
առ զառակսիմ. եւ պահեա՛ 'ի սրտի քում.
զի բարի լինիցի քեզ. եւ սկսաւ ասել զա
ռակս զայս։

Զրուցորդ առակ ընտրանեայն զոր տալոց. վասն ստեղծմն
ընտրութեան եւ է իմաստասիրաց նորա. որ կոխեր
դէպքէն զլոյս աչաց նորա.

Ի ժամանակի միում կայր թագաւոր մի
մեծ եւ անուանի յոյժ. եւ ունէր իմաս
տասէրս Է. եւ թագաւորն այն յանձ
նեալէր զերկիրն իւրնց. եւ նքա վարէին
զամ երկիրն հրամանաւն իւրեանց. որպ եւ
այժմ դուն։ եւ առանց նց բան ոչ ինչ առ
նէր. որպ եւ այժմ դուն։ Արարին իմաստա
սէրքն կախարդութի թագաւորին այս
պէս։ զի քան ի որ 'ի պաղատնէր՝ տեսանէր
զլոյս. եւ յորժամ ելանէր 'ի պաղատէն՝ խա
ւարէր լոյս աչացն։ Ն այնորիկ արարին
զկախարդութիս զայս՝ զի նց կամաց իւրեանց
իշխեսցեն երկրին. Եւ յաւուր միում փոր
ձէին զինքեանս՝ եթէ կարասցեն բժշկել
զկայսրն որ դարձեալ տեսցէ զլոյսն՝ եւ ոչ կա
րացին։ Այլ եւ հրաման առեալէին 'ի կայսե
րէն. զի եթէ որք տեսանիցէ երազ՝ տացէ նց
լի'տր մի ոսկի զի մեկնեսցեն զերազն. եւ թէ
ոչ բերցէ՝ կրկնապատիկ տուգանս տացէ
արքային։ Եւ այսու բանիւ բազում գանձս

ժողովեցին։ Նոյն յաւուր միում նստէր Թա
գաւորն այն ընդ Թագուհւոյն իւրոյ. և էր
տրտումյոյժ։ Ասէ Թագուհին. տ՟ր արքայ
ընդ էր տրտումես։ և պատմեաց արքայն վ՟ս
կուրութեն իւրոյ։ Ասէ Թագուհին. արա
ըստ խրատու իմոյ. և առողջասցիս դու։
Ունիս Է իմաստասէր 'ի տան քում. զոր իմաս
տութ՟բ իւրեանց վարեն զ՟ամ երկիրն որ 'ի
ներքոյ տէրութեանքո։ Կոչեա զն՟ս և ասա
սպառնալեօք. յորժամ որ կելանեմ 'ի պա
լատէս՝ վ՟ս էր ոչ տեսանեմ զլոյս։ Որդ՝
հրամանիմ այսէ. արասջիք ինձ դեղ. զի
յորժամ ելանեմ 'ի պալատէս 'ի դուրս՝ տե
սանեմ զլոյս. և զվնասն ձեր Թողում։ զի տե
ղեկացայես որ դուք արիք ինձ զայս. Ապա
Թէ ոչ յանձն առնուք բժշկել զիս. հրա
մայեմ զձեզ զամենեսեան չարաչար մահու
ամբ կորուսանել։ Յետ այնորիկ կայսրն ը՟ս
խրատու կնոջն կոչեաց զիմաստասէրքն առ
ինքն և ասէ։ Ով իմաստասէրք. հարցից և
ես ձեզ բանմի. և դուք տուք ինձ պատաս
խանի։ Ասեն իմաստասէրքն՝ հրամայէ ար
քայ. և լուիցուք զխօսս տ՟ն մերոյ. և տա
ցուք պատասխանի։ Ասէ արքայն. յորժամ
որ կուելանեմ 'ի պալատէս դուրս՝ վ՟ս էր
զլոյս ոչ տեսանեմ։ Ասեն իմաստասէրքն
ոչ գիտեմք։ Ասէ կայսրն ըստ խրատու կը
նոջն. լուեալէիմ որ արարեալէք կախար
դութի ինձ. յորժամ որ կելանեմ 'ի դուրս՝

վս՟ այն ոչ տեսանեմ զլոյս։ Ա՟, որդ՟ միասն ձեր
թողից․ դարձեալ արարէք ինձ հնարս զի
տեսից զլոյսն յորժամ որ կելնեմ 'ի դուրս։
Թէ ոչ՝ զձեզ զամենեսանդ դաւն և չար
մահուամբ կորուսանելոցեմ․ զօգուտն ձեր
դուք գիտէք։ Ասեն իմաստասէրքն․ արքայ
յաւիտեան կաց․ զո՛ւր է այդ խվ͞ր մեր․ մեք
'ի բանէդ այդմիկ ընաւ՟ խապար ոչ ունիմք։
Ասէ արքայն․ ես ոչ գիտեմ այդպիսի խօսք․
այլ հրամաննիմ այսէ որ բժշկէք զիս 'ի յախ
տից իմոց։ Ասեն իմաստասէրքն․ տ͞ր իմ ար
քայ թուլացո՛ զմեզ մինչև 'ի Ժ օր․ զի խոր
հեսցուք և պատասխանի բերցուք արքայիս
մերոյ։ Ասէ կայսրն․ եղիցի ը͞ս խնդրոյ ձե
րում։ և Ն͞ք ելեալ յերեսաց արքայեն․ խոր
հէին թէ զի՞նչ արասցեն․ և ոչ կարէին
գտանել հնարս։ Իսկ տրտմեալ ասեն ցմիմե
անս․ եթէ ոչ բժշկեսցուք զկայսրն՝ մեք ա
մենեքեանս մեռանիցիմք։ Շրջէին իմէջ
քաղաքին այսու տրտմութ͞ե․ և եկին գալով
'ի փողոց մի․ և ահա փոքր տղայք խաղային
իմէջ փողոցին։ Իսկ այլումն եկեալ առ իմաս
տասէրսն և ասէ․ տեսեալեմ երազ՝ մեկնե
ցէք զերազսիմ ո՞վ փառաւոր իմաստասէրք․
և տաց ձեզ լի՛տր մի ոսկի։ Յայն ժամ փոքր
մանկունքն որ կու խաղային անդ․ մինն ինո
ցանէ յառաջ եկեալ և ասէ ցայրն այն․ մի
տար զոսկին դո՛ցա զի դոքա խաբեբայք են․
այլ դու ասա ինձ զերազն քո՝ և ես պատմե

ցից քեզ. և իմաստասէրքն 'ի հեռաստանէ ակնարկէին: Իսկ այրն սկսաւ պատմել այս պէս. տեսի երազի իմում զի ելանէր աղբիւր ջրոյ իմէջ անդաստանի իմում. և յորդեալ յոյժ մինչև ելից զա̃մ անդաստանն ջրով: Ասէ մանուկն գնա 'ի տուն քո. և առ փետատ մի և փորեա զտեղին զայն յորում ելանէր ջուրն. և գտանիցես բազում գանձս: փարթամանաս դու՝ և ազգատոհմն քո ա̃մ: Իսկ նոյն ժամայն փութացեալ այրն. և եկեալ փորեաց զտեղին զայն. և եգիտ բազում գանձս յոյժ. և փարթամացաւ ինքն և ա̃մ ազգատոհմն իւր: Իսկ դարձաւ այրն առ տղայն և տայր նմ̃ լիտր ոսկի վ̃ մեկնելոյ երազին: Իսկ տղայն ոչ էառ զոսկին իձեռն. և ասէ. քաւ լիցի ինձ առնուլ ոսկի իքէն. այլ միայն աղօթեա վ̃ իմ: Տեսեալ զայս իմաստասիրացն որ իմաստութ̃բ մեկնեաց զերազն զայն: Ասեն ցնա. ով սիրելի մանուկ զի՞նչ է անուն քո: Ասէ մանուկն. անունիմ կոչի եէրիլնոս: Ասեն իմաստասէրքն. տեսանեմք որ իմաստութի̃ն քո մեծ է յոյժ. և արդ հարցանեմք քեզ բանմի: Ասէ եէրիլնոս. ասացէք ինձ զպատճառն. և ես տամ ձեզ պատասխանի: Ասեն իմաստասէրքն. թագաւորի մերոյ աչքն կուրացեալէ. եթէ բժշկես զնա մեծ ամեծ պարգևս առնուս իմեզանէ: Ասէ եէրիլնոս. բնաւին չի տեսանէր՝ թէ աչաց ցաւ ունի: Ասեն իմաստասէրքն, ոչ

տուդ պէս․ այլ քանի որ 'ի պալատնէ՝ կու տե
սանէ․ և յորժամ 'ի պալատէն դուրս կու
ելանէ՝ նոյն ժամայն այլ ո՛չ կարէ տեսանել։
Ասէ ցնա Եէրիլինոս․ երթայց և տեսից․ և ա
պա՛ հրամանաւն ա̄յ բժշկեցից։ Ասեն իմաս
տասէրքն․ եկ ընդ մեզ զի տանիմք քեզ առ
թագաւորն․ և ելեալ գնացին իմաստնին առ
կայսրն։ Ասէ ցնա կայսրն․ զի՞նչ արարիք․ և
ես ձեզ ինչ պատուիրեցի։ Ասեն իմաստա
սէրքն․ ահա՛ բերաք բժիշկ մանուկմի՝ որ
կատարէ ըզ կամս քո։ Ասէ կայսրն ցիմաս
տասէրսն․ գիտէք ըստուգիւ որ կատարէ
այդ մանուկդ զկամսիմ։ Ասեն իմաստասէր
քըն․ այո՛ գիտեմք կարողէ, և փորձեալեմք
ճշմ․ իտ զիմաստութի՛ դորա։ Ասէ կայսրն
բարի է զոր ասէքդ․ և դարձաւ կայսրն առ
մանուկն և ասէ․ զի՞նչէ անունքո։ Ասէ մա
նուկն․ անուանիմ կոչի Եէրիլինոս․ որ և ծա
ռայ քոյ է․ Ասէ կայսրն․ կարողես զիս բժշ
կել յախտից իմոց։ Ասէ Եէրիլինոս․ ես ոչ գի
տեմ զցաւն քո․ այլ հրամայէ արքայիմ․ և
ես կարողանամ զօրութեամբն ա̄յ բժշկել զքեզ
Ասէ կայսրն․ իմ նեղութի և ցաւն այնէ․
յորժամ որ կու ելանեմ 'ի պալատէս դուրս՝
ոչ կարեմ տեսանել զլոյս։ Ասէ Եէրիլի
նոս․ հրամայէ ամենեցուն 'ի բաց գնալ։
Եւ հրամայեաց կայսրն ամենեցուն արտա
քս ելանել և փակել զդրունսն։ Ասէ Եէրիլ
նոս․ մոյծ զիս 'ի սենեակն քո յորում նստես

դու 'ի գիշերի. և անդ պատմեցից քեզ թէ
զի՞նչ առնելոցեմ. և իբրև մտին իներքս՝
տեսեալ մանուկն զմահիճս արքային. և հրա
մայեաց ծառայիցն նր̄ փութով հանել 'ի
դուրս զմահիճս արքային. և ասէ ցկայսրն
այժմ տեսանիցես զհրաշս որէ իներքոյ սր̄:
Եւ իբրև հանին զմահիճսն 'ի դուրս՝ տե
սին իներքոյ նր̄ ակն աղբերոյ է՝ յառաջս
բղխեալ և բաժանեալ եռայր: Ասէ մանու
կըն ցկայսրն. տր̄ արքայ. ահա որ չափ աղբիւ
րս իներքոյ մահճի քոյ է գնացիւք իւրովք
ոչ կարես տեսանել զլոյս: Ասէ կայսրն.
տ̄րի հնարիւք մարթէ կորուսանել զաղ
բիւրդ գնացիւքն իւրովք հանդերձ:
Ասէ մանուկն ցկայսրն. տէր իմ արքայ. եթէ
ըստուգիւ կամիս տեսանել զլոյս՝ մինչև ոչ
գլխատես ըզէ̄ իմաստասէրսն քո՝ ոչ կարես
տեսանել զլոյս: Վասն զի նոքա արարին զկա
խարդութիս զայս տն̄ իմոյ արքայի. զի հա
մարձակ իշխեսցեն իվ̄ր երկրի քո. Եւ նոյն
ժամայն հրամայեաց կայսրն սպանանել զնս̄.
որ և 'ի գլխատելըն իսկոյն կորեալ աղբիւրն
գնացիւքն իւրովք: Ասէ մանուկն ցկայսրն.
այժմ ելանեմք դուրս 'ի պալատէս. և տե
սանեմք որ կու տեսանես՝ թէ ոչ: Եւ նոյն
ժամայն կայսրն ետուր զարդարել է̄ ձիս.
և նստաւ մինն արքայն. և միւսն մանուկն.
ելան 'ի դուրս. և տեսանէր արքայն զլոյս
համարձակ. և ուրախացաւ յոյժ. և դարձաւ

 խըն

խնդութե՛ 'ի տուն իւր․ և մեծութի՛ շնոր
հեաց մանկանն ոչ՛ իշխանի միոյ։ Եւ ասէ
թագուհին ցկայսրն․ լուար արքայ և 'ի մտա
ւոր զառակսիմ։ Ասէ կայսրն․ Ճշմարիտ
ասեմ քեզ ո՛վ թագուհի․ լաւ՛ առակ ասա
ցեր։ Ասէ թագուհին․ ծանիր արքայ․ զի
և դպրապետքն որդւո՛յ քո՝ նոյնպէս կամին
առնել քեզ սուտ առակօքն իւրեանց․ և այն
չափ խաբեն զքեզ՝ մինչև ժամ պարապոյ
գտեալ սպանանեն ըզ քեզ․ և թագաւորե
ցուցանեն զորդի քո նզովեալն 'ի տեղի քո։
Եւ նա ոչ կարասցէ թագաւորել․ յայն
ժամ կործանի թագաւորութի՛ն քո․ և ընդ
ունիս դու յանէծս։ Ասէ կայսրն․ ոչ թո
ղից զնո՛ զի առնիցեն ինձ այնպէս․ զի ընդ
լուսանալ առաւօտուն տամ զնա՛ անպատ
ճառ սպանանել։

Չորրորդ անգամ տանելն զորդի արքային ի մահ․ եւ գալ
հասանելն մաշխիօրանն զդպրապետին․ և [illegible] տղայոյն․

Չորրորդ աւուրն նստեալ կայսրն
'ի գահոյսն իւր․ և հրամայեաց զդահ
ճապետն կոչել առ ինքն․ և յորժամ
եկն՝ ասէ ցնա կայսրն․ հան զորդիմ 'ի
բանտէն և տար սպան զնա։ և հեռացո ըզ
գլուխն 'ի մարմնոյն իւ կանգուն։ Նոյնպէս
և թագուհէին յառաջմէ ազդեալ էր դահճա
պետին․ թէ յորժամ տանիցես զորդի ար
քային յսպանումն․ ոչ՛ նմ՛ մահապարտի առ

 նես

նես՝ Նմա այլ՝ այնպէս արասցես։ Իսկ եկեալ
դաՀճապետն եՀան զորդի արքային 'ի բան
տէն. և ետ զձեռսն 'ի յետսն կապել ոտս մա
Հապարտի. և մունետիկ յառաջուցն ձայ
նէր և գնայր ասելով. ով որք որ կամենայ մե
ղանչել ընդ յետնամօրն իւրոյ՝ այսպիսի մա
Հուամբ մեռանի։ Իսկ այսպիսի նախատա
նօք առեալ տանէին 'ի տեղի կատարմանն։
Իսկ յորժամ տանէին զնա տեսեալ ժողո
վրդեանն աղաղակէին մեծաձայն և ասէին
աւաղ աւաղ և ո՜ աւաղ զմիամօր որդի կայ
սերն. որ 'ի զուր տանին սպանանումն։ Իսկ
մինչև դեռ տանէին՝ եՀաս չորրորդում
դպրապետն որում անուննէր մալխիօրախ
սըրընթաց երի վարաւն իւրով։ Տեսեալ
զորդի արքային այնպիսի խեղճ և ողորմելի
որ տանէին իմաՀ։ Յայնժամ բարկացեալ
դպրապետն դաՀճապետին և ասէ. ընդէր
այդպիսի կապերես զորդի արքային. և ե-
տուր արձակել զձեռս նր։ Ասէ դաՀճապե
տին. ով դպտ. Հրաման սաստիկէ թագու
Հւոյն և մեք զինչ արասցուք։ և ժողովուրդ
քըն որ շուրջն կային. ողբալով աղաղակէին
և ասէին. ով բարի դպտ. փութա առ կայ
սըրն. և ազատեա զորդի արքային զաշակերտ
տըն քո. ով և ընկերքն քո ազատեցին։ Իսկ
մանուկն իբր աղերսելով երկիր եպագ վար
ժապետին իւրոյ. ով թէ կամի ասել՝ ազա
տեա զիս իմաՀուանէ։ Ասէ դպրապետն.

դադարեցէք դու 'ի տեղիս այս. մինչ ես եր
թայց առ կայսրն. զի յոյս ունիմ առ ած որ
փրկեմ զդա՛ այսօր 'ի մահուանէ: Իսկ դպրա
պետն մալխիօրախ ընթացեալ եմուտ 'ի պա
լատն. և մեծաւ պատուով ողջունեաց զկայ
սրն: Իսկ խօսի կայսրն բարկութբ և ասէ.
նզովեալ ծեր՝ գտցէ զքեզ չարն վն խաբէ
ութե քո. զոր խաբեցիք զիս: Ասէ դպրա
պետն. տրիմ արքայ. պարգևի ակնունէի
իքէն՝ և ոչ այդպէս բարկանալոյ: և կամ վն
էր խաբեցի զտրն իմ արքայ: Ասէ արքայն.
քան զի ետու որդին իմ իձեզ յըստակ զրուց.
և խօսօղ. արդ՝ ահաւասիկ համրացեալէ:
ևս չարագոյն այնէ՝ փոխանակ իմաստութե
և հանճարոյ՝ որ կամեցաւ բռնադատել և
լլկել զկինն իմ. վն այնմ գործոյ մեռանի
ահա՛ նա՛ այսօր: և դուք ամենեքեան կորի
ցէք ընդ նմ: Ասէ դպրապետն. գիտէ ած
որ ոչ լինի խաբէութի առաջի քո. յա՛յտէ
թէ վն էր ոչ խօսի որդին քո. սակայն խօսե
լոյէ փաղփաղակի. քան զի չէ հասեալ ժամ
նր խօսելոյ. ապա՛ թէ համբերես և ոչ սպա
նանես՝ լսելոցես զխօսսնր: և որ ասացեր թէ
զկինն իմ կամեցաւ բռնադատել. յայդմիկ
ոչէ պատճառ հաւատալ կնոջ. և թէ վն
բանի կնոջ քո սպանանես զորդիդ քո. յեր
կնչիմ թէ պատահեսցէ քեզ այնպէս՝ որպ
պատահեաց ծեր զինուորի միոյ 'ի կնոջէ
իւրմէ: Ասէ կայսրն. ո՞րպ դու չար ծեր. կա

միս առնուլ ընդ իս այնպէս, որպ՟ երբեմն է
իմաստասէրքն արարին ումեմն կայսեր։
Ասէ դպրապետն. տր՟ ոչ կամ իմ ես առնել
քեզ բան չար զինհար. զի թէ մի՛ումն կամ
յոգունք չար առնեն՝ սակայն ոչ ամենե
քեան. զի միայն չարագործութ՟ին՝ զմիւսոյն
բարեգործութ՟ին ոչ ատականէ։ Այլ իւ-
րաքանչ իւր գործ՝ իւր՟ գլխոյ իւրոյ. եթէ
բարի և եթէ չար։ քան զի իմէջ ամ՟ ազգի
գտանի. բարի և չար։ այլ ես զայս ասեմ քեզ.
եթէ վս՟ բանի կնոջ քոյ տացես այսօր սպա
նանել զորդին քո. Պատահեսցէ քեզ չար՝
եթէ ոչ ունկնդիր լինիցիս ինձ. և յետոյ
ապաշաւեսցես՝ այլ ոչ հասանես։ և ես առակա
ւոր խօսիւք հաստատեցից զբանսիմ։ Ասէ
կայսրն. ասա՛ զառակդ թէ որպ՟ եղև։ Ասէ
դպրապետն. ոչ ասեմ և ո՛չ խօսիմ. մինչ
ես պատմեցից զառակս՝ գուցէ զորդին քո
անդ սպանցեն. և զի՞նչ շահ լինիցի ինձ 'ի
պատմութենէս։ Այլ եթէ կամիս լսել զառա
կըս. նախ դարձո՛ զորդին քո 'ի մահուանէ
'ի բանտ. և ես պատմեմ քեզ զառակս. ե-
թէ հաճոյ լիցի քեզ առակս՝ ապրեցոյ զոր
դին քո. և թէ ոչ ըսպան զնա. զի 'ի ձեռ
ռըս քոյ է թէ սպանանես և թէ կեցուցա
նես. Յայնժամ հրամայեաց կայսրն՝
դարձուցանել զորդին իւր 'ի բանտ. մինչ
դպրապետն պատմեսցէ զառակն. և սկս
աւ ասել։

Առակ խորհրդոց ծովակէն · զոր ասաց վս կնոջ միոյ որ կամէր սիրել զերիտասարդն ·

Ի քաղաքի միում կայր զինուոր մի ծեր· արդար և երկիւղած յոյժ· և մեռաւ կին նր· և մնաց բազում ժամանակս այրի· և ոչ կամէր առնուլ կին։ Յետոյ եկեալ սիրելիքն իւր, և բարեկամքն ձեպեցին զնա որ էառ աղջիկ մի ՚ի կնութիւն իւր։ ոչ նախարարքն քո քեզ արարին։ և էր գեղեցիկ յոյժ· զի դստերացն հռոմայեցւոց էր· և այրն սիրէր զնա· և կացեալ ընդ իր եարս ամս երէք և ոչ եղև զաւակ նց։ Եւ յաւուր միում ել կինն և գնաց ՚ի ժամ ա_ռաւօտեան· և պատահեաց նմ մայրն իւր· ողջունեաց զնա և ասէ· դուստրիմ զի տրտմ կեաս· և զի տրտմ է այրն քո ընդ քեզ։ Ասէ դուստրն ցմայրն· ոչէ բարի այրնիմ· զի յոր ժամ ննջեմք՝ ոչ կոճղ անկանի իւր մահ ձին։ և բնաւ ոչ առնում ՚ի նմանէ մխիթարութիւն մարմնական զուգակցութենէն։ Այս այնորիկ կամիմ սիրել զայլս՝ զի կատարեցից զփափաք ցանկութեան իմոյ։ Ասէ մայրն· դուստրիմ մի արասցես զբանսդ զայդ· զի մեղք մեծ է։ Ահա ես և հայր քո բազում ժամանակս բնակիմք և զայդ ոչ գործեմք։ Ասէ դուստրն· մայրիմ՝ ձեզ չէ զարմանք եթէ ոչ գործէք զայդ։ վս զի երկոքեանդ տղայ հասակաւ լցեալէք զպարտս միմեանց։ և ոչ էիք ոչ զայրն իմ զրկեալ յամէ· որ

 կարո

կարողութիւն ես ոչ ունիմ շարժելոյ· այլ նման
փայտի ընկնի 'ի մահիճն· և ննջէ մինչև 'ի
լոյսն· վասն այնորիկ խորհեցայ ես սիրել զայլ
Ասէ մայրն· ասա ինձ զո՞վ կամիս սիրել: Ասէ
դուստրն· զքահանայն եկեղեցւոյս այսորիկ
Ասէ մայրն· վասն էր զքահանայն սիրես և ոչ
զինուորս· կամ զայլ ո՞ք· զի փոքր լինէր
մեղքն: Ասէ դուստրն եթէ զինուորս սիրի
ցեմ, կամ զայլ ո՞ք· վաղվաղակի թողեալ զիս
և խայտառակեսցէ առաջի ամենեցուն· և
լինիմ ամօթ և 'ի նախատինս: բայց քահա
նայն թագուցանէ· վասն զի յայտնել ոչ կարէ·
այլ և հանապազ ընդ իս լինի· և զի՞նչ խնդ
րիցեմ տացէ ինձ: Ասէ մայրն· լուր դուս
տրիմ խրատու իմոյ և բարի լինիցի քեզ· զի
ծերք բարկացօղք և խստասիրտք լինին·
փորձեա՛ զնա՛ մէկ երկու անգամ՝ և արա՛ վն
աս առաջի նորա· եթէ թողցէ քեզ զվնասքն
քո զոր առնիցես· յայնժամ սիրեսցես զո՞վ
ոք և կամիս: Ասէ դուստրն· ոչ կամիմ այդ
չափ երկար համբերել: Ասէ մայրն· համ
բերեա՛ դուստրիմ եթէ կամիս զօրհնութիւն
առնել: Ասէ դուստրն· վասն օրհնութեան քո
տանջեցայց և համբերեցից այլ ևս ժամա
նակմի· բայց ասա՛ ինձ թէ որպէս փորձեցից
զնա՛: Ասէ մայրն· եթէ կայ այնպիսի ծառ
իմէջ դրախտին· որ առաւել սիրէ այր քո
քան զամենայն ծառ, կտրեա՛ զնա՛· և յորժամ գա
լու լինի այր քո 'ի դրսէ՝ ձգեա՛ զայն 'ի փուռն

ի մէջ կրակին· և դիր յաթոռ յանդիման նր̃,
որ այր քո նստի և տեսանէ զնա ի մէջ կրա
կին· և թէ թողու քեզ զվնասն զայն՝ յայն
ժամ սխրեսցես զքահանայն։ Ասէ դուստրն
արարից զայդ տ̃մ· և գնաց 'ի տուն իւր։
Ասէ այրն· վ̃ն էր յուշացար այդ չափ· և
ուրէիր մինչև ցայժմ։ Ասէ կինն· յեկեղե
ցինէի· և յաղօթըս կանէի 'ի դէմ ս̃բ պա
տարագին· և յետոյ խօսէի ը̃ մօր իմոյ։ Ասէ
այրն· և ինձ հաճելի է բանդ այդ որ տ̃մ
առաւօտու երթիցես յեկեղեցին· և խնդրես
ցես զարքայութ̃ի ա̃յ։ Յետ այնորիկ եկեալ
այրն գնաց ը̃ սովորութ̃ե իւրոյ յորս· և
եկեալ կինն ասէ ցայգեգործն· ո՞վ եղբայր
գնա՛ յայգին և կտրեա՛ ծառմի և բեր· զի վա
ռեսցից զփուռս· զի օրս ցուրտ է· և այրս
ցրտացեալ գայ 'ի յորսոյն· վ̃ն այն վառեսցից
ես առաւել զի ջերմասցի։ Իսկ եկեալ այգե
գործն էառ զկացինն և գնաց այգին· և տե
կինն զկնի նր̃· և մտեալ այգին ժողովէր
զխուիւս այս կոյս և յայն կոյս· մինչև եկն 'ի
ծառն այն որ յոյժ սիրէր այրն իւր· և ասէ
ցայգեգործն՝ կտրեա՛ զծառս զայս։ Ասէ այ
գեգործն· ոչ կարեմ կտրել զդա· զի տ̃ր իմ
յոյժ սիրէ ըզ ծառդ զայդ։ և առեալ զկա
ցինն կինն 'ի ձեռանէ այգեգործին· և ինքն
իւր ձեռօքն կտրեաց զծառն զայն· և եբեր
'ի տուն վառելոյ։ Իսկ իբրև երեկոյ եղև·
յորժամ մերձ եղև գալ առն իւրոյ՝ նոյն ժա

մայն վաճառեաց զծառն։ և եկեալ այրն նո՛ր ՚ի
տուն. և կինն ընթացեալ եդ իւր յաթոռ յան-
դիման հրոյն զի ջեռասցի։ Իսկ նստեալ
այրն՝ ջեռնոյր. և նայեցեալ ետես զծառն
սիրեցեալ. որ այրէր ՚ի մէջ հրոյն։ Կոչեաց
զայգէգործն և ասէ. ընդէ՞ր կտրեցեր ըզ-
ծառդ զայդ։ Ասէ այգէգործն. տիկինն
հրամայեաց։ Ասէ կինն. ես արարի և պատ-
րաստեցի զհուրս. զի դու եկեալ ջեռասցիս։
Իսկ այրն խոժոռեալ աչօք հայէր ՚ի կինն և
ասէ. ո՞վ անզգամ և չար կին. վասնէ՞ր արարեր
զայդ։ զի գիտէիր որ ես սիրէի զծառս
զայս՝ և դու կտրեցեր զնա։ և կինն սկսաւ
լալ և ասել. ես վասն բարութեան քո արարի զի
ջեռասցիս դու։ արդ վասն փոխարինի բարու-
թեան անարգես զիս. զայս ասէր և լայր դառ-
նապէս. Ասէ այրն. դադարեա՛ ՚ի լալոյդ.
այժմ թողցի քեզ վնասդ այդ զոր գործե-
ցեր. բայց պատուիրեմ քեզ մի ևս իշխեսցես
առնել միւսանգամ այդպիսի ինչ։ Իսկ ի վա-
ղիւ անդր ել կինն և գնաց յեկեղեցին. և
պատահեաց նմա մայրն իւր. և ողջունեցին
զմիմեանս։ Ասէ դուստրն ցմայրն իւր. փոր-
ձեցի զայրիմ և արարի զոր ինչ պատուիրե-
ցեր ինձ. կտրեցի զծառն զայն և այրեցի. և
այրնիմ ետես զվնասնիմ և բարկացաւ։ Իբրև
ես սկսայ լալ՝ եթող ինձ զվնասնիմ զոր ա-
րարի. և արդ կամիմ սիրել զքահանայն եկե-
ղեցւոյս։ Ասէ մայրն. դուստրիմ միւսան-

գամ և ես փորձեմ. զի ծերք մի անգամ թո
ղուն, և 'ի միւսումն կրկնապատիկ հատու
ցանեն։ Ասէ դուստրն. ոչ կարեմ համբե
րել մայրիմ։ Ասէ մայրն. ով սիրելի դուստ
րիմ. առաջի անգամն համբերեցեր վն օրհ
նութեն իմոյ. և այժմ համբերեա վն օրհնու
թե հօր քոյ։ և միւսանգամ փորձեա զայր
քո. և եթէ այժմ ևս թողցէ և ոչ անարգես
ցէ զքեզ ապա սիրես զքահանայն։ Ասէ դուս
տրն. տանջանք մեծ է ինձ այդ չափ երկար
համբերելն. այլ վն օրհնութեն հօր իմոյ
համբերեցից. և փորձեցից միւսանգամ. բայց
ասա ինձ թէ ոպ փորձեցից։ Ասէ մայրն. գե
տես զի այրն քո սիրէ զփոքրիկ շունն. սպան
զնա առաջի աչաց նորա. և թէ թողցէ զմեղ
սն քո՝ ապա կարողես սիրել զքահանայն.
և զայս ասացեալ գնացին 'ի տունս իւրեանց.
Իսկ իբրև երեկոյ եղև. զարդարեաց կինն
զմահիճս տան իւրոյ. և այր նր նստէր առ
հրոյն և ջեռնոյր. և շունն ոպ սովորեալ էր՝
խաղայր իվր անկողնոյն։ Իսկ յանկարծակի
առեալ կինն զշունն առաջի տն իւրոյ՝ է-
զարկ ընդ դուան յորմն. որ յղեղ գլխոյն հե
ղաւ՝ և սատակեցաւ։ Իսկ տեսեալ այր նր
ասէ. ո՜վ նզովեալդ իմէջ կանանց. և չարդ
իմէջ կենդանեաց. զի՞նչ գործեցեր առաջի
աչաց իմոց։ Ասէ կինն. զի՞նչ որ վն շահու
քո առնեմ և բարեկամութիս ցուցանեմ
քեզ՝ ամ ոչ ինչէ առաջի քո. և հանապազ

 անար

անարգես զիս։ Տեսանես՝ զի զարդարեցի
զմահիճս քո դիպակ անկողնօք. և նա ել ի վր
նց շաղախեալ ոտիւք։ Ասէ այրն. դու ոչ
գիտես զի ես առաւել սիրեմ զշունն քան
զդիպակ անկողինն քո։ Ասէ կինն. զամ ինչ
որ ի վր քո առնեմ զբարութիս՝ ամ ոչ ինչէ
համարեալ առաջի քո. և զայս ասացեալ ըսկը
սաւ լալ և եղուկ տալ անձինն։ Ասէ այրն.
դադարեա՛ ՚ի լալոյդ. և այժմ ես թողից
քեզ զմեղսդ. և մի այլ ևս գործեսցես այդ-
պիսի մեղս ինձ։ Ասէ կինն. յօժարութբ
կատարէի զկամս քո. եթէ գիտէի թէ
զի՞նչ է խորհուրդ սրտի քո։ Նա այրն խօսե-
ցաւ այլ ոչ՝ և ելեալ ննջեաց։ Եւ ի վաղիւն
ելեալ կինն գնաց յեկեղեցին. և եգիտ անդ
ըզ մայրն իւր և ասէ. բարի լոյս քեզ մայրիմ։
Ահա կատարեցի զխօսս քո վս օրհնութե
քո և վս օրհնութե հօր իմոյ. արդ՝ այժմ
սիրեմ զքահանայն. բաւական եղև այս չափ
համբերեցի. աւելի այլ ոչ կարեմ համբե-
րել. զի Գ անգամ փորձեցի զայրնիմ. և յոր
ժամ բարկացաւ ինձ՝ ես սկսայ լալ և նա
նոյն ժամայն եթող զմեղսանիմ։ Ասէ մայրն
գիտացիր դուստրիմ զի ծերք դժուարա-
բնութք լինին. մի և Գ անգամ թողուն. բայց
յետոյ տասնապատիկ խնդրեն զվրէժն.
փորձեա՛ զնա՛ յերրորդ անգամ։ Ասէ դուստ-
րըն. զո՞ւր է ասեղդ քո մայրիմ. այլ ոչ կարեմ
համբերել և լսել քեզ։ Այս չափ ժամանա

կէ որ կայրիմ ես 'ի սէր քահանայէն այնորիկ. և բորբոքի սիրտիմ. և կամ ես 'ի տանջանս. և դու բնաւ ոչ խղճաս ինձ։ Ասէ մայրն. այս միանգամս այլ արա զխօսսիմ և փորձեա զնա. և թէ թողցէ քեզ զմեղանս քո. ապա վկայ լինի դուստրիմ ես ձեռօք իմովք ուխտեցից զքեզ քահանային. և այլ ոչ նեղեցից զքեզ։ Ասէ դուստրն. շատ նեղեցիր զիս մայրիմ. և ես ոչ կարեմ համբերել այդ չափ երկար 'ի սէր քահանային. արդ ասա թէ ոչ փորձեցից զայրնիմ այս անգամ այլ։ Ասէ մայրն. 'ի յայս կիրակէիս առնելցէ այր քո ընդունելութիւն մեծ. և հրաւիրեալ է զինուորակիցս բազումս 'ի ճաշ։ Յոր ժամ եկեսցեն ամենեքեան և նստիցին 'ի ճաշ. եկ և դու նիստ. և պնդեա զդաստառակ սեղանոյն ընդ մէջ քո. և ել յանկարծակի և գնա զի ցրուեսցի սեղանն առաջի բազմականին. և թէ այր քո ոչ խօսիցի և թողցէ քեզ զմեղս զայս և ոչ յառաջնոյն, յայնժամ կարողես սիրել զքահանայն։ և զայս ասացեալ գնացին 'ի տունս իւրեանց։ Իսկ իբրև կիրակի եղև՝ եկին առ նա 'ի ճաշ ամ զինուորակիցքն իւր։ Իսկ իբրև դրին սեղանն և բազմեցան ամենեքեան և բերին զճաշն. եկեալ և կինն բազմեցաւ ընդ նմ 'ի սեղանն և առեալ զդաստառակ սեղանոյն գաղտ 'ի նոցանէ և կապեաց 'ի գօտի իւր։ Իսկ ասէ այրն. ով մոլորամիտ կին՝ մոռացար բերել ըզ դանակսիմ. արդ՝



որով

որով կերայց հաց. և կինն փութով ել զի
բերցէ զդանակն. յայնժամ վերացաւ և
դաստառակն ընդ նմ. և կործանեցաւ սե
ղանն. և ցրուեցաւ կերակուրն. և հեղաւ
գինին. և կթխայքն արծաթէ անկան յեր
կիր: և տեսեալ այր նր բարկացաւ յոյժ.
բայց վն բազմականացն չասաց նմ ինչ: Իսկ
հրամայեաց աղախնեացն դարձեալ կերա
կուր պատրաստել. և ոչ տրտմեցոյց զերես
իւր. և դարձեալ դրին սեղան. և բերին կերա
կուր. կերան և արբին և ուրախացան յոյժ:
Իսկ 'ի վաղիւն անդր ել այր նր և գնաց 'ի շուկ
այն. և եգիտ բժիշկմի. և ասէ ցնա երբ այր՝
գիտես արիւն առնել: Ասէ բժիշկն. այո՛
քաջ գիտեմ. և առեալ զնա եբեր 'ի տուն
իւր. և ասէ ցկինն իւր արի կաց իմէջ՝ զի բե
րի քեզ բժիշկմի որ առցէ 'ի քէն արիւն.
զի բազմացեալ է արիւնդ՝ և խելքդ ցրու
եալ է. թող զի ելցէ արիւնդ 'ի քէն՝ և խելքդ
ժողովի 'ի գլուխդ քո: Ասէ կինն. մինչև
ցայժմ ոչեմ առեալ արիւն. և այժմ ևս ոչ
կամիմ առնուլ: Ասէ այրն. ոչ կամիս գիտել
թէ այս երիցս անգամ զինչ գործեցեր դու
ընդ իս: և բռնութբ կալեալ կապեաց զձե
ռըս նր. և ետուր ծակել զերակս երկոսին
ձեռացն. և արիւնն հեղոյր ոպ զառու. և
այնչափ թող որ մինչև ուշաթափեցաւ
կինն: Իսկ յետ այնորիկ տարեալ եդ իւր
մահճին. և ասէ. կաց իւր մահճիդ մինչև

ստացիս լաւ բնութին. և ելեալ գնաց այրն 'ի յօրս։ Այլ կինն նուաղեալ 'ի զօրութենէ կոչեաց զմինն 'ի յաղախնեացն և ասէ. փութա և գնայ առ մայրնիմ և ասա ցնա որ շուտով եկեսցէ. զի աՀա մեռանիմ։ Այլ գնաց աղախինն և պատմեաց մօրն. և իբրև լուաւ մայրն եկն խնդալով առ նա. իբրև ետես զմայրն և ասէ. ով քաղցր'րին մայր իմ. Հազիւ զեր ծեալեմ 'ի մեռանելոյ. զի բազում արիւն Հեղաւ յինէն։ Ասէ ցնա մայրն. չասացի քեզ թէ ծերք խիստ դժուարաբնութք կու լինին. այժմ կամիս սիրել զքահանայն։ Ասէ դուստրն. սատանայք թող սիրեն զքահանայն, այլ և զամենեսեան. այսուՀետև ոչ զոք սիրեմ բայց միայն զայրնիմ։ Յայնժամ ասէ դպրապետն ցկայսրն. տէրիմ արքայ 'ի միտ առեր և Հաւանեցար զառակսիմ։ Ասէ ցնա կայսրն. իմէջ առակաւոր բանի զոր լուայ՝ այս առաւել Հաճոյ թուեցաւ ինձ. Ո ինզովեալ կինն այն՝ երիս մասս արար առն իւրոյ. և առանց կարծեաց զչորրորդն կատարելոցեր զչար խորհուրդ սրտի իւրոյ. Ասէ ցնա դպրապետն. վս այն ասեմ քեզ զի զգոյշ լինիցիս 'ի կնոջէ քումմէ. զի մի պատաՀեսցէ քեզ խստագոյն քան զնորայն՝ եթէ վս բանի կնոջ քո սպանցես զորդին քո։ Ասէ կայսրն. ամէն ասեմ քեզ ով դպիր. ոչ մեռանի որդինիմ այսօր. երթ 'ի խաղաղութի։ Ասէ դպրապետն շնորՀակալեմ քեզ



տէրիմ

տ՟ր իմ արքայ. որ վս՟ առաւելի իմոյ սիրե
ցուցեր զորդին քո. և օրհնութի՟ իմ անպա
կաս եղիցի ի վերայ քումն. զայս ասացեալ
դպրապետն և գնաց։ Յետ այսր ամի իբրև
լրացաւ Թագուհին ԺԷ այսօր ևս ոչ մեռաւ
որդի արքային. յայնժամ եմուտ 'ի սենեա
կըն իւր. և ժողովեաց զա՟մ զգեղեցկութն
զզգեստս իւր և զա՟մ զպիտոյսն. և հրամայեաց
ծառայից իւրոց համետել զկառս և ըզ
զրաստս զի առ հայր իւր երթիցէ։ Իսկ վե
րակացուացն տեսեալ ծանուցին արքայի
թէ վաղիւն Թագուհին գնալոցէ առ հայրն
իւր։ Իսկ կայսրն լուեալ զայս՝ եմուտ 'ի սե
նեակ Թագուհւոյն և ասէ. ո՞վ սիրելի տե
կինիմ ո՞ւր կամիս գնալ։ Ասէ Թագուհին.
առ հայրն իմ։ Ասէ կայսրն. վս՟ էր։ Ասէ Թա
գուհին. զի բարութբ վայելեցից զկեանն
իմ։ Ասէ ցնա կայսրն. ես կարծէի թէ ոչ
զո՞ք սիրես առաւել քան զիս. արդ՝ ո՞չ կա
տելոյ կամիս և հեռանաս յինէն։ Ասէ Թա
գուհին. Ճշմարիտ է որ քն զա՟մ առաւել կու
սիրեմ զքեզ։ Այլ վս՟ այնորիկ կու հեռա
նամ 'ի քէն. զի մի տեսից զչարչարանօք մա
հըն քո որ առնելոցէ քեզ որդին քո։ զի լաւ
համարիմ զմահն քո 'ի հեռուստ լսել՝ քան
թէ առաջի աչաց իմոց տեսանել։ Այս զի
դու այն քան ունկնդիր լինելոցես դպրապետաց
որդւոյ քո. մինչև պատահեսցէ քեզ այն
պէս՝ որպէս պատահեաց օգդաւիանոսի

 կայսեր

կայսեր․ որ վն ագահութեն իւրոյ կենդան
ւոյն թաղեցին զնա նախարարքն նր լցեալ
ոսկի ընդ կոկորդս նորա։ Ասէ կայսրն․ սի
րելի տիկինիմ պատմեա ինձ թէ ինչ կեր
պիւ եղև։ Ասէ թագուհին․ այլ ես բանից
քոց ոչ հաւատամ և ոչ պատմեմ քեզ առա
կըս․ այլ ՚ի բաց հեռացայց ՚ի քէն։ Ասէ կայս
րըն․ քաւ լիցի քեզ առնել զայդ․ և գնալ
առ հայրն քո․ և զիս առանց թագուհի թո
ղուլ։ Ասէ թագուհին ճշմարիտ պարտէր
որդւոյ քո կորնչիլ ևմի մնալ կենդանի․ թէ
ես թագուհիէի կայսեր․ և դուստր տիե
զերակալ արքայի․ որ այսպիսի նախատեաց
զիս որ աչօք քո տեսեր։ և դու խոստացար
սպանանել զնա և ոչ սպաներ։ Ամ այդմ
իրի ոչ ես հաւատամ այսուհետև խօսից
քոց․ զի ստախօս երևեցար․ և չէ պարտ թա
գաւորաց ստախօս լինել։ Ասէ կայսրն․ ով սի
րելի տիկինիմ։ ամիջ որ տեարքեն՝ պարտէ
ունկնդիր լինել բանից․ և հաւաստեաւ
քննել․ զի մի թիւր գայցէ բանն և ամօթ
մեծ եղիցի․ Արդ որոյ աղաչեմ զքեզ․ պատ
մեսցես ինձ բան ինչ շահաւէտ և օգտա
կար․ ով՝ զի իմէջ բանիցս այսոցիկ կարա
ցից առնել իրաւունս։ Ասէ թագուհին․
պատմեցից քեզ առակմի այլ․ բայց արդ՝
այսուհետև մի ես լուիցես դպրապետաց
քոց․ և սկսաւ ասել այսպէս․

Հինգերրորդ առակ Նագադահայոյն զոր առաց վէճ
օգտակարութեան նոյներն ադահաւբն.

Ի քաղաքի միում կայր հզօր թագաւոր մի. և էր անուն նր օգոստիանոս կայսր և էր նա ինքնակալ՝ որպ եդ ու և էր յոյժ ագահ և ընչասէր. և տմ ունէր որ ինչ կերպիւ զրոյցս առնէին առաջի իւր հաւատայր. որպ դու որ հաճատաս վրժապետաց նզովեալ որդ(ի)յ քո։ Յորոյ ժամանակին արարին քաղաքացիքն հակառակութն. և բազում թագաւորս թշնամի յարուցին ի վր քաղաքին այնմիկ։ Իսկ յաւուրսն այնոսիկ կայր ՚ի քաղաքն այն դպտ մի վիրկիլիոս անուն. որ հռչակեալ էր իմաստութբ և հան ճարով ընդ տմ երկիր. և ս առաւել կախարդական արուեստիւ։ Ի սմանէ խնդրեցին քաղաքացիքն. զի իւրով իմաստութեամբն գտցէ հնարս ինչ՝ որով կարասցեն ը դէմ ունել թշնամեացն։ և նա կախարդական արուեստիւն արար հնարս այսպէս։ Հրամայեաց շինել աշտարակմի. և ի վր աշտարակին քանդակել զտմ ազգաց պատկերս եր կրօքն, որ կայ իմէջ աշխարհիս կերպիւ պատերազմին. և ՚ի միջին արար պատկերմի՝ որ ՚ի ձեռսին իւրում ունէր ոսկի խնձոր մի. և ազգաց պատկերքն որ շուրջ զաշտարականէին՝ ունէին ՚ի ձեռս իւրեանց զանկակս. և իւրաքանչ իւր պատկերք զդէմս այն երկրն ունէին յորում անուն դրոշմեալ էին. և

որ երկիր որ կամէր ապստամբել և՛ հակա
ռակ կալ յայն քաղաքին՝ յայնժամ պատկե
րըն այն որ յանուն նր̃ էր նկարեալ՝ հնչեցու
ցանէր զզանկակն. և զօրքն քաղաքին այնու
նշանաւ գիտէին ինա՛. և հարկանէին զեր
կիրն այն մեծաւ յաղթութբ̃. և այսպիսի
հնարիւք ամ̃ երկիր, ամենևին ոչ իշխէին
ընդ դէմ կալ այն քաղաքին, որ զաշտարակն
այն կանգնեալ էր փիլիսոփայն վիրկիլիոս
պատկերօքն հանդերձ: Յետ այնորիկ այլ
ևս արար հնարս իմաստասէրն վիրկիլիոս.
զի 'ի տեղի մի բացարձակ իմէջ քաղաքին
արար հուր ան̃ շէջ. որ միշտ աղքատք ջեռ
նուին: Նաև առ հրովն արար աղբիւր ջրոյ.
զի աղքատք ըմպեսցեն և լուասցին. Նաև առ
ընթեր նց̃ արար պատկերմի կանգուն. և
գիր իվ̃ նր̃ այսպէս. թէ ո՛ք հարկանէ զիս՝
առից 'ի նմանէ զվրէժ իմ վաղվաղակի: Նաև
պատկերն այն եկաց այնպէս 'ի բազում ժա
մանակս: Յետ այնորիկ եկն դպիրմի. և ըն
թերցաւ զգիրն զայն և ասէ զինչ վրէժ առ
նելոցես դու յինէն. Ես գիտեմ թէ հա
րից և կործանեցից զքեզ՝ գտանեմ իներ
քոյ ոտից քոց գանձս բազումս: Նաև վերացու
ցեալ զձեռն եհար զպատկերն. յորժամ եհար՝
անկաւ պատկերն: Հուրն շիջաւ: Ջուրն
ցամաքեցաւ: և գանձ ոչ գտաւ: Նաև տե
սեալ զայն աղքատացն անիծելով ասեն.
տացէ տր̃ զի նա ինքն կորիցէ՝ որ կորոյս

 զպատ

զպատկերս. և եհան իմէջ զայնպիսի խնդու
թիս մեր: Յետ այնորիկ ժողովեցան 'ի
միասին թագաւորք երեք. որ մեծ նեղու
թիս կրէին 'ի յայն քաղաքէն, յորում աշտա
րակն կայր. և ասեն ոչի բանիւք կարեմք առ
նուլ զվրէժս անտի: Եւ ոմանք ի նոցանէ
ասէին անշահ է մեզ փորձելն. զի որքան
աշտարակն այն կայ պատկերօքն, ոչ ինչ կա
րասցուք առնել: Եւ լուեալ զայս զինուորք
գ̃. և ասեն զի՞նչ կամիք տալ մեզ եթէ կոր
ծանեսցուք զաշտարակն հանդերձ պատ
կերօքն. և դուք կարասջիք պատերազմել
ընդ նմ̃: Ասեն ցնմ̃ թագաւորքն. զինչ որ կա
միցիք տամք ձեզ: Ասեն զինուորքն. յառաջ
մէ տուք մեզ գ̃ ամսան լի ոսկի. և երթիցուք
մեք 'ի քաղաքն այն. և յորժամ կործանես
ցուք զաշտարակն՝ յայնժամ կամք ձեր է՝ զոր
ինչ արժանն է տայք 'ի մեզ: Ասեն թագա
ւորքն. զի՞նչ կամիք անել այն գ̃. ամսան ոս
կին: Ասեն զինուորքն. այս գ̃. ամսան ոսկին
հնարիւք նմ̃ տամք. և ապա կարողանամք կոր
ծանել զաշտարակն զայն: Յայնժամ ետուն
նմ̃ գ̃. ամսան լի ոսկի: Յետ այնորիկ առեալ
զինուորացն զգ̃ ամսան ոսկին. և եկին 'ի քա
ղաքն այն. և ունէր քաղաքն այն գ̃. դուռ.
և թաղեցին գաղտ զամէն մէկ ամսան 'ի մէկ
մէկ դուռն: Յետոյ մտեալ 'ի քաղաքն և
գնացին առ կայսրն. և մեծաւ պատուով ող
ջունեցին զկայսրն: Ասէ ցնոսա կայսրն. յա

 ղագս

ղագս որոյ իրաց եկեալ էք դուք աստ։
Ասեն զինուորքն. տէր արքայ. մեք յերկրէ
հեռաստանէ եմք. և մեք եմք երազատեսք.
և երազն մեր ոչ այլ ինչ ցուցանէ՝ բայց մի-
այն ոսկի և գանձս թաղեալ ի ներքոյ երկրի
գտանեմք։ Եւ լուեալ եմք ըզ համբաւ բա-
րերարութեան քո՝ եկեալ եմք առ քեզ. և
եթէ հաճոյ թուեսցի տեառն մերոյ արքայի
ծառայել մեզ՝ ծառայեսցուք առաջի քո։
Ասէ կայսրն. նախ փորձեմ զձեզ. և եթէ
գտանիցեմ ուղղութիւն 'ի ձեզ՝ պարգևս մե-
ծամեծս առնուցուք յինէն։ Ասեն զինուոր
քըն. պարգևս ոչ խնդրեմք 'ի քէն. այլ մի-
այն զկէս ոսկւոյն որ գտանեմք։ Ասէ կայսրն
բարիէ զոր ասէքդ. և կոչեաց զնոսա ընթրիս.
և յետ ընթրեացն ասեն ցկայսրն. տէր եթէ
կամիս 'ի գիշերիս այս իրիցագոյնն մեր հայ
եսցի երազ. և 'ի վաղիւն պատմեսցուք քեզ։
Ասէ կայսրն՝ գնացէք խաղաղութեամբ տացէ
տէր ձեզ երազ բարի. զի կարասցուք գտանել
գանձս։ Եւ նոքա գնացին ուրախութեամբ յօթև
անս իւրեանց ծաղր առնելով զկայսրն։
Եւ ընդ առաւօտն եկին առ կայսրն. և ասէ
երիցագոյնն 'ի նոցանէ։ Արքայ յաւիտեան
կաց. տեսայ երազ բարի՝ զի ամանմի լի ոսկով
թաղեալ կայ առաջի դրան քաղաքիս. եր
թիցուք անդր. գայցէ և տէրութիւն քո ընդ
մեզ։ Ասէ կայսրն. երթայց և տեսից թէ ճշ
մարիտ իցէ զոր ասէքդ. իբրև եկին 'ի դուռն

 քաղաք

քաղաքին, ասեն զինուորքն ցկայսրն. Հրա
մայեաց տէր զի բրեսցեն զտեղիս զայս. և
յորժամ բրեցին՝ հանին զոսկին զոր ինքեա
նք թաղեալ էին։ զոր տեսեալ կայսրն ուրախ
եղև յոյժ. և ետ նց զկէս ոսկւոյն։ Յայնժամ
ասէ երկրորդն ցկայսրն. տէր իմ արքայ. քոյին
աղօթիւք վաղիւն ես հայեցեմ երազ։ Ասէ
կայսրն. տացէ տէր ած ձեզ երազ բարի։ և
ընդ առաւօտն եկեալ առ կայսրն և ասեն.
երկրորդ դուռն այլ քաղաքիս՝ կայ ամա
նիչ լի՝ ոսկով։ Իսկ ելեալ կայսրն գնացին 'ի
միասին 'ի տեղին այն. և եցոյց կայսերն զտե
ղըն ոսկւոյն։ Իսկ կայսրն հրամայեաց բրել
զտեղին այն. և յորժամ բրեցին՝ նոյն ժա
մայն հանին զոսկին զոր ինքեանք թաղեալ
էին։ Իսկ տեսեալ կայսրն ուրախ եղև յոյժ
և ետ նց զկէս ոսկւոյն։ Յայնժամ ասէ կրսե
րագոյն զինուորն, որ է երրորդն. տէր իմ ար
քայ՝ 'ի գիշերիս այս ես հայեցայց երազ.
Ասէ կայսրն. տացէ ձեզ տէր ած բարի երազ։
և օրհնեալ է ժամն այն որ դուք եկիք աստ.
Իսկ Է առաւօտն եկին առ կայսրն և ասեն.
արքայ յաւիտեան կաց. բազում գանձ կայ
յերկրի քում։ Ասէ արքայն՝ ուր։ Ասեն զի
նուորքն. յերրորդում և 'ի չորրորդում դր
ունքն քաղաքիս՝ կան ամանք լիք ոսկւով.
Ասէ կայսրն. երթիցուք և տեսցուք թէ ճշ
մարիտ է։ Ասեն զինուորքն. այո գայցէ տէր
ութնիդքո ընդ մեզ։ Իսկ իբրև եկին 'ի դու
ռն

ուն երրորդ՝ բերեցին և հանեցին աման լի ոսկւով. Եւ գնացեալ 'ի չորրորդ դուռն. անտի այլ բերեալ հանեցին աման լի ոսկւով։ և ուրախացաւ թագաւորն յոյժ. և ետ նց զկէսն։ Եւ ասէ կայսրն ցնախարարսն իւր ոչ երբէք լուեալ էիմ կամ տեսեալ այր ար դարախոս ո՞ք դոքա։ Եւ նք առեալ զկէս ոսկւոյն գնացին յօթեւանս իւրեանց. և 'ի վաղիւն կոչեաց զնս կայսրն 'ի յընթրիս իւր և մեծարեաց զնս։ Եւ յետ բազում խօսիցն՝ ասեն զինուորքն ցկայսրն. մինչև ցայս վայր տեսաք իւրաքանչիւր ոք զիւր երազ. արդ՝ այժմ կամօքն այ 'ի միասին երազմի հայեսցուք. և 'ի ձեռն երազոյն այնորիկ ունիմք յոյս որ գտանեմք գանձս բազումս։ Ասէ կայսրն. տացէ ձեզ տր ած երազ բարի և շնորհաւոր։ Եւ նոքա ելեալ յերեսաց արքային գնացին ուրախութբ. ծաղր առնելով զկայսրն։ Եւ ընդ առաւօտն եկին առ կայսրն և ասեն ցնա. արքայ յաւիտեան կաց. և աւետիս տն արքային մերոյ։ Ասէ կայսրն. ո՞ր է։ Ասեն զինուորքն. տեսաք երազ կերպիւ նման միմեանց. զի ի ներքոյ հիման այն աշտարակին որում պատկերքն է՝ այն չափ ոսկի կայ որ 'ի գիր և 'ի համարք մտնուլ ան կարէ. և որ չափ գրաստ որ կայ 'ի քաղաքս՝ միանգամայն բառնալ ոչ կարեն։ Ասէ կայսրըն. քաւ լիցի ինձ կործանել զաշտարակն զայն. որ պատկերօքն զգուշացուցանէ զմեզ

 'ի թշ

՚ի թշնամեաց մերոց։ Ասեն զինուորքն․ տէր արքայ՝ երբ գտեր զմեզ սուտս առաջի քո։ Ասէ կայսրն․ ոչ երբէք ասեմ թէ սուտէք․ այլ միշտ արդարախօս և ճշմարիտ։ Ասեն զինուորք տէր արքայ հաւատա մեզ․ և մեք հնարիւք փորձեմք զբոլորս աշտարակին․ և առանց կործանման և վնասու առնեմք զոսկին անտի։ Բայց պարտէ ՚ի գիշերի առնել զայն․ զի մի տեսցեն քաղաքացիքն և ուժգնութբ եկեալ խլն մեր առցեն զոսկին ՚ի ձեռաց մերոց։ Ասէ կայսրն․ բարւէ զոր ասէքդ․ երթայք շնորհիւն այ․ և ես ընդ առաւօտն եկից առ ձեզ։ Եւ նք ուրախութբ գնացին․ և ի մէջ գիշերին սկսան փորել մինչ զի աշտարակն մերձ եղև ՚ի կործանումըն։ Յետ այնորիկ լուցին հուր զաշտարականն․ և ինքեանք փախեան ՚ի քաղաքէն․ և սկսաւ այրել աշտարակն՝ մինչև կործանեցաւ։ Եւ ընդ առաւօտն յորժամ տեսին մեծամեծքն զաշտարակն կործանեալ՝ տրտմեցան յոյժ։ և գնացեալ առ կայսրն ասեն ցնա․ տէր վն էր կործանեցաւ աշտարակս այս․ յորմէ ունէաք զգուշութի ՚ի թշնամեաց։ Ասէ կայսրն․ երեք խաբեբայ արք եկեալ ասին ցիս․ եթէ բազում ոսկի կայ ՚ի ներքոյ հիման աշտարակին․ որ ամ գրաստ քաղաքիս միանգամայն բառնալ ոչ կարեն զհամայնն։ Եւ ուխտեցին ինձ թէ առանց կործանելոյ աշտարակին, հանեմք զոսկին ՚ի ներքուստ իմաստու

թէ մերով: Ասեն ցնա նախարարքն և քաղա
քացիքն. եթէ այդպիսի ցանկութիւն ունիս
ոսկւոյ՝ այժմ կատարեսցուք զցանկութիւն քո
որ կորուսեր վասն այն, զզգուշացուցանողն
մեր 'ի թշնամեաց մերոց: Եւ նոյն ժամայն
յափշտակեցին զկայսրն. կռեցին ընդ կո
կորդն նորա ոսկի. և կենդանւոյն թաղեցին
զնա: Յետ այնորիկ ոչ բազում աւուրց ան
ցելոյ ի վերայ. եկեալ թշնամիքն պատերազմե
ցան ընդ քաղաքին և յաղթեցին նոցա: Յայն
ժամ ասէ թագուհին ցկայսրն. տէր արքայ
'ի միտ առեր զոր ինչ ասացի քեզ: Ասէ կայս
րըն այո՛ ի միտ առի. բայց պատմեա՛ զյետու
թիւն աշտարակին: Ասէ թագուհին. աշտա
րակն այն պատկերօքն՝ անձն և զօրութիւն
քոյ է. որ ոչ ոք կարէ 'ի թշնամեացն քոց
առնել քեզ վնաս: Տեսանես զնզովեալ որ
դւոյ քո զդպրապետքն. որ խորհին կործա
նել զքեզ 'ի ձեռն սուտ առակացն իւրեանց
որ պատմեն քեզ: Եւ դու մեծաւ ունկն
դրութեամբ լսես նոցա. որ սկսեալեն բերել շուրջ
զաշտարակաւն մարմնոյ քո: Եւ յորժամ
տեսանիցեն զքեզ ան զգուշ այնժամ
սպանեալ կործանիցեն զքեզ: Ասէ կայսրն.
ո՞վ թագուհի լաւ առակ ասացեր ինձ. այ
սու հետև ոչ կարեն կործանել զիս ոմն զաշ
տարակն զայն. վասն որոյ աշխատանաց այսօր
մեռանիցեն նոքա: Ասէ թագուհին. եթէ
այդպէս արասցես՝ իմաստութիւն առնես. և
կացցես դու երկար 'ի կեանս բարի և հզօր
եղիցիս:

Ի վաղիւն եկեալ կայսրն և նստաւ 'ի գա
հոյսն իւր. և խնդրեաց կոչեաց զդահճա
պետն և ասէ. հան զորդին իմ 'ի բան
տէն. և տուր ժամոյն տար սպան զնա
առանց պատճառանաց։ Եւ եկեալ դահ
ճապետն եհան զորդին արքային 'ի բանտէն
և հրամայեաց կապել զձեռսն 'ի յետս նր։
Եւ մունետիկն ընդ առաջն ձայնէր և
գնայր ասելով. եթէ որք մեղանչել կամի ընդ
յետանդորն՝ այսպիսի մահուամբ մեռանի։
Եւ յորժամ լուան ժողովուրդքն եթէ այ
սօր եւս մատանեցաւ որդի արքային 'ի մահ.
սկսան լալ. և ողբալով ասէին ոհ ոհ ա
ւաղ և է աւաղ որ զուր կու գնայ 'ի մահ։
Եւ մինչ գեռ տանէին. եհաս հինգերորդ
դպրապետն որում անուն էր յովսեփոս՝
որընթաց երիվարաւն։ Եւ տեսեալ զորդին
արքային այնպիսի խեղճ և ողորմելի. սաս
տեաց դահճապետին և ասէ. ընդէր այդ
պէս կապեցէք զորդին արքային. և եւտուր
արձակել զնա։ Եւ որդին արքային տեսեալ
զվարժապետն իւր նրկիր եպագ նմ. իբր
թէ կամի ասել յիշեա՛ զիս առաջի հօր իմոյ.
զի աՀա՛ կու գնամ 'ի մահ. Եւ ժողովուրդ
քըն առաւել ևս աղաչէին զդպրապետն զի
շուտով երթիցէ առ կայսրն և աղաչեսցէ
զորդին արքային։ Եւ դպրապետն դահճա

 պետին

պետին. կաց դու այսր և մի շտապիր սպա
նանել զդա՛. զի յոյս ունիմ առ Ած որ այսօր
ապրեցուցանեմ զդա՛։ Եւ զայս ասացեալ
գնաց 'ի պաղատն. և եմուտ առ կայսրն. և
հեզութբ ողջունեաց զնա՛։ Ասէ կայսրն. տա
ցէ Ած քեզ չարիք զի ունիցիս ընկերօքդ
հանդերձ. որ կարծէք նենգել զիս ոպ այն
երէք զինուորքն նենգեցին ումեմն կայսեր.
և կործանեցին զաշտարակն պատկերօքն։
Ասէ դպրապետն. Տր իմ արքայ. նք ոպ նենգ
եցին ես ոչ գիտեմ. այլ զայս գիտեմ որ
քոյ թագաւորութեդ ես ոչ եմ ծառայեալ.
այնպէս զոր դու կարծես։ Ասէ կայսրն. այ
ան 'իմաստ՝ ետու զորդինիմ 'ի ձեզ յըստակ
և լաւ զրուցող. ուսուցանել զիմաստութն
հանճարն. փոխանակ իմաստութե յաւել
չարիս իսկ և զայս՝ որ կամեցաւ բռնադա
տել և լլկել զկինն իմ։ Ասէ դպրապետն. խօ
սիլն որդւո՛յ քո 'ի ձեռն իւրէ. թէ խօսի և
թէ լռէ. բայց լսելոցես զձայնն յետ երից
աւուրց եթէ մնասցէ կենդանի։ Եւ որ ասա
ցեր թէ կամեցաւ բռնադատել զկինն իմ.
այդմ ես ոչ հաւատամ. և միտքիմ ոչ վկայէ.
և կին իմաստուն այդպիսի բան ոչ խօսի. զի
որդեակն քո իմաստուն գոլով այդպիսի ան
պատեհ բան գործէ՝ քաւ լիցի 'ի նմանէ։
Այլ զայս ասեմ քեզ. եթէ տացես սպանա
նել զորդեակն քո վն բանի կնոջ քո՝ դառ
նագոյն պատահեացէ քեզ՝ քան որ պատա

հեաց բոքրատեսի ընդ կալենոսի թուղթն
իւրոյ. որ ՚ի պղիտոյական ժամուն եղև վրէժ
խնդր̃ բոքրատեսի։ Ասէ կայսրն. զայդ ես և
կամէի լսել վս̃ բոքրատեսի թէ ո՞վ եղև։
Ասէ դպրապետն եթէ կամիս լսել զբոքրա
տեսի առակն, դարձոյ զորդին քո ՚ի բանտ.
և ես պատմեցից զբանսիմ։ յայնժամ խղճ
մտանք քո արասցէ դատ՝ թէ սպանանե՞լ ը
ցես թէ ոչ։ Ապա հրամայեաց կայսրն. դար
ձուցանել զորդին իւր ՚ի բանտ. մինչև պատ
մեսցէ դպրապետն զառակն։ և սկսաւ
դպրապետն ասել այսպէս։

Առակ հինգերորդ փլ̃սոփին. զոր տայ վս̃ բոքրա
տեսի բժշկին. և կալենոսի ծառային նորա։

Ի քաղաքի միում կայր ոմն իմաստասէր.
որ էր անուանի յոյժ. որում անուն
էր բոքրատես և էր ճարտար բժիշկ
որ և էանց զամենեքումբք արուեստ
իւն իւրով։ Եւ ունէր թոռնմի. որում ան
ունն էր կալենաս. և յոյժ սիրէր զնա։ Եւ
կալենոսն այն յոյժ սրամիտ էր. և հանապազ
կասկած էր արուեստին զի կարասցէ ուսա
նիլ ՚ի պապուն իւրմէ։ Եւ բոքրատես զջանն
նր̃ տեսեալ՝ թագուցանէր ՚ի նմանէ զարու
եստն. զի երկնչէր ՚ի սրութն̃ մտացն̃. թէ
ուսանիցի զարուեստն բժշկութն՝ և անցցէ
զնովաւ ուսմամբն իւրով։ Եւ կալենոս ճա
նեաւ զկամս պապուն իւրոյ. և առանձինն

ջան եդեալ ուսաւ զնմ. և եղև կատարեալ
բժիշկ։ և հայեր բոքրատեսի որ ոչ համոյա
նայր ինքն նմ. ՚Ի ժամանակին այնմիկ Թա
գաւորն մաձարաց. առաքեաց հրեշտակս
առ բոքրատէս՝ զի եկեսցէ առնա և բժշ
կեսցէ զորդի իւր։ Իսկ բոքրատէս ոչ կա
մեցաւ գնալ պատճառելով զծերութին.
այլ գրեաց Թուղթ և առաքեաց զԹոռն
իւր զկալենոս փոխանակ իւր. զի գիտէր
զնա կատարեալ արուեստին բժշկութե.
որ բժշկեսցէ զորդի արքային։ Կամ Թէ
ոչ կարասցէ բժշկել՝ սպանցի անդ։ Որ և
ուղևորեցաւ կալենոս՝ և գնաց յերկիրն
մաձարաց. և մտեալ առ Թագաւորն՝ և մե
ծաւ պատուով ողջունեաց զնա։ Եւ Թա
գաւորն բազում հարկիս արար կալենոսի.
բայց սքանչացաւ վն ոչ երԹալոյն բոքրա
տէսի։ և կալենոս պատասխանի ետ և ասէ.
ծերէ և բան ծանր կայ իվր. վն այն ոչ կա
րաց գալ։ Ի յլ փոխանակ իւր՝ առաքեաց
զիս. և ես շնորհիւն այ բժշկեցից զորդի
քո. և հաճոյ եղև պատասխանին կալենոսի։
Եւ եմուտ կալենոս առ որդի արքային. և
իբրև ետես զգոյ նր. ասէ ցԹագաւորն և
ցԹագուհին։ պիտոյէ զի տեսից զերկոցուն
ցրդ այլ զջուր. զի ես լաւագոյն կարացից
ճանաչել զպատճառ հիւանդութեման
կանս. և Թագուհին խոստացաւ առնել
զայն ՚ի վաղիւն։ Եւ իբրև ետես զջուր եր

կոցունցն. ասէ կալէնոս ցԹագուհին. հրա
մայեա՛ աղախնեացդ արտաքս ելանել. և
ունիմ բան ծածուկ ասել քեզ. և արար
Թագուհին վաղվաղակի։ Ասէ կալէնոս. ո՞վ
Թագուհի աղաչեմ զքեզ, արդ՝ ասա ինձ
զճշմարիտն. ո՞վ է հայր մանկանս այսորիկ։
Ասէ Թագուհին. հայր դորա տէր իմ արքայ է
Ասէ կալէնոս. ոչ է արքայն հայր մանկանս։
Ասէ Թագուհին. եթէ գիտենայի զայդ ու-
րիշ որտե ասացեալ՝ գլուխ քո 'ի քէն հա
տեալ լինէր։ Ասէ կալէնոս. ես զճշմարիտն
կասեմ զի ոչ է Թագաւորն հայր սորա։ բայց
ես եկեալեմ աստ՝ զի պարգևօք պատուիցիմ.
և ոչ գլխատիցիմ. եթէ ես աստ ունիմ գլխա
տիլ՝ յանձն առնեմ զքեզ այ ու գնամ. և դուք
դտէք ձեզի այլ բժիշկ։ Լուեալ Թագու-
հւոյն զայս և ասէ. ո՞վ սիրելի բժիշկ մի գնար.
զի ունիմ 'ի քեզ պատմել ըզ ծածուկ խոր
հուրդ իմ. բայց զիս մի խայտառակեսցես։
Ասէ կալէնոս. քա՛ւ լիցի ո՞վ Թագուհի [illegible]
խայտառակեմ զքեզ։ Ասէ Թագուհին. 'ի
ժամանակի միում պորտոնկացոց Թագա
ւորին դեսպանն եկն առ մեզ. և յազդմանէ
չարին 'ի նմանէ յղացայ զմանուկս զայս։ Ասէ
կալէնոս. ճշմարիտ զոր ասեսդ. մի երկն
չիր այսուհետև. կամօքն այ բժշկեցից զոր
դին քո։ Յայնժամ ետ մանկանն ուտել միս
ցլու՝ և ջուր ըմպելոյ. և ողջացաւ մանուկն
Նա և իբրև ետես Թագաւորն զորդին իւր

ողջացեալ. յայնժամ խիլաթեաց զբժիշկն
և ևս առաւել թագուհին խիլաթեաց զնա՛։
Իսկ կալէնոս գաղտ պատուիրեաց թագուհ
ւոյն. թէ ուզես որ մանուկն հանապազ
առողջ մնայ մի՛ս ցլոյ կերցուր և ջուր ըմպե
լոյ տուր։ զի այլ կերակուր չէ պարտ դորա՛
ուտել։ Իսկ կալէնոս ողջունեալ զթագա
ւորն և զթագուհին. ել ՚ի ճանապարհ և եկն
առ բուքրատէս պապն իւր։ Իսկ բուքրատէս
համբուրեաց զկալէնոսն և ասէ. ողջացու
ցեր զմանուկն. Ասէ կալէնոս. այո՛ ողջացու
ցի։ Ասէ բուքրատէս. ինչ ցաւ ունէր։ Ասէ
կալէնոս. ես ըզ ցաւն ոչ գիտեմ. այլ ետու
նմ կերակուր՝ միս ցլու. և ջուր ՚ի յարբումն։
Ասէ բուքրատէս. մի թէ բուզէր մայր նորա.
Ասէ կալէնոս. այո՛։ Յայնժամ բուքրատէս
նախանձեցաւ կալէնոսի և ասէ ընդ միտս
իւր. եթէ սա՛ մնայ կենդանի՝ իմ անունն
կորընչի։ արդ՝ պարտէ սմա՛ կորընչիլ՝ և մի՛
ինձ։ և յանմօրէ խորհէր սպանանել զնա՛։
Եւ յաւուր միում կամեցաւ գնալ ՚ի պար
տէզն իւր բուքրատէս վն ծաղկանց. և կո
չեաց զկալէնոս և ասէ. սիրելի որդեակիմ,
եկ երթիցուք ՚ի պարտէզն ժողովել զծաղ
կունս։ Ասէ կալէնոս. ահաւասիկեմ հայրիմ
և ելեալ գնացին երկոքեանն ՚ի միասին. և
իբրև մտին ՚ի պարտէզն՝ ասէ բուքրատէս.
հոտ ծաղկի իմանաս լաւ և զօրաւոր. խո
նարհեաց և կտրեաց զնա՛ ՚ի գետնոյ. և կալէ

նոս արար այնպէս ։ Եւ իբրև գնացին ևս 'ի
ներքսագոյն պարտէզն՝ տես բոքրատէս .
կայ այս ինչ ծաղկի հոտ որ գոյնն ընդ ոս
կեոյէ . որոնեալ գիտ զնա զի բազում իրաց
պիտոյէ ։ Եւ կալինոս գտեալ՝ և խոնարհե
ցաւ զի հատցէ զծաղիկն , Իսկ բոքրատէս
հանեալ զնետն 'իյետուստ կողմանէն ե հար
կալինոսի . որ եմուտ մինչև 'ի սիրտն . և նոյն
ժամայն մեռաւ 'ի տեղւոջն յայն միկ ։ Եւ
յետ ոչ բազում աւուրց՝ հիւանդացաւ բոք
րատէս մինչև 'ի մահ . և էր փորացաւ . և
ոչ ջուր հեղոյր յորովայնէ նր . և անկեալ
դնէր 'ի մահիճս . և ոչ կարէր բժշկել զին
քըն ։ Եւ լուեալ աշակերտացն նր՝ եկին առ
բոքրատէս զի օգնեսցեն վարժապետին իւ
րեանց և ոչ կարացին օգնել ինչ ։ Ասէ բոք
րատէս աշակերտացն իւրոց . բերէք ինձ ա
ման լի' ջրով՝ և բերին . և ասէ՝ ածէք իներ
քըս այս ինչ ծաղկանց զոր ասացից ձեզ . և
նք լցին ։ և ասէ ծակեցէք զամանն և արա
րէք մինչև ճ ծակս զի հեղցի ջուրն ։ և արա
րին այնպէս՝ և ոչ հեղաւ ջուրն ։ և ասէ
բոքրատէս . ահա որդեակ քիմ վրէժն այ
եհաս ինձ որ յայտնի տեսանէք . զի է ճ
ծակս լայն և ընդ արձակ . և վն զօրութեց
ծաղկանցն որ 'իներքս կայ չթողուն որ կաթ
մի ջուր ելանէ ։ Որդ՝ ես ոչ եթէ միայն
զայդ ծաղկունսդ՝ այլ ևս 'ի բազում ծաղ
կանց արբեալեմ դեղ յաղագս փարատելոյ


ցաւս

զցաւս իմ։ և դուք ամենեքեան ես աշխա
տեալ ոչ կարացիք բժշկել զիս 'ի ցաւէս։
Սիրելի թոռնիմ կալենոս զոր սպաններ՝ եթէ
էր նա կենդանի յոյժ բարի լինէր ինձ. և
առողջացուցանէր զիս. աՀա վրէժն այդ է,
որ եկն 'ի վ(ե)ր իմ. և զայս ասացեալ դարձոյց
զերեսս իւր 'ի յորմն. և եՀան զՀոգին։ Ասէ
դպիրն ցկայսրն. տէր 'ի միտ առեր զասացեալ
իմ։ Ասէ կայսրն. այո լաւ 'ի միտ առի։ Ասէ
դպրապետն. ինչ լաւ էր եթէ կալենոս կեն
դանի մնացեալ էր. Ասէ կայսրն. ապաքէն
յոյժ բարի լինելոց էր. զի կալենոս թէ կեն
դանի լինէր՝ բուքրատէս դեռ ևս ոչ մեռա
նէր։ Նա արդար դատաստանին այդ՝ սպեղա
նիքն ոչ եղեն օգնական և ոչ կարացին աշա
կերտքն փրկել զնա 'ի Հիւանդութենէն։
Ասէ դպրապետն. յաղագս որոյ ասեմ քեզ
արքայ. զի խստագոյնս պատաՀեաց քեզ՝
եթէ մի բանի կնոջ քո սպանցես զիմաստուն
որդին քո. որ 'ի դէպ ժամու օգնելոց է քեզ։
Ասէ կայսրն. ամէն ասեմ քեզ, ոչ մեռա
նի այսօր որդին իմ։ Ասէ դպրապետն. եթէ
զայդ արասցես՝ բարի լինելոց է քեզ. որ մի
առակի իմոյ ապրեցուցեր զորդին քո. և ես
շնորՀակալեմ քեզ. և օրՀնութիւն իմ անպա
կաս եղիցի 'ի քեզ անէ. զայս ասաց դպիրն և
ողջունեալ զկայսրն գնաց։ Իբրև լուաւ
թագուՀին թէ այսօր ևս ոչ սպանաւ որդի
արքային. իսկոյն պատուաստեաց զպատմուճան



իւր

խոր ճչելով. և դժգոհալով զարքայէ ասէ.
վա՜յ է ինձ որ եկեալ եղէ ես ՚ի սահմանս այս.
և թէ ո՞ւր է թագաւորութի ՚ի տան հօր իմոյ.
և ես աստ միայն կամ ՚ի տրտմութիս և ՚ի նա
խատինս : Եւ լուեալ կայսրն զաղաղակ թա
գուհւոյն՝ եմուտ առ նա և ասէ. սիրելի տի
կին իմ պատճառն ինչ է, որ այդ չափ տրտ
մեցուցերես զանձն քո. և ոչ դադարես ՚ի լա
լոյդ : Ասէ թագուհին. զի՞ արդ կարացից
լռել. զի անուանիմ դուստր թագաւորի և
կին կայսեր : և կրեցի այս.քան նախատինս
իներքոյ ձեռաց.քոց. և աղաղակեցի առ քեզ
այս.քան՝ և դու ընաւ ինձ ոչ խղճացեր :
Ասէ կայսրն. վա՞յ էր ասես զայդ. և ինչ պա
կասէ քեզ. Ասէ թագուհին. մի թէ ոչ գի
տես որ ինչ արար ինձ նզովեալ որդին քո.
և դու աչօքդ.քո տեսեր՝ որ և վկայ պիտոյ
չէ : և զի խոստացար ինձ և հաստատացուցեր
զիս թէ կորուսանեմ զնա. և ես ոչ կարացի
ընդունիլ զայդ առ ՚ի քէն. զի առնէիր ըզ
կամս իմ : Ասէ կայսրն. ա՜յ թագուհի ոչ գի
տեմ ես թէ զի՞նչ արարից. շաբաթ մի է
որ դու ջանաս սպանանել զորդին իմ. և
դիմոքն ջանան ապրեցուցանել զնա : և ես ոչ
գիտեմ թէ յո՞ր կողմն դասիմ. և ո՞րն է ՚ի
ձէնջ ճշմարիտն ես ոչ կարացի իմանալ :
Ասէ թագուհին. դու առաւել հաւատաս
դպրապետաց.քոց՝.քան ինձ : բայց պատահես
ցէ.քեզ այնպէս՝ որպ՜ պատահեաց թագաւորի

 ումեմն

ումն մի. յիշխանէ իւրմէ որ էր սենեկապետ
նր: Ասէ կայսրն. աղաչեմ զքեզ ով Թագու-
հի. պատմեա ինձ զառակդ զայդ: զի և ես
կարացից շահիլ բան 'ի քեզանէ. և Թէ հա
ճանիմ առակիդ՝ առ ժամայն տամ սպանա
նել զնա: Ասէ Թագուհին. զոր ինչ առնեմ
ես ըստ կամաց քոց բայց դու զիմ կամ ոչ
երբէք հաճեցուցանես. բայց աղաչեմ զքեզ
զի լաւ հայեսցիս զխօսս իմ. և այլ մի ունկն
դիր լինիցիս դպրապետացն որդւոյ քո.
և սկսաւ ասել:

Ասէ երկրորդ առակ Թագուհոյն զոր տայց վն Ջրգո-
ղեալ Թագաւորին. և վն սենեկապետի նորա կնոջ.

Ի քաղաքի միում կայր Թագաւոր ոմն
Ջրգողեալ և անմաքուր. և կանայքն
ոչ կամէին գնալ առ նա. այլ արհամար
հէին զնա: Իսկ Թագաւորն այն խոր
հեցաւ առնուլ 'ի հռոմայ՝ բռնութե զմար
մինքն սրբոց առաքելոցն պետրոսի և պօղո
սի վն բժշկութե իւրոյ: Իսկ յորժամ եղ 'ի
ճանապարհ և եկն 'ի քաղաք մի. կոչեաց զսե
նեկապետն իւր որ յոյժ պատուական էր նմա և
ասէ: Ով սիրելի իմ սենեկապետ. 'ի քէնէ
բան մի խնդրեցից ոչ գիտեմ Թէ կարողես
կատարել: Ասէ սենեկապետն. հրամայեա
տր իմ արքայ և ես առ. ժամայն կատարեցից
Ասէ արքայն. խնդրեմ կին մի գեղեցիկ ընդ
որում ես ննջեցից 'ի գիշերիս: Ասէ սենեկա

պետն. Տ͞ր՝ կանայք Տ͞մ գիտեն զի Ջրգո
ղեալ և ուռուցեալես դու. վ͞ս այն ոչ կա
մին գալ առ քեզ. եթէ ոչ տացես մեծա
մեծ պարգևս: Ասէ թագաւորն. մի թէ ոչ
իցէ իմ մեծութ͞ե. խնդրեսցէ կինն այն զինչ
և կամեսցի. և ես տացնմ մինչև ͞ռ դահեկա
նս: Իսկ սենեկապետն այն էր ագահ և ար
ծաթասէր. եղեալ յերեսաց արքային՝ եկն
առ կինն իւր և ասէ. տիկինիմ սիրելի այժմ
'ի ձեռս քոյէ հաճոյն քո և կամք. եթէ կա
մեսցիս 'ի գիշերիս այսմիկ՝ առնուցուս ͞ռ
դահեկանս: զի կիննէր գեղեցիկ յոյժ: Ասէ
կինն պատմեա ինձ թէ ո՞վ է իրօք. ասէ
այրն. Տ͞րն իմ արքայ խնդրէ կին մի ունել առ
իւր 'ի գիշերիս. և զի գիտես դու որ ան մաք
ուրէ. և կանայք ոչ կամին գնալ առ նա:
և ինձ խոստացաւ տալ ͞ռ դահեկանս. վ͞սյ
սիրելի իմ տարայց զքեզ 'ի մահիճ ն͞ր 'ի գի
շերիս. և ընդ առաւօտն եղեալ գայցես. և մի
գիշերի շահիս հազար դահեկանս: Ասէ
կինն. և թէպէտ չիցէր Ջրգողեալ. այլ մա
քուր ես իցէ. քա՞ւ լիցի ինձ գործել զայդ
առաջի Ա͞յ. և անկանիլ 'ի մեղս մեծամեծս:
Ասէ այրն. յերդնում յա͞ծ՝ եթէ ոչ արաս
ցես զկամսիմ՝ ոչ ունիս յինէն բարութ͞ի
զա͞մ աւուրս կենաց իմոց: Իսկ կինն լուեալ
զայս երկեաւ յոյժ. և առ ահուն՝ խոստա
ցաւ նմ զանձն իւր յակամայ կամօք: Իսկ
եկեալ սենեկապետն առ թագաւորն և ասէ

տէր կալայ կինամ 'ի վարձու գեղեցիկ յոյժ.
և կամի զի տացես ՃԾ դահեկանս. այլ և ոչ
կամի գալ 'ի ցերեկի. այլ 'ի գիշերի կամի գալ.
և ըստ առաւօտն կանուխ կամի գնալ զի մի
ոք գիտասցէ զնա: Ասէ ցնա թագաւորն.
խիստ բարի: Եւ խորքն երեկոյ եղև. եբեր
սենեկապետն զկինն իւր 'ի մահիճս թագա
ւորին. և փակեաց զդրունսն էլ և գնաց:
Եւ մտեալ թագաւորն առ նմա 'ի մահիճն՝
զարմանս ետես 'ի նմանէ: Եւ 'ի հաւախօսին
եկեալ սենեկապետն առ թագաւորն և ասէ
տէր արքայ՝ լոյսն մերձ է. թէ արձակես իր
զկինն, և տայիր Ռ դահեկանն որ ելանէր
լաւ է. զի մի ոք 'ի մարդկանէ տեսանիցէ
զնա: Ասէ թագաւորն. ամէն ասեմ քեզ զի
դեռ ևս ոչ ելանիցէ կինս աստի. վն զի յոյժ
հաճոյ եղև ինձ: Եւ լուեալ զայս սենեկա
պետն՝ տրտմեցաւ յոյժ. էանց պահ մի՝ և
դարձեալ եկն առ թագաւորն և ասէ. տէր
արքայ սկսեալ է լոյսն արձակեա զդա: Ասէ
թագաւորն, ոչ արձակեմ. ել դու ար
տաքս և փակեա զդուռդ: Եւ սենեկապետն
ել և գնաց տրտում յոյժ. թուէր թէ շունք
ևս խածատեցին զնոքն. և կսկծեալ շրջէր
աստ և անդ մինչև ծագեաց լոյսն արեգա
կանն: և դարձեալ երրորդ անգամ եմուտ
առ թագաւորն և ասէ. տէր՛ արքայ լոյս է.
և կինն ամօթի հարիցի եթէ ոք տեսցէ զնա.
փութով արձակեա զդա: Ասէ թագաւորն

ոչ արժանի եմ փութով։ Եւ լուեալ սենեկա-
պետն զխօսս արքային՝ այլ ոչ եւս կարաց ժու-
ժել եւ ասէ. տէր՝ արժանկեա զդա զի կին իմ է։
Յորժամ լուաւ թագաւորն՝ ասէ. բաց
զպատուհանն զի տեսից զոր ասեսդ. եւ նա
եբաց զպատուհանն. եւ տեսեալ թագաւո-
րըն զի կինն նր էր։ Եւ ասէ. ո՛վ նզովեալ այր
վն սակաւ ինչ փողու խայտառակեցեր զկին
քո. եւ բերեր առ իս առանց գիտութ̃ն. փու-
թով եւեթ յերկրէ իմմէ որ ի ներքոյ տրութ̃ե
իմոյ է։ Եւ թէ այսօր ոչ ելանիցես՝ չարաչար
մահուամբ մեռանիցիս։ Եւ փախեաւ սե-
նեկապետն յերեսաց արքային. եւ այլ ոչ եր-
եւեցաւ առաջի նր։ Յետ այնորիկ թագաւո-
րըն չու արարեալ գնաց ՚ի Հռոմ. եւ պաշարեալ
պահէր զնա ՚ի բազում աւուրս. մինչեւ Հռո-
մայեցիքն կամեցան տալ նմ զոսկերաց սրբոց
առաքելոցն պետրոսի եւ պօղոսի։ Եւ էին
յայնմ ժամանակի ՚ի Հռոմ իմաստասէրք է̃.
ոմն եւ քոյդ. որ իմաստութ̃բ իւրեանց զամ
քաղաքն ՚ի ձեռս իւն ունէին։ Յայնժամ եկին
Հռոմայեցիքն առ իմաստասէրսն եւ ասեն.
զի՞նչ արասցուք, զի քաղաքս ի մէջ մեծ նե-
ղութ̃ե է. եւ ցուցանէ թէ՝ կամ տացուք՝ ըզ
քաղաքս. կամ զմարմինն սր առաքելոցն։ Ասէ
առաջին դպրապետն. ես պահեմ զքաղաքս
եւ զմարմին սրբոցն օր մի. որ ոչ մատնի ՚ի ձե-
ռըս նր։ Եւ ամ̃ դպրապետքն կարգաւ զայս
ասացին. Այլ եւ քո որդ̃ոյ դպրապետքն խոս-
տացեա

տացեալէն որդւոյ քո այսպէս: Եւ իբրև
Թագաւորն սկսաւ արտաքուստ ճակատել
ընդ քաղաքին՝ յայնմ ժամու ել առաջին
դպրապետն ՚ի քաղաքէն ՚ի դուրս. և սկսաւ
իմաստութեամբ խօսել ընդ Թագաւորին. մինչև
դադարեցոյց ըզԹագաւորն ՚ի պատերազ
մելոյ ընդ քաղաքին: Եւ այսպէս ա̃մ իմաս
տասէրքն կարգաւ զնոյն արարին. մինչև
եկն կարգն ՚ի յետին դպրապետն: Իսկ յեօթ
ներորդումն աւուրն եկին ա̃մ քաղաքացիքն
առ է ումն դպրապետն և ասեն. ո̃վ սիրելի
դպրապետ. արդ՝ Թագաւորն երդուաւ
զի ՚ի վաղիւն ունիցի զքաղաքս. և եթէ ունի
ցի՝ մեք ամենեքեանս մեռանիմք. ա̃րդ՝ ապրե
ցո զմեզ ո̃պ և ընկերակիցքն քո արարին: Ասէ
դպրապետն. մի վախէք. զի վաղիւն գործ
մի գործեմ ես՝ որ փախիցէ Թագաւորն ա̃մ
զօրօքն իւրովք: Եւ ՚ի վաղիւն իբրև սկսաւ
Թ̃գւորն տալ պատերազմ ը̃ քաղաքին՝ զգե
ցաւ դ̃պտն ազգ մի հանդերձ, որ պէսպէս
Թռչնոց փետրով յօրինեալ էր. սիրամարգի
արծուոյ, ջայլամու և այլ Թռչնոց: և էառ բ̃
սուրս փայլուն բ̃ ձեռս իւր. և ել ՚ի բարձր աշ
տարակին միայն յանդիման Թագաւորին. և
աստ և անդր շրջեալ փայլեցուցանէր զինքն
ո̃պ փայլակն. վ̃ զի զարմանալի ունէին սուս
երքն զփայլուածն ևս առաւել ինքն. Եւ
զօրք Թագաւորին տեսեալ ՚ի բանակէ իւ
րեանց ասեն ցԹագաւորն. տ̃ր՝ տեսեր զս
քանչելիսն որ է ՚ի վ̃ր աշտարակին: Ասէ Թա

գաւորն. շատ զարմանքէ այդ զոր տեսանեմ
ես. այլ Թէ զի՞նչ կամի լինել ոչ գիտեմ.
Իսկ նք ասեն. ածնէ քրիստոնէից որ 'ի յեր
կնիցէ իջել. և կամի սուսերօքն այնմիկ զմեզ
զամենեսեան կոտորել. եԹէ յամեսցուք
աստ. և Թագաւորն տեսեալ երկեաւ՝ և ա-
իւր. եթէ կարես պատմել ստուգիւ՝ ես
ծանուցից արքային վն քո: Ասէ մանուկն.
Տէր՝ զանձն իմ փոխան տաց եթէ ոչ Թարգմա
նեցից ստուգիւ: Եւ նախարարն որ էր Տէր ման
կանն՝ եկեալ առ արքայն երկիրպագ և ասէ
Տէր իմ և հզօր արքայ. գիտեմ ումն մանուկ
որ գիտէ Թարգմանել զայդ. եթէ տացես
նմա զոր խոստացարն: Ասէ ցնա Թագաւորն
յերդնում 'ի Թագաւորութիս իմ որ զամ
ինչ զոր խոստացայ բանիւ կատարեցից գոր
ծով: Եւ դեռևս աղաղակէին ագռաւքն:
Եւ նախարարն լուեալ զայս յարքայէն՝ կա
ցոյց զմանուկն առաջի արքային: Եւ տես
եալ արքայն զմանուկն և ասէ ցնա. ո՞վ պա
տանեակ՝ կարես պատասխանի առնել առ
այս: Ասէ մանուկն. այո՛ կարողեմ Տէր իմ և
հզօր արքայ: Ասէ արքայն. ինչ աղաղակեն


դոքա

դոքա։ Ասէ մանուկն․ քան զի թարգմանութիւն
դոցա այսէ որ հետևեալեն արքայիս իմոյ և
աղաղակեն թախանձանօք։ Ագռաւնքդ
այդոքիկ․ են արու և էգ․ և երրորդն ձագ
դոցայէ։ Ի ժամանակի միում եղև սով սաս
տիկ որ մարդ և անասունք և թռչունք մե
ռանէին ՚ի սովոյ․ և ձագ դոցա նստէր ի վերա
բունոյն։ յայնժամ մայր նորա թողեալ զձա
գն իւր․ թռուցեալ գնաց յերեսաց սո
վուն․ և այլ ոչ եկն առ ձագն իւր։ Իսկ հայր
իւր սնոյց զնա մեծաւ ջանիւք․ զի թռու
ցեալ յօդս՝ և ինչ որ գտանէր իւր կերա
կուր՝ ոչ ուտէր․ այլ բերէր ձագոյն, և ինքն
մնայր սոված․ և այն չափ կերակրեաց զձագ
իւր՝ մինչև թռոյց զնա։ Իսկ յորժամ եանց
սովն՝ եկն մայր նորա և կամէր բնակիլ և ընկե
րակցիլ ընդ նոսա․ և այրն նորա որ էր հայր
ձագոյն՝ ոչ թողոյր զնա ասելով՝ թէ ո՞չ ՚ի
ժամ սովուն ՚ի բաց մեկնեցար իմէն՞ այժմ
ես մի՛ ուրախասցիս ընդ մեզ։ Ասէ ցնա էգն
ես ցաւօք ծնայ․ և կամիմ վայելել իսկ նորա․
զի՛ ի մէ ուրախանալ և ընկերակցիլ ընդ ձա
գոյն իմոյ՝ և ոչ արուին։ Նա այն զկնի արքայ
իս թռուցեալ աղաղակեն անդադար․ զի
դատաստան արասցես ի միջի նոցա․ թէ ո՞ ՚ի նո
ցանէ ունիցի ընկերակցութիւն ձագոյն։
Արդ՝ տէր իմ և հզօր արքայ․ իրաւ ունիս արա
և հատ զվճիռ նոցա․ զի դիտասցեն թէ ո՞ ՚ի նո
ցանէ ունիցի զձագն․ և այլ ոչ երևին քեզ

ագռաւքդ։ Մ՞ինչ յայս վայր՝ ոչ աղաղակէ
ին ագռաւքն։ Ասէ Թագաւորն. յորժամ
մայրն եթող զձագն իւր 'ի ժամ սովոյն և
գնաց. և այժմ ևս 'ի բաց կացցէ 'ի նմանէ.
և եթէ ասիցէ զնեղութիւն 'ի ժամ ծննանե
լոյն՝ այն նեղութիւն եղև նմա ցնծութի
յորժամ ետես զզաւակ իւր։ այլ և պատճառ
ծննդեանն նր՟ հայրն է. և յաւել որ սնոյց զնայ
և կերակրեաց 'ի ժամ սովոյն. և ինքն նուա
զէր և կայր սովեալ։ Այ՟ հրամայեմ ձագոյն
լինել ընդ հօր իւրում. և մայրն նր՟ միունիցե
մասն ինչ 'ի նմանէ։ Լուեալ զայս ագռաւքն
մեծաձայն աղաղակեցին. երբ թէ շնորհա
կալ եղեն արքային. և թռուցեալ հեռա
ցան յերկրէն յայնմիկ։ յայն ժամ ասէ թագա
ւորն ցմանուկն. որդեակ զի՞նչ է անուն քո
Ասէ մանուկն. անուն իմ աղեքսանդր կոչի
Ասէ թագաւորն որդեակ իմ աղեքսանդր.
այսու հետև մի ո՞ք անուանեսցես քեզ հայր
բաց յինէն։ զի զդուստր իմ տաց քեզ 'ի կնու
թի. և յետ վաղճանի իմոյ դու լիցիս թա
գաւոր իվերայ երկրիս եգիպտացւոց։ Եւ
մանուկն աղեքսանդր երկիր եպագ արքայ
ին. և բնակեցաւ առ արքայն ժամանակ ինչ
և ամենեքեան սիրէին զնա։ Յետ այնորիկ
մանուկն աղեքսանդր արար հեծեալս. և
արշաւեալ առնէր պատերազմ. և յաղթէր
ամենեցուն։ Եւ ոչ ո՛ք իշխէր մարտնչիլ
ընդ նմա. և կամ բաւական լինել իմաստու

թն նր։ և ամ ոք հարցանէր խրատ՝ և ուսա
նէր ՚ինմանէ։ Կայր ՚ի ժամանակին յայնմիկ
կայսրն ումն որ կոչէր անուամբ տիւրոս․ որ
անցեալէր իմաստութբ և մեծութբ զամ թա
գաւորս երկրի․ և նստէր յաղէքսանդրիայ․
և համբաւ նորայ տարածեալէր ընդ ամ
տիեզերս․ և եթէ ոք կամէր ուսանիլ մար
դավարութն․ և տեսանել մեծազարդ գե
ղեցկութի ոսկւոյ և արծաթոյ և ակնց պա
տուականաց գայինառ նա, և ուսանէին մար
դավրութն․ քան զի ամ ինչ գտանէին առ նա։
Աղէքսանդր լուեալ զկայսրն տիւրոս․ եկն
առ արքայն և ասէ․ հայր՝ ամ աշխարհ գովէ
զտիւրոս կայսրն․ զկարգ և զսահման նո
րայ․ զի ցանկալի ասեն բնակիլ ՚ի պալատն
Որդ աղաչեմ զքեզ․ եթէ հաճոյ թուեսցի
յաչս քո՝ առաքեա զիս առ նա․ թէր և կա
րացից ուսանիլ իմաստութն ինչ ՚ինմանէ․
Ասէ ցնա թագաւորն և ինձ հաճոյէ այդ․
առ ընդ քեզ բաւական ոսկի և արծաթ վս
զի այդ լիցի ինձ անուն՝ և քեզի շահ․ Բայց
պատշաճաւոր համարիմ զի նախ առցես
զդուստր իմ և ապա գնաս։ Ասէ աղէքսան
դրր․ տր իմ արքայ և հայր իմ սիրելի․ համ
բերեա սակաւ ժամանակմի․ և յորժամ դար
ձայց՝ յայնժամ մեծաւ պատուով առից
զդուստրն քո ՚ի կնութն ինձ․ Ասէ թագա
ւորն․ ով հաճոյէ քեզ այնպէս արա որդեակ
իմ։ Յայնժամ արքայն գրեաց հրովարտակ

և ետ ՚ի ձեռն աղեքսանդրի։ Իսկ աղեքսան
դրըր երկրպագեալ արքային. և առեալ ընդ
իւր գանձս բազում. և ծառայս աղխիւս և
քաջամարտիկս. և եկեալ յաղեքսանդրիայ՝
գնաց ՚ի դուռն արքունի. և դռնապանին
եմուտ զնա ՚ի ներքս։ Իսկ նա մտեալ երկիր
եպագ կայսերն. և ողջունեաց զնա մեծաւ
պատուով. և ետ զհրովարտակն ՚ի կայսրն։
Իսկ կայսրն հարցեալ զաղեքսանդր և ասէ.
որդեակ՝ յորմէ յերկրէ ես դու. և զինչ է
բան քո աստ առ իս։ Պատասխանի ետ աղեք
սանդր և ասէ. տր իմ արքայ՝ որդի եմ ար
քային եգիպտացւոց. և ժառանգ յաթո
ռոյ նր։ և եկեալ եմ ծառայել քեզ՝ եթէ
գտից շնորհս առաջի մեծութե քո. քան զի
ընդ ամ աշխարհ հռչակի համբաւ մեծու
թեդ. և շնորհք գթութե քոյին. և ես կա
միմ ծառայել ՚ի պաղատի քում։ Իսկ կայսրն
ընթերցեալ զհրովարտակն. և ՚իմացեալ զկա
մըս նր, ասէ ցնա. որդեակ իմ՝ զի՞նչ անուն է
քո։ Իսկ նա ասէ ցնա աղեքսանդր կոչի ա
նուն իմ։ Ասէ կայսրն, որդեակ իմ աղեք
սանդր. տացէ ած քեզ ունել զբարիս. և
զայս ծառայութիս կու պատրաստեմ քեզ.
զի ամ աւուր դու պատրաստես զճաշ իմ։
Պատասխանի ետ աղեքսանդր և ասէ. տր՝
պատրաստեմ կատարել ըղ կամս քո։ Իս
նոյն ժամայն սեղանապետն արքային եցոյց
նմայ դարպասն, զի անդ լինիցի հանդերձ

ծառայիւքն իւրովք։ Եւ աղեքսանդր՝ զամ
ենչ իմաստութե տանէր առաջի կայսերն.
և ամենեքեան սիրէին զնա։ Յետ այնորիկ
ոչ յետ բազում աւուրց՝ եկն որդի արքային
իսրայէլացւոց յորում անուննէր լուդվիկ։
Եւ նա եկեալ ևս զի ծառայեսցէ կայսերն.
և ուսանիցի կարգ և սահմանս. որ և զնա ընդ
կալաւ մեծաւ պատուով կայսրն. հարցեալ
զանուն նորա. և զտոհմ, և զերկիր նր։ Եւ
նա պատասխանի տուեալ ասէ՝ անուն իմ
կոչի լուդվիկ. որդի ծառային ձերոյ ար
քային իսրայէլացւոց։ Ասէ ցնա կայսրն. կար
գեալ եմ զաղեքսանդր զի բերցէ ճաշ առա
ջի իմ։ կամիմ զի դու առցես բաժակ ՚ի ձե
ռին քում. և տացես ինձ գինի ՚ի սեղանի իմ.
Ասէ լուդվիկ. Տր պատրաստեմ կատարել՝
զկամս քո։ Եւ նոյն ժամայն սեննեկապետն
եցոյց նմ բնակութիւն ՚ի նոյն դարպասին յորում
բնակեալ էր աղեքսանդր։ Եւ նոքայ երկո
քեանն լուդվիկն և աղեքսանդրն յոյժ նմա
նէին միմեանց. դիմօք և շարժմամբ ՚ի բանս
և ՚ի խօսս ամ իրօք։ մինչ զի ոչ ոք կարէր ճա
նաչել զնս. թէ որն է լուդվիկն կամ աղեք
սանդրն. Եւ սոքայ երկոքեանս՝ յոյժ սիրե
ցին զմիմեանս։ Եւ էր աղեքսանդր յոյժ զօ
րեղ և փոյթ. բայց լուդվիկն՝ էր կամկար
և անուժ։ այսուիկ միայն ոչէին նման մի
մեանց. Եւ կայսրն ունէր միայն դուստրմի
միամօր. որ կոչէր անունն Փլօրէնցիայ. որ և

նայ էր ժառանգ կայսերն. և հայրն նր՝ յոյժ
սիրէր զնա։ Իսկ աղջիկն էր պարկեշտ և գե
ղեցիկ յոյժ. և էր առ անձին 'ի դարպասին՝
հանդերձ ծառայիւք և աղախնօք իւրովք։
Իսկ յամաւուր 'ի մեծամեծացն գայր ախոր
ժակ Թագաւորական. և 'ի նոյն անէ բաժա
նէր կայսրն մասն ինչ՝ և ուղարկէր դստերն
իւրոյ ձեռամբն աղէքսանդրի։ Իսկ դուստր
կայսերն՝ յոյժ սիրէր զաղէքսանդրն. ոչ թէ
վն ծառութն՝ այլ վն իմաստութն. զի իմաս
տութբ և շնորհօք առնէր զամ բան։ Իսկ
յաւուր միում գործ ինչ էր մեծ աղէքսան
դրի. և 'ի ժամ ճաշոյն ոչ էր անդ. և լուդ
ֆիկն ծառայէր փոխան նորա։ Իսկ յորժամ
կերաւ կայսրն զյետին ախորժակ կերակուրն
ասէ ցլութֆիկն կարծելով թէ աղէքսան
դրն իցէ. որդեակ տարցես զայս յինէն դս
տերն իմոյ։ և լութֆիկն դեռ ևս չէր տե
սեալ զդուստրն կայսեր. և իբրև եմուտ 'ի
դարպասն՝ երկիրպագ նմա, և ողջունեաց
զնա. և ետ նմա զկերակուրն։ Իսկ ասէ՝ հայր
քո առաքեաց զայս քեզ. և իբրև ետես զնա
դուստրն կայսեր, իսկոյն ճանաչեաց զնա զի
ոչ էր աղէքսանդրն։ Ասէ ֆլօրէնցիայն՝ սի
րելի իմ զի՞նչ է անուն քո. և ո՞ւմ որդի իցես
դու։ Ասէ լութֆիկն. անուն իմ կոչի լութ
ֆիկ. և որդի եմ թագաւորին իտալացւոց.
և ծառայ կայսերն։ Ասէ ցնա աղջիկն. ողջ
լեր 'ի տէր և երթ 'ի խաղաղութի. և շնորհա

 կալ

կալ լեր հօրն իմոյ առ յինէն։ Իսկ Լութֆի
կըն երկրպագեաց նմա և ելեալ գնաց։ Իսկ յոր
ժամ Լութֆիկն առ նմայեր՝ ոչ ինչ էր առ
կայսրն որ տայր նմա զբաժակն. և եկեալ
Աղեքսանդրն ետես զի ոչինչ էր անդ՝ ծառայ
եաց նմա փոխանակ Լութֆիկին՝ որպէս նա փո
խանորդ արար։ Յետ այնորիկ անկաւ Լութ
ֆիկն 'ի մահիճ հիւանդութեան մեծ։ Լուեալ
Աղեքսանդրի՝ եմուտ առ նա և ասէ. ո՞վ սի
րելի իմ Լութֆիկ. զինչ է այդ որ կաս 'ի մա
հիճս։ Ասէ Լութֆիկն. հիւանդութիւն մեծ
անկաւ 'ի վերայ իմ. կարծեմ թէ մեռա
նելոց եմ 'ի հիւանդութենս։ Ասէ Աղեք
սանդր. ճշմարիտ գիտեմ ես զպատճառ
հիւանդութեան քո. զի յերէկեան օրն փոխա
նակ իմ տարեր կերակուր դստերն կայսեր.
և տեսեր զնա, և հայեցար 'ի գեղ դիմաց նորա,
և 'ի նմանէ խոցեցաւ սիրտ քո. այդ է պատ
ճառ հիւանդութեան քո։ Ասէ ցնա Լութֆի
կըն եղբայր Աղեքսանդր. եթէ բժիշկ հա
մօրն աշխարհի 'ի մի վայր ժողովեսցին՝ ոչ կա
րեն ճանաչել զցաւս իմ որպէս դու ճանաչե
ցեր. և ոչ միայն հիւանդութեան՝ այլ և մահու ես
լինի պատճառ։ Ասէ Աղեքսանդր՝ եղբայր
իմ Լութֆիկ. լեր դու հաստատ՝ և ես օգնե
ցից քեզ 'ի բանդ. այլ մի երկնչիր եղբայր
իմ՝ զի զանձն իմ դնեմ 'ի վերայ քո և կատա
րեմ զբանս քո. զի մի 'ի զուր մեռանիցիս։
Իսկ ելեալ 'ի նմանէ գնաց 'ի շուկայն. և

 գնեաց

գնեաց իւր արծաթովն դաստառակ մի մե
տաքսեայ ոսկեթել և լի՛ ակամբ պատուա
կանօք. առանց գիտութեան լութֆիկին։ Նա և
տարեալ առ աղջիկն և ասէ. ո՜վ սիրելի և
քոյր իմ Ֆլորենցիայ. լութֆիկն առաքեաց
զդաստառակս զայս քեզ պարգև։ Նա և աղ
ջիկն տեսեալ զայն և ասէ. ո՜վ աղէքսանդր,
ո՜ւր կարաց գտանել լութֆիկն զայսպիսի
գեղեցիկ իրքս։ Նա և վն է՞ր առաքեաց զայս
ինձ. զի ոչ երբեք ետեսանամ զնա՝ բայց միան
գամ։ Ասէ աղէքսանդր. որդի է թագաւոր
ին 'ի Նէլացւոց. և զամ ինչ ունի ընդ իւր բա
ժական։ Նա և եթէ հարցանես թէ վն է՞ր ա
ռաքեաց քեզ զպարգևս զայս ձեռամբ իմով
այնպէս գիտասցես՝ զի վն սիրոյ քո հիւան
դացեալէ մերձ 'ի մահ և եթէ հասանի նմա
մահ՝ դու մահապարտ լինիս. վն՝ ասեմ քեզ
զի փոքրիկմի մխիթարեսցես զնա։ Ասէ աղ
ջիկն. ո՜վ աղէքսանդր. խրատով քո կամիս
ապականել տացես զկուսութիւս իմ։ քա՜ լի
ցի ինձ առնել զայդ. և ոչ կամիմ ես շահել
այդպիսի գործդ. 'ի բաց գնա յինէն, և
այլ մի ևս յիշեսցես առաջի իմ այդպիսի բանս։
Նա և աղէքսանդր երկրպագեաց նմա. և ել
'ի շուկայն կրկին անգամ։ և գնեաց իւր ար
ծաթովն աւելի գնով մարգարտով ընդելու
զեալ. և ակամբ պատուականօք յօրինեալ
մէկ լաւ՜ իրմի. առանց գիտութեան լուդֆի
կին. և տարեալ յերկրորդում օրն՝ յորժամ

տարաւ 'ի հօրէ իւրմէ զախորժակ կերա կուրն․ և եդ զնա առաջի աղջկանն, և ասաց թէ Լուսթֆիկն առաքեաց քեզ զողջոյնս զայս։ Եւ աղջիկն տեսեալ զմեծագին պարգևսն՝ սկսաւ ասել ցաղէքսանդր․ զարմանամ ես քեզ․ զի դու միշտ և հանապազ տեսանես զիս․ և վն քո երբէք ինչ ոչ ասացեր։ Ասէ ցնա աղէքսանդր․ այդպիսի իրք ոչ պատահեաց ինձ ոմն նմա․ և ինձ պարտէ սիրել զընկերն իմ իբրև զանձն իմ։ մրդ՝ աղաչեմ զքեզ վն այ մի տար նմա մեռանիլ և կորիլ վն քո 'ի զուր․ սակաւ մի մխիթարեա զնա։ Ասէ աղջիկն․ 'ի բաց գնայ յինէն՝ զի այժմ ոչ տամ քեզ պտխնի։ Եւ ել աղէքսանդրըր յերեսաց նր․ և գնաց 'ի շուկայն․ և գնեաց այլ մեծագին պարգև մի․ և յերրորդ դումանուրն յորժամ տարաւ 'ի հօրէն իւրմէ զախորժակ կերակուրն՝ խոնարհեալ երկիրպագ նմա․ և եդեալ առաջի նր զմեծագին պարգևսն՝ անկաւ յոտս նր և ասաց․ ով սիրելի իմ Փլորէնցիայ․ պարգևս զայս Լուսթֆիկն առաքեաց առ քեզ այրեցած սրտով․ Եւ աղջիկն ծիծաղեցաւ և ասէ․ կու զարմանամ ով աղէքսանդր սիրելի իմ․ որ այսչափ կու ջանաս վն նր։ Եւ երդուաւ աղէքսանդր և ասաց․ ով և ով մծ է կենդանի՝ եթէ ոչ մխիթարես զնա, 'ի սիրոյ քո նազուր կու մեռանի․ և դու մահապարտ կու լինիս․ զի կարծէ յայժ մխրաւորեալէ 'ի

քո սիրոյն․ խեղճ և ողորմելի անկեալ կայ
'ի մահճին։ և հայր քո օրըստօրէ հարցանէ
զիս թէ ո՞րպ կայ Լութֆիկն։ Ասէ աղջիկն․
եթէ այդ պէսիցէ՝ վ̃ սորա քո երթ ա՛նե
տես տուր Լութֆիկն․ զի երբ կամիցի գայ
ցէ․ մտցէ և ելցէ․ և ոչ ոք խօսիցի նմա․ զի
բացեալ լինին դրունք առ նա։ Իսկ աղեք
սանդր յորժամ լուաւ զխօսս 'ի Փլօրէնցիայ
էն՝ ուրախացաւ յոյժ․ և խոնարհեալ երկիր
եպագ նմա․ և ելեալ գնաց առ Լութֆիկն
և ասէ․ եղբայր իմ Լութֆիկ՝ աւետիսքեզ
և ուրախ լեր․ զի հաստատեցի զսէր քո ընդ
աղջկանն․ և յորժամ կամիցիս՝ երթիջիր առ
նա․ և գտցես զնա պատրաստ։ և ես ծառայ
իւքս իմովք պահապան լինիմ քեզ։ Յորժամ
լուաւ Լութֆիկն զխօսս 'ի յաղեքսանդրէն
զարթեաւ ո՞րպ 'ի քնոյ և ողջացաւ։ Իսկ 'ի միւս
գիշերին եմուտ առ աղջիկն, և ննջեաց ընդ
նմա։ Իսկ յայնմ օրէ կապակցեցաւ հոգի
Լութֆիկին՝ ընդ հոգւոյ աղեքսանդրի․ և
սիրէին զմիմեանս յոյժ։ Իսկ Լութֆիկն ամ
ժամ երթայր առ աղջիկն․ մինչ ամենայն
բանն յայտնի եղև 'ի պալատին։ Իսկ զինուոր
քըն սպառազինեալք պահէին զճանապարհ
նորայ․ զի 'ի գիշերի սպանցեն զնա։ Իսկ լու
եալ աղեքսանդր՝ ել 'ի միւս կողմանէ հան
դերձ ծառայիւքն իւրովք․ եդեալ զանձն
իվերայ ընկերին իւրոյ․ և պատրաստէր 'ի
մեռանիլ վ̃ նորայ։ Իսկ թշնամիքն Լութֆի

կին յորժամ տեսին զաղէքսանդր հանդերձ
ծառայիւքն իւրովք զինուք և սուսերօք.
ոչ կարէին մերձենալ առ լութֆիկն, Եւ
լութֆիկն աներկիւղ մտանէր և ելանէր.
Եւ աղէքսանդր ամ̃ իրօք ամ̃իւ նման էր
լութֆիկին. որ ոչ ո՛ք կարէր ճանաչել
զնա. բայց յաղջկանէն.

Վասն աղէքսանդրի առաքէ նամակ առ որդին.
Չէ կարելով ճանաչել զնա.

Յետ այնորիկ եհաս նամակ աղէքսան
դրի՝ զի փութով հասցէ անդ. վն մա
հուան հօրն իւրոյ. զի թագաւորես
ցէ 'ի տեղի նորայ. Եւ աղէքսանդր
պատմեաց զիւր գնալն լութֆիկին և աղջ
կանն. Եւ իբրև իմացան զգնալն աղէքսան
դրի առ հայրն իւր կարի յոյժ տրտմեցան.
Եւ աղէքսանդր եմուտ առ կայսրն և ասէ.
Տր արքայ. թուղթ եկեալ է ինձ վն մահու
ան հօր իմոյ. վսյ աղաչեմ զքեզ հրաման
տուր ինձ երթալ յերկիրն իմ և յաթոռն հօր
իմոյ. զի առանց հրամանի քո ոչ կարեմ եր
թալ թէպէտ և կորուսից զծառայու
թիւն իմ. և ետ զթուղթն 'ի կայսրն. Եւ կայս
րըն առեալ զթուղթն ընթերցաւ և ասէ
ցաղէքսանդր. ոչ է ինձ հաճոյ գնալն քո. զի
չունիմ ո՛ք իմաստուն առիս իբրև զքեզ.
Այլ թէ ոչ թողուցում զքեզ գնալ՝ կամի թէ
լինի քեզ դժուարանք. Այլ ես տամ քեզ հրա

մօն · երթիջիր խաղաղութե՟ · և տէր եղիցի
ընդ քեզ։ Եւ կոչեալ կայսրն զսենեկապետն
և ասէ · աղէքսանդր որ չափ գանձի պէտս
ունիցի՝ տացես նմա։ Եւ առեալ ընդ իւր
բաւական ոսկի · և գոհացեալ զկայսրքայէ եր
կիրպագ նմա։ Եւ ողջունեալ զամենե
սեան որք էին 'ի պալատի անդ ։ և բազումք
'ի նոցանէ լային և ողբային զգնալն նր · զի
ամենեքեան սիրէին զնա ։ Եւ լութֆիկն և
ֆլորենցիայն տմ ծառայիւք և աղախնեօքն
իւրեանց՝ գնացին ընդ նմա մղոնս Ե · և կա
մէին այլ ևս երթալ։ Եւ ոչ եթող նց աղէք
սանդր · յայնժամ երկոքեանն նոքայ լութ
ֆիկն և աղէքսանդր անկան զպարանոցէ մի
մեանց և լային ։ Իսկ ֆլորենցիայն · ո՜վ սիրե
լի լութֆիկիմ · լաց որ չափ կարես ։ Քան
զի մեծ բարեկամն մեր հեռանայ այսօր 'ի-
մէնջ։ Եւ եթէ ոչ էր նմ ոչ երբէք վայել
էիր դու ըզ սէրնիմ ։ Քանզի իւրեան ար
ծաթոյն գնեաց ոսկով և մարգարտով նկար
եալ է մեծամեծ պարգևսն և ետ ինձ · ոչ
թէ դու ուղարկեալես · զայս արար առանց
գիտութե քո ։ Եւ հանապազ սպառնայի
նեալ պահէր զքեզ 'ի թշնամեաց քոց · արդ՝
ահա այժմ հեռանայ 'ի մեզանէ ։ Եւ զայս
ասացեալ՝ նորա անկան յերկիր և լային դառ
նապէս ։ Դարձոյց զնս աղէքսանդր 'ի գետ
նոյն և ասէ · սիրելիք իմ մի՛ ողբայք զգնալ
նիմ իձէնջ։ Քանզի երթամ և ողորմութ՟ն

նոյ թագաւորեցից անդ. սակայն զձեզ ոչ
մոռանամ թղթով և գրով։ Բայց ունիմ
ինչ ասել քեզ եղբայր իմ լութփիկ. աւելի
քան զչորս ամէ՛ որ որդի արքունին սպան
նիացւոց կամի ծառայել կայսեր. և է անուն
նորա սիդոն։ Արդ՝ եթէ լուիցէ զգնալն իմ
աստի իսկոյն եկեսցէ նա աստ։ Նա ծառայե
լոցէ կայսեր. և դու զգուշ լեր մի՛ ինչ առ
նիցես առաջի նորա վասն դստերն կայսեր։ զի
թէ լուիցէ և իմասցի զպատկանելն քո զկու
սութին նորա վաղվաղակի ասասցէ առաջի
կայսերն. և դու չարաչար մահուամբ մեռա
նիցիս։ Ասէ լութփիկն. ով եղբայր աղէք
սանդր կէս հոգւոյ իմոյ. լաւ եղև որ զգու
շացուցեր զիս վասն այդորիկ։ բայց յառաջ
քան զբաժանիլն քո իմէնջ՝ խնդրեմ՝ ի քէն
բան ինչ։ Ասէ աղէքսանդր. խնդրեա զինչ
և կամիս։ Ասէ լութփիկն. ունիմ առ իս պա
տուական մատանի մի որ տուեալ է ինձ մայրն
իմ։ Աղաչեմ զքեզ զի զնա դնիցես 'ի մատն
քո. և հանապազ ընդ քեզ ունիցիս։ և որ
քան տեսանես զնա 'ի մատին քո՝ հանա
պազ յիշես զիս։ Ասէ աղէքսանդր. բա
րի է եղբայր իմ լութովիկ. առից զմատա
նի քո յիշատակ անուան քո. բայց դու
զասացեալս 'ի միտ պահեա։ և ես արդ՝ եր
թայց. յանձն առնելով զձեզ յԱյ։

Գնալն աղեքսանդրի յերկիրն իւր ի մակեդոնիայ։
Եւ գալն սիդոնի որդւոյ պառնիկոսայ տերացն։

Եւ գնաց աղեքսանդր զճանապարհ
իւր. և աղջիկն և լուտովիկն դարձան
՚ի պաշտաւն իւրեանց։ Յետ այնորիկ
լուաւ սիդոն որդի արքային սպաննե
ացն. եթէ գնաց աղեքսանդր յերկիրն
իւր. եկն առ կայսրն. և խնդրէր ծառայել
նմայ։ Ասէ ցնա կայսրն. յառաջ քան զքեզ
էր առ իս մանուկմի յորում անուն էր աղեք
սանդր։ Որդ՝ նա թագւորէ յեգիպտացւոց
և յոյժ ծառայեաց ինձ իմաստութբ։ Եւ
կերակուրն իմ նա պատրաստէր ինձ. արդ՝
այժմ զտեղին նր. քեզ տաց։ Եւ սիդոն շնոր
հակալ եղև կայսերն. և սենեկապետն եցոյց
նմա զդարպասն որում բնակէր աղեքսանդր
զի ընդ լութֆիկին բնակեսցին ՚ի միասին։
Եւ լուտովիկն ջանայր հեռանալ ՚ի նմանէ.
պատճառելով բազում պատճառս. սակայն
ոչ եղև հնար։ Եւ յականմայ կամօք յանձն
էառ զհրաման սենեկապետին։ Տեսեալ սի
դոն թէ ոչ կամի լուտովիկն զնա առ իւր.
ատելութի կալաւ ընդ նմա։ Եւ լուտովիկն
տեսանէր զնա զի չարէր ընդ նմա. և բազում
ժամանակս ոչ երթայր առ աղջիկն։ և յետոյ
դարձեալ գնայր և գայր՝ որպէս յառաջագոյն
առնէր։ Որ տեսեալ սիդոն ուրախ եղև
յոյժ. և լրտեսէր հանապազ։ մինչ զի ըստու
գիւ տեղեկացաւ որ ապականեալ էր լուդ-

ֆիկն, զկուսութ՟ն աղջկանն. և պատճառ
ապականութեան նորա էր աղէքսանդր։
Յաւուր միում գովեաց կայսրն զբարու
թիւն և զյաջողակութիւն աղէքսանդրի
Ասէ ցնա սիդոն. տ՟ր մի՛ այդպէս գովաբա
ներ զաղէքսանդր. զի նայ էր դաւաճան
քո։ Ասէ կայսրն. ո՞պ։ Ասէ սիդոն. դուստր
մի ունիս միամօր, որ ժառանգ լինելոցէ
քեզ. լութֆիկն զայս՝ գիտութ՟ե աղէքսան
դրի՝ ապականեալէ զկուսութ՟ի նորայ. և յոր
ժամ կամի՝ մտանէ և ելանէ։ Իսկ յորժամ
լուաւ զայս կայսրն՝ ՚ի սիդոնէ՝ տրմեցաւ յոյժ
Իսկ մինչ դեռ զայս խօսէր սիդոն ընդ կայ
սերն. եմուտ լութֆիկն ընդ պաղատն։ Իսկ
իբրև եմուտ՝ ետես զնա կայսրն. կոչեաց
զնա առ ինքն և ասէ։ Ո ի՞նչ է այս որ լսեմ
զքէն. եթէ ճշմարիտ իցէ բանըդ չարաչար
մահուամբ կորուսից զքեզ։ Ասէ ցնա լութ
ֆիկն. տ՟ր արքայ ասայ ինձ թէ ինչ բանէ.
քանզի ոչ գիտեմ ես ինչ։ Ասէ ցնա սիդոն
ես մատնեցի զքեզ առաջի տեառն իմոյ ար
քայի. քանզի դու ապականեցեր զմիամօր
դուստր նորա։ և արդ և՛ս ննջես ընդ նմա.
և ՚ի նշան այդմիկ յաւուր միում մարտնչե
ցայց ընդ քեզ։ Ասէ լութֆիկն. և ես պատ
րաստեմ յաւուրն յայնմիկ մարտնչիլ ընդ
քեզ. և զչար քո հանից ՚ի գլուխդ քո։ Իսկ
դարձեալ ասէ լուդվիկն, ցկայսրն. տ՟ր իմ,
թէ վ՟ն էր չարախօսեաց զիս սիդոն առաջի

 տ՟ն

տ՟ն իմոյ․ ծանուցից արքային իմոյ։ Ասէ
կայսրն․ ո՞վ։ Ասէ լուսթվիկն․ յորժամ որ ե-
կըն սիդոն՝ ծառայել քեզ․ սեննեկապետն ե-
ցոյց նմա զբնակութի աղեքսանդրի՝ և ես
ոչ կամեցայ բնակիլ՝ ի միասին․ զի լուեալ էի
յառաջագոյն զչարութի նորայ։ և սեննեկա
պետն յակամայ կամօք բնակեցոյց ընդ իս։
Այն ահա՛ չարախօսեաց զիս առաջի տ՟ն
իմոյ։ Ասէ կայսրն․ երբ այդ այդպէս իցէ՝
նշանակեմ ձեզ օր մարտի այս նի՛շ օր․ և տե
սանեմ՝ ի ձէնջ որն է ճշմարիտ։ Իսկ յանձն
էառ լուսթփիկն։ Իսկ իբրև այսպէս եղև
այս․ եմուտ լուսթվիկն առ աղջիկն և ասէ․
այժմ եղէ որդի մահու․ ո՞վ ասաց ինձ ա-
ղեքսանդր՝ նոյնպէս եղև։ Քան զի սիդոն
մատնեաց զիս առաջի հօր քո թէ ապակա
նեալեմ զքեզ։ Իսկ հայր քո բարկացաւ յոյժ
նա՛ և սիդոն վ՟ն փորձելոյ զարդարութե
ճշմարտութին, նշանակեաց օր մարտընչիլ
ընդ իս։ և ես ոչ կարեմ կալ ընդդէմ նորայ․
քան զի տկարեմ, և վ՟ն տկարութե իմոյ մե
ռանիմ։ Ասէ ցնա աղջիկն․ եթէ այդպէս
իցէ՝ և ոչ է հնար զերծանիլ․ արա ըստ խրա
տու իմոյ և եղիցի քեզ բարի․ Փութա՛ և
գնա՛ առ կայսրն և ասէ՛ ցնա․ թէ թուղթ
ուղարկեալ է ինձ հայր իմ, քան զի հիւան
դացեալ է․ և գրեալ է թէ փութով հասցես
ինձ մինչ դեռ կենդանի եմ․ և խնդրեա՛ հրա
ման զի տացէ քեզ երթալ առ հայրն քո․ և

զօր Մարտին յերկարեսցես յերթալդ եւ գալդ.
Եւ յորժամ կայսրն տացէ քեզ հրաման եր-
թալ. երթիջիր վաղվաղակի առ աղէքսան-
դրր արքայ 'ի ծածուկ զի մի ոք գիտասցէ:
Եւ աղաչեմ զնա վն այ եւ վն սիրոյ մերոյ. զի
օգնեսցէ քեզ միւսանգամ. եւ եկեալ աստ՝
պատերազմեսցի փոխանակ քո: զի դուք նմա-
նէք միմեանց. եւ ոչ ոք է որ կարիցէ ճանաչել
զձեզ եւ բաժանել 'ի միմեանց բայց յինէն:
Թէ արասցես զայս՝ ապրեսցիս 'ի մահուանէ
եւ զպատիւ քո եւ զիմ, աւելցես: Ասէ ցնա
լուտովիկն. լաւ խրատ տացեր. բայց երկն-
չիմ թէ ոչ թողցէ աղէքսանդր զթագա-
ւորութին իւր եւ գայցէ աստ: Ասէ աղջիկն.
ոչ երբեք դարձոյց նա զերեսս իմէնջ. վն
յուսամ յած՝ եւ այժմ եւս ոչ դարձուցա-
նէ զերեսս իւր վն կենդանութե քո: Յայն-
ժամ լութֆիկն սահմանեաց թուղթ մի. եւ
ետուր 'ի հաւատարիմ մի 'ի ծառայից իւրոց
եւ ասաց. բե՛ր այս ինչ օր զթուղթս զայս՝
յորժամ ես սպասաւորեմ կայսերն 'ի սեղանն
եւ տուր առաջի ամենեցուն ըկնքեալ թուղ-
թըս ինձ. եւ կամ սեղանակապտին: Եւ արար ծա-
ռայն ըստ հրամանի տն իւրոյ. եւ եբեր ըզ
թուղթն, եւ ետ սեղանակապետին: Եւ սեղանա-
կապետն բացեալ զթուղթն կարդաց եւ տե-
ղեկացաւ եւ ծանոյց լութֆիկին: Լութֆի-
կըն եւ սեղանակապտն ծանուցին արքային թէ
հայրն հիւանդացեալ է. եւ փութով խնդր-

եալէ զորդին զի տեսանիցէ։ Իսկ կու խըն
դրէ արքայէս հրաման՝ զի երթեալ տեսա
նիցէ զհայրն և դարձեալ դայցէ։ Ասէ կայս
րըն՝ երթիջիր․ բայց 'ի ժամադրեալ աւուրն
եկեսցես։ Ասէ լուսթփիկն․ աղաչեմ զմեծու
թիւդ քո տէր․ զի յայլում աւուր տեսցես մեր
մարտնչիլն ընդ միմեանս․ զի կարասցից ժա
մանել։ Իսկ կայսրն երկարեաց զյօր մարտին
և ասէ․ Այսեա՛ յանձն քո․ զի եկեալ հա
ցես 'ի ժամադրեալ օրն։ Եթէ ոչ եկեսցես
յարուցից իմ՛ քո պատերազմ․ և քայքայեալ
աւերեցից զերկիրն ձեր, և զքեզ չարաչար
տամ սպանանել։ Ասէ լուսթփիկն․ ան պատ
ճառ եկից 'ի ժամադրեալ օրն։ Թէպէտ և
կորուսից զժառանգութի իմ․ և երկիր եպագ
արքային և ել։ Իսկ վաղվաղակի հեծեալ
ձի՛ գնաց յեգիպտոս․ և ազդ արար զգալն
իւր աղէքսանդրի․ և ինքն կեցեալ 'ի թաք
ըստի։ Իսկ արքայ աղէքսանդր լուեալ ըզ
գալուստ նր․ ուրախ եղև յոյժ․ և ել ընդ
առաջ նորա․ և իբրև ետես զնա համբու
րեաց և ասէ․ բարի եկիր սիրելի եղբայր իմ․
և առեալ եբեր 'ի պալատն իւր և արար ըն
դունելութի մեծ։ և հարցեալ վն փլորէն
ցիային թէ որպ կեայ։ և վն արքային․ Ասէ
լուսթփիկն․ տէր իմ և ընկերակից իմ․ այժմ
մահիմ և կեանն իմ 'ի ձեռս քոյէ․ որպ ասա
ցեր վն սիդոնի՝ նոյնպէս եղև․ քան զի մատ
նեաց զիս առաջի կայսերն թէ ապականեալ

եմ զդուստրն նորա։ Եւ կայսրն կարդեաց մեզ օր մարտնչիլ ընդ միմեանս. զի փորձեսցի և յայտնեսցի ճշմարիտն։ Նա զօրեղէ քան զիս. և ես տկար, ոչ կարեմ պատերազմիլ ընդ նմա։ Եւ լուեալ զբանս Փլորէնցիայն՝ զայս խրատս ետ ինձ. զի եկից առ քեզ վն օգնութեան։ զի բազում անգամ օգնեցեր ինձ յամենայն ժամ։ զի եթէ 'ի քէն եղիցի օգնութիւն ինձ միայն՝ որ ոչ մեռանիցիմ ի զինուր։ Ասէ աղէքսանդր. գիտէ այլ ոք զգալուստ քո առիս՝ թէ միայն Փլորէնցիայն։ Ասէ լուսթփիկն. ոչ ոք գիտէ զգալնիմ առ քեզ բայց 'ի Փլորէնցիայէն. Բան զի հրաման առի 'ի կայսերէ. եթէ երթայց տեսից զհայրն իմ. զի հիւանդացեալէ. և շուտ ասի եկից առ քեզ։ Ոչ ի Փլորէնցիայն ասաց թէ դուք նմանէք միմեանց. և ոչ ոք ճանաչէ զձեզ բաց յինէն։ Երբև զայս ասաց անկաւ առ յոտս նր և սկսաւ լալ։ Եւ արքայ աղէքսանդր յարոյց զնա և ասէ. ով սիրելի իմ ասա ինձ յորում աւուր եդեալէ ձեզ ժամ մարտնչիլ։ Ասէ լուսթփիկն. այս նի՛չ օր մարտնչելոցեմք։ Ասէ աղէքսանդր. այժմ կայսրն համարէ զօրն. և եթէ ես յամիցեմ զգիշերս զայս՝ ան հնարէ ինձ ժամանել 'ի ժամադրեալ օրն։ Եւ ես 'ի վաղիւն առնելոցեմ զդուստր թագաւորին 'ի կնութիւն. զի 'ի ձեռն նր թագաւորելոցեմ աստ. և ամ նախարարք նր եկեալքն 'ի հարսանիսն

Եւ եթէ մի հարսանեաց յամենցից ասա, կը
րեցես դու 'ի յաւիտեան։ Բայց լաւէ ինձ
թողուլ զթագաւորութիւնս իմ. և զկինն իմ
և զքեզ ոչ։ Եւ առեալ զնա եմուծ 'ի սեն
եակն իւր. և հանեալ 'ի յանձնէն զիւր հան
դերձն ագոյց լութֆիկին։ և զհանդերձն
լութֆիկին զգեցաւ ինքն. և եցոյց զամ դա
ճպասն բոլորովին և ասաց։ արդ՝ աղաւթեցուք
այսպէս. ես երթայց անդ և հասից 'ի ժամա
դրեալ օրն։ Եւ դու նստիցես 'ի տեղի իմում
թագաւոր. բայց յորժամ մտանիցես 'ի մահիճն
աղջկանն՝ հաւատար իմ լինիցիս ինձ։ Եւ
իբրև զայս ասաց՝ նոյն ժամայն հեծեալ ի ձի
գնաց առ կայսրն փոխանակ լութֆիկին։
Եւ լութֆիկն 'ի վաղիւ անդր փոխանակ
աղէքսանդր թագաւորի. քան զի ոչ ճանա
չէր զնա ոք. էառ զկինն աղէքսանդր թա
գաւորին և արար հարսանիք. և յորժամ ե
ղև գիշեր՝ եմուտ լութֆիկն 'ի մահիճն, և
բերին զթագուհին անդ առ նմա։ Նոյն
ժամ լուտովիկն առեալ սուր մերկ եդ իմէջ
իւր և 'ի մէջ աղջկանն. զի մարմին աղջկանն
'ի մարմին իւր ոչ հասցէ։ Եւ թագուհին
զարմանայր մի բանիւ այսորիկ. բայց ինչ ոչ
ասէր ցնա թէ մի՞ էր առնես զայդ. և մի դի
չէր այնպէս առնէր մինչև եկն աղէքսան
դըր արքայ։ Յորժամ աղէքսանդր գնաց
առ կայսրն փոխանակ լութֆիկին. ասէ ցար
քայն. տէր՝ զհայր իմ թողեալ 'ի մահիճս հի

ւանդ. և եկի աստ վն̃ ժամադրեալ աւուրն
Ասէ ցնա կայսրն. հաւատարիմ եղեր 'ի բա
նիդ. այդմիկ և յաւելեր զպատիւ քո։ Իսկ
լուեալ աղջիկն զգալուստ նր̃ ուրախ եղև
յոյժ. և գաղտ կոչեաց զնա առ ինքն։ Իբրև
ետես զնա համբուրեաց և ասէ. օրհնեալ է
որ ծննդեանն քո. որդ՝ ասա ինձ թէ ո՞ւր թո
ղեր զլութֆիկն։ Իսկ աղեքսանդր պատ
մեաց նմա զմ̃մ զոր ինչ եղև. և թէ ո̃պ եթող
զնա թագաւոր փոխանակ իւր։ Իսկ յետ խօ
սիցն ողջունեաց զաղջիկն ե՛լ անտի և գնաց
եմուտ 'ի սենեակ լութֆիկին. և ոչ ոք էր որ
ճանաչէր զնա թէ ոչ է լութֆիկն բայց 'ի
փլօրէնցիայէն. Իսկ ի վաղիւ անդր նախ
քան զժամ մարտին. ասէ աղեքսանդր ցը
կայսրն. սիդոնս այս չարեալ ինձ մատնեաց
զիս քեզ. ո̃պ թէ զդուստր քո ապականեալ
եմ։ Որդ՝ փորձեցից զդա այսօր 'ի մարտին
դորա. և առից զվրէժ իմ 'ի դմանէ։ Ասէ սի
դոն. այո՞ ճշմարիտ է զոր ասացի. զի դու
ապականեցեր զդուստր կայսերս. և կամիմ
փորձել զայդ ի վ̃ր քո։ Իսկ իբրև ասաց զայս.
երկոքեանն 'ի միասին հեծան 'ի ձի. և սկսան
հարկանել զմիմեանս և մարտեան։ Իսկ եհար
սրով աղեքսանդր թագաւորն և կոտրեաց
զգլուխն սիդոնի. և տարեալ ետ աղջկանն.
և աղջիկն մեծաւ խնդութբ̃ տարաւ առ
հայրն և ասէ։ Ահա՛ հայր իմ գլուխն այնո
րիկ որ սուտ թբ̃ն իւրով ապականեալ եցոյց

 զիս

զիս։ Իսկ կայսրն․ տեսեալ զյաղթութիւն՝
կոչեաց զաղէքսանդր առ ինքն կարծելով
թէ լութֆիկնէ․ և ասէ․ ո՛վ սիրելի լութո
ֆիկ․ ապրեցուցեր այսօր զքեզ՝ և զդուստր
իմ․ և յաւելեր զպատիւ իմ․ և սիրելի իմ եղե
ցիր դու յաւիտեան։ Ասէ աղէքսանդր․
ա͞ծ է որ փրկէ զայնոսիկ որք յուսան ՚ի նա․
բայց զհայր իմ թողեալ եմ հիւանդ․ և եկի
վ͞ն կռուոյս։ Արդ՝ աղաչեմ զմեծութիւնդ․
զի հրաման տացես ինձ երթալ առ հայրն
իմ․ և տեսանել զնա թէ ոչ եղև․ և դարձեալ
փութով եկից․ Ասէ ցնա կայսրն․ երթիջիր
խաղաղութ͞բ․ և դարձեալ փութով եկես
ցես։ և ՚ի կամս քո ունիցիս զա͞մ ինչ։ Իսկ
աղէքսանդր ողջունեաց զարքայն՝ և ել գը
նաց յերկիրն իւր․ և լութֆիկն լուեալ զգա
լուստ աղէքսանդրի՝ ուրախ եղև յոյժ, և
ասէ․ սիրելի եղբայր իմ զի՞նչ գործեցեր
անդ․ և ոչ եղև բանն․ Ասէ աղէքսանդր՝
երթ առ կայսրն․ և ծառայեա նմա ոչ յա
ռաջն․ քան զի խոստացայ նմա փութով
դառնալ առ նա։ և քո թշնամւոյն հատի
զգլուխն։ Իսկ լութֆիկն շնորհակալ եղև
նմա և ասէ․ ո՛վ սիրելի իմ աղէքսանդր․ ես
ոչ կարիցեմ հատուցանել քեզ զայդ ա͞մ բա
րութիս․ որ բազում անգամ փրկեցեր զիս
՚ի մահուանէ․ այլ և առաւել զայս՝ որ զամե
նեսեան անցոյց․ Ասէ աղէքսանդր երթ ՚ի
խաղաղութիւն և տ͞ր եղիցի ընդ քեզ։ է ա͞ծ յեր

 կինս

կենս որ հաստուցանէ իւրաքանչիւր ըստ գոր
ծոց իւրոց։ Եւ լուսթփիկն ողջունեալ զնա
դարձաւ առ կայսրն։ Եւ 'ի գիշերին այն ա
ղէքսանդր նստաւ յաթոռ իւր. և ոչ ոք գի
տաց զգնալն և զգալն նորա։ և իբրև երեկոյ
եղև՝ եմուտ աղէքսանդր 'ի մահիճն առ
թագուհին. և սկսաւ խաղալ ընդ նմա և
համբուրել։ Ասէ թագուհին. հազիւ ե
հաս ժամ զի ցուցցես ինչ նշան սիրոյ փոքր
ինչ։ Ասէ աղէքսանդր. վն էր ասես զայդ.
Ասէ թագուհին. յայնմ օրէ որ առեր զիս՝
յամ գիշեր մերկ սուր դնէիր իմէջ մեր. զի
մի՛ հասցէ մարմին քո մարմնիմ։ Եւ աղէք
սանդր լուեալ զայս և ասէ ընդ միտս իւր.
թէ ընկերն իմ լուսթփիկ՝ հաւատարիմ եկաց
ընդ իս։ և ասէ. ո՞վ սիրելի տիկին՝ ոչ արարի
զայն վն չարութե. այլ վն փորձելոյ։ Եւ
թագուհին ասէ ընդ միտս իւր. դու արա
րեր զայդ ինձ, և ես առից զվրէժ իմ իքէն
Եւ իսկոյն սկսաւ սիրել զինուոր ոմն 'ի պա
լատէն. և պոռնկէր ընդ նմա։ և խորհէին
սպանանել զթագաւորն։ Եւ արբուցին
նմա մահադեղ. և դեղն ոչ մահացոյց զնա.
բայց բո՛ր գոդոյ եղև ամ մարմին նր։ և տես
եալ նախարարացն թէ ոչ վայելէ գոդոյ
թագաւորութե՛ն աքսորեցին զնա յերկրէ
անտի։ Եւ յայնմ ժամանակի մեռաւ կայս
րըն. և լուսթփիկն էառ զդուստր նր 'ի կնու
թե. և թագաւորեաց 'ի տեղի նր։ Եւ յետ ոչ

 բազ

բազում աւուրց մեռաւ Թագաւորն իէղ-
ացւոց. և Լութֆիկն տիրեաց միանգամայն
իվ՟ր երկրի նց՟. այսինքն երկրի կայսեր՝ և եր-
կրի հօր իւրոյ։ Եւ լուեալ աղէքսանդր՝ ասէ
ընդ միտս իւր. արդ՝ ընկերն իմ Լութֆիկն՝
է առ զդուստրն նր՟ 'ի կնութ՟ի։ և է կայսր,
և Թագաւոր լ՟ի. և ես յոյս ունիմ առ ա՟ծ
երթայց անդ և մխիթարեցից ես զիս 'ի նմանէ
որ հանապազ զանձն իմ դնէի իվ՟ր նորա։
Եւ նոյն ժամայն ելեալ 'ի գիշերի. առեալ
ցուպ 'ի ձեռին, եկն առ Լութֆիկ ընկերն
իւր որ եղեալ էր կայսր։ և յորժամ եհաս 'ի
դուռն պալատին՝ ետես առ դրանն, զի մի՛
կողմն նստեալ էին աղքատք. և միւս կողմն
գոդիք առնուլ ողորմութ՟ի։ և արքայն ա-
ղէքսանդր նստաւ իմէջ գոդոցն։ Եւ ե-
կեալ կայսրն էանց. և աղէքսանդր ընդ
այլ աղքատսն խնդրէին ողորմութ՟ի. բայց
ինչ ոչ էառ։ Եւ իբրև ժամ եղև ճաշոյ. և
նստաւ կայսրն 'ի ճաշ. և արքայ աղէքսանդր
սկսաւ բաղխել զդուռն։ Եւ եկեալ դռո-
նապանն հարցանէր զնա թէ վ՟էր բաղխէր
զդուռն։ Ասէ աղէքսանդր. ես բորոտեալս
'ի գոդութ՟ի. աղքատ և արհամարհեալ ամե-
նեցուն. աղաչեմ զքեզ վ՟ն ա՟յ զի հասու-
ցես զբանս իմ առ կայսրն։ Ասէ դռնապանն
զի՞նչ է խնդիր քո։ Ասէ աղէքսանդր. երթ
աղաչեա զկայսրն և ասա ցնա առ յինէն. վ՟ն
ա՟յ սիրուն՝ և վ՟ն աղէքսանդր Թագաւորին

 սիրոյ

սիրուն հրամայեսցէ վն իմ. զի ես երթայց
և նստայց առաջի աչաց նր և կերայց ճա՛շս։
Ասէ դռնապանն. զարմանամ քեզ՝ զի այդ-
պիսի՛ իրս խնդրես ՚ի տնէ իմմէ. քան զի պա
լատնր լի՛ է իշխանօք. և թէ տեսցեն զքեզ
լի՛ բորոտութբ՝ գարշեալ ոչ կարիցեն ուտ
ել կերակուր. բա՛յց որ աղաչես զիս վն այ
ծանուցից տն իմում զբանս քո։ Եւ մտեալ
դռնապանն առ կայսրն և ասէ. տր իմ և հզ
զօր արքայ. բորոտ ո՛մն կացեալ առ դրանն՝
և խնդրէ իձէնջ վն այ և վն աղէքսանդր
թագաւորի սիրուն. զի մտցէ ինէրքս և ա-
ռաջի աչաց քոց նստիցի՝ և ուտիցէ կերա
կուր։ Եւ լուեալ կայսրն զանուն աղէք
սանդր թագաւորին, ասէ ցդռնապանն.
մոյծ զնա այսր և կերիցէ ճաշ առաջի իմ։ Եւ
դռնապանն իսկոյն եմոյծ զնա ինէրքս. և
նա՛ նստաւ իվր գետնոյ առաջի կայսերն։
Եւ կայսրն ուղարկեաց նմ քաղցրահամ կե
րակուր և եկեր։ և կոչեաց աղէքսանդր ըզ
մինն ՚ի ծառայիցն կայսեր և ասէ. սիրելի եղ
բայր իմ, վն այ սիրուն երթ առ կայսրն և
ասա ցնա. թէ աղքատն այն բորոտ՝ աղաչէ
վն այ, և վն աղէքսանդր թագաւորի սիրուն
տացէ ինձ զինի իւր սկուտեղամբն։ Ասէ
ցնա ծառայն. ով եղբայր ո՛չ գիտես թէ
զի՞նչ խնդրես. վն զի ան պատշաճ բանս կա
միս ուղել։ զի թէ միանգամ ըմպիցես դու
զինի ՚ի բաժակէ անտի՝ զոր տրն իմ ըմպէ.

յաճել ևս ոչ կարէ ըմպել 'ի նմանէ. բայց
մն աղաչանաց քոց՝ պատմեցից կայսերն զբա
նըս քո։ Եւ ծառայն գնաց առ կայսրն և
ասէ. տր՝ թողուլ շնորհեա ինձ զոր ինչ ասե
լոցիցեմ տն իմոյ. բորոտն այն զոր նստեալ
կայ ի վր գետնոյ. խնդրէ մն տյ՝ և մն սիրոյ
աղէքսանդր թագաւորին. զի սկհոմն զոր
ըմպէ տրդ իմ. տացես և նմա գինի նոյն սկհո
վըն ըմպել։ Եւ լուեալ կայսրն զնուն աղէք
սանդր թագաւորին. զուարթ երեսօք հրա
մայեաց տալ նմա անապակ գինի. և ծառայն
տարեալ ետ ցբորոտն։ Եւ աղէքսանդրի
առեալ գոհացած զյարքայէն՝ և ըմպեաց
զբաժակն։ Եւ իբրև ըմպեաց՝ հանեալ զմա
տանին 'ի ձեռանէն արկ 'ի սկիհն. և ասէ
ցծառայն. սիրելի եղբայր իմ տար զսկիհդ
և զմատանիս տն քում։ Եւ ծառայն առ
եալ տարած ետ 'ի կայսրն. և կայսրն իսկոյն
ճանաչեաց զմատանին զոր ինքն տուեալէր
աղէքսանդր թագաւորին 'ի նշան սիրոյ. և
խանդաղատեցած սիրտ նր, և ասէ 'ի միտս
իւր. կամ աղէքսանդր արքայ մեռեալէ
կամ բորոտըդ այդ գողացեալէ զմատանիս
զայս։ Եւ հրամայեաց կայսրն ծառայից իւ
րոց և ասէ. բորոտն այն մի' ելցէ 'ի պալա
տէս մինչև խօսեցայց ընդ նմա։ Եւ յետ ձա
շոյն առեալ կայսրն զբորոտն մեկուսի. որ
էր աղէքսանդրն, և ասէ ցնա. երդմնեցու
ցանեմ զքեզ յածն կենդանին. ասա ինձ ոտ

 անկա

ընկաւ մատանիս այս 'ի ձեռն քո։ Ասէ ա-
ղէքսանդր. Տէր՝ մի թէ ճանաչես զմատանիս
զայս։ Ասէ կայսրն. ո՞չ չեմ ճանաչեր, զի իմ է
մատանիս այս. և ես ետու աղէքսանդր թա-
գաւորի ընկերին իմոյ 'ի նշան սիրոյ։ Ասէ
աղէքսանդր. այս այն աղէքսանդրն է ահա
որում տուեր զմատանիդ։ Իսկ լուեալ զայս
կայսրն՝ պատառեաց զպատմուճանն իւր. և
անկեալ երկիր լայր դառնապէս։ և ասէր.
ո՞վ սիրելի իմ աղէքսանդր կէս հոգւոյ իմոյ
զի՞ արդ՝ կամ ո՞չ եղև վիրաւորեալ փափուկ
մարմին քո։ Ասէ աղէքսանդր. դու որ ու-
նէիր զմեծ սէրն քո ընդ իս՝ և եդեալ էիր
սուր մերկ ի մէջ քո և ի մէջ թագուհւոյն
կնոջ իմոյ. սակս այն բարկացաւ յոյժ նա և
սիրեաց զինուոր մի 'ի պաշտօնէից՝ և պոռն-
կէր ընդ նմայ, և նոքա դեղեցին զիս և արբու-
ցին ինձ մահադեղ թէ մեռանի. և եղէ այս-
պէս վիրաւորեալ բորոտ, և յետ այնորիկ
արտաքսեցին զիս 'ի թագաւորութենէ։ Իսկ
լուեալ զայս կայսրն՝ յարեաւ և համբուրեաց
զնա և ասէ. վա՜յ է ինձ կէս հոգւոյ իմոյ.
զի՞նչ արարից քեզ. և կամ ո՞չ բժշկել տաց
քեզ։ Համբերեա՛ փոքրիկ մի՝ և ես առաքե-
ցից առ ճարտար բժիշկս. զի եթէ հնարիցէ
բժշկեսցեն զքեզ 'ի բորոտութենէ։ Ո՞վ սիրե-
լի իմ աղէքսանդր մի՛ յումեք յայտնեսցես
զայս. և առաւել ևս կնոջն իմոյ զի մի անկա-
նիցի մեծ տրտմութեն։ Իսկ նոյն ժամայն ետ

նմա դարպասմի առ անձին, և ետ նմա զա՟մ
պէտս նորա։ Իսկ առաքեաց զծառայս իւր
ընդ ա՟մ երկիր առ իմաստուն բժիշկսն. զի
առանց յապաղելոյ հասցեն առ նա։ Իսկ նք
որընթաց երիվարաւ փութանակի ժողովե
ցան առ կայսրն. բժիշկք իմաստունք հա
մարով Ը։ յոյժ անուանիք և հմուտք արհեստ
տիցն։ Ո՛ որ տեսեալ զնս կայսրն. ուրախ
եղև յոյժ և ասէ ցնս, սիրելիք. մին բարե
կամ իմ փիրաւորեալէ յոյժ. եթէ բժշկէք
զնա ՚ի վիրաց անտի. պարգևս մեծամեծս
առնուցուք յինէն։ Իսկ բժիշկքն. ո՛ր զոր
ինչ հնարէ և գիտեմք՝ արասցուք։ և յոր
ժամ տեսին զբոր նր՝ ասեն. ոչ կայ դմա
հնար ողջանալոյ. զի դորայ մահադեղէ ար
բուցած։ Ո՛ որ լուեալ կայսրն տրտմեցաւ
յոյժ. և հրամայեաց կոչել զաղքատս։ և
զկրօնաւորս, և զքահանայս. զի աղօթս արաս
ցեն վս նր։ զի խնդէ եղիցի բժշկութի նր։
և ինքն կայսրն պահօք և աղօթիւք խնդրէր
յա՟յ տալ առողջութի աղէքսանդր թագա
ւորին։ Իսկ ՚ի միում գիշերի աղէքսանդր
կայր յաղօթս. և յաղօթելն նր ձայն եղև
յերկնից առ նա և ասէ. զհնգետսին տղայքն
կայսեր որ ծնեալէ թգուհին. եթէ զենցէ
ձեռամբ իւրով և ոչ երկմտիցի. և արեամբն
նց լուասցէ զմարմին քո. նոյն ժամայն բժշ
կեսցիս յախտէ քումմէ։ և եղիցի մարմին քո
փափուկ իբրև զմատղաշ տղայի։ Ո՛ որ լու


եալ

եալ զայս աղէքսանդր՝ ասէ ընդ միտս իւր.
ոչ է պիտոյ և ոչ է արժան յայտնելոյ զայս
ումեք. ո՞վ է որ զմին որդին իւր զենցէ սրբել
զբորն իմ. որ նա զհնգեսին որդիսն զենցէ
վն իմ։ Այլ ոչ յայտնեաց ումեք։ Իսկ կայս
րն 'ի գիշերի և 'ի տուընջեան աղաղակէր
առ տր վն առողջութն աղէքսանդրի։ Իսկ
'ի միում ժամու կալ արքային յաղօթս.
լուաւ ձայն որ ասէր. վն էր աղաղակես
առ իս՝ աղէքսանդր թագաւորն ինքն գիտէ
զդեղ առողջութն իւրոյ։ Յորժամ լուաւ
զայս կայսրն. գնաց առ աղէքսանդր և ասէ
ո՞վ աղէքսանդր կէս հոգւո՛յ իմոյ. լուայ
բարբառ երկնից որ դու ինքնին գիտես
զդեղ առողջութն քո. վն էր ինձ ոչ ասես
Ամէն ասեմ քեզ. ես կարծէի թէ զամ ինչ
քո յայտնես ինձ. և ոչ բան թագուցանես
յինէն արդ ասա՛ ինձ թէ ոպ բժշկիս։ Ասէ
աղէքսանդր. ոչ է զարմանք որ թագուցի
'ի քէն զդեղ առողջութն իմոյ. վն զի յոյժ
դժուար թուեսցի քեզ առնել զայն։ Ասէ
կայսրն. ասա՛ ինձ ոպ դժուարինէ։ Ասէ
աղէքսանդր. ոչ բերէ համարձակութիւն
սիրտ՝ բերան առնել և յիշել զնա՛։ Իսկ կայս
րն բռնադատեալ երդմնեցոյց զնա՛ զի պատ
մեսցէ նմա՛ թէ իւ իւիք լինելոցէ նմ բժշ
կութն։ Ասէ աղէքսանդր. անցեալ աւուրն
կայի աղօթս. լուայ բարբառ 'ի տէ այսպէս
եթէ դու զհնկեսին որդիքն քո զենցես և

ոչ երկմտեցես. և արեամբըն նր լուացես զխո
եղեցի մարմին իմ ոչ էր յաւաջագոյն. իբրև
զմատաղաշ տղայի: Եւ ես վն այն լռեցի և ոչ
պատմեցի քեզ. զի ան հնարէ սպանանել
քեզ զորդեակն քո վն առողջութե իմոյ:
Ասէ կայսրն. ով եղբայր աղեքսանդր. թե
բահաճատեցեր զիս. ոչ հաւատաս որ ըսպա
նանեմ ես զորդեակքն իմ վն առողջութե
քո: ոչ թէ զհնգեսինն միայն՝ այլ և թէ լի
նէր տասն. սպանանէի զամենեսեան վն քո
Յայնժամ կայսրն սպասէր ժամ գտանել
պարապոյ զի մի անդ լիցի թագուհին: և
իբրև գնաց թգուհին յեկեղեցին ժամ աղաւ
նօքն իւրովք. եմուտ կայսրն՛ի սենեակ անդր
ուր մանկունքն նր ննջէին հինգն ՛ի միա
սին: առեալ սուր և զենեաց զհնգեսին որ
դիքն իւր ձեռամբ. և ելից զարիւն նր աման
և առեալ եբեր աղեքսանդրի և ասաց. շու
տով լուացվիլ: և իբրև լուացվաւ՝ նոյն ժա
մայն ձեղքեցաւ մարմինն և անկան ոչ կեղ
ևանք. և սրբեցաւ մարմինն նր. և եղև փա
փուկ իբրև զմարմին տղայի: Եւ տեսեալ
լուսթփիկն ճանաչեաց զնա. և անկան զպարա
նոցաւն միմեանց և համբուրեցին զմիմեանս
Եւ ասէ լուսթփիկն. ով եղբայր աղեքսան
դըր. օրհնեալ եղիցի ժամն այն որ սպանանէ
զորդիքն իմ վն առողջութե քո: Եւ նոյն
ժամայն ագոյց նմա զգեստս թագաւորա
կան. և իւղով անուշիւ էօծ զնա: և ասէ

 եղբա

եղբայր իմ. որքան որ Թագուհին իմ չէ ե-
կեալ եկեղեցւոյն։ Արդ գնասցես յինէն մղո-
նս Ի. և առաքեսցես առաջի քո հրեշտակս
զի եկեալ հռչակեսցէ զգալուստ քո։ և ես
մեծաւ պատուով ելանեմ ընդ առաջ քո.
և եկեալ բնակեսցես ընդ իս ՚ի միասին. մինչև
տր ած բացցէ քեզ դուռն ողորմութե։
Ասէ աղէքսանդր. բարի է խորհուրդդ քո։
Այն ժամայն գաղտ ՚ի գիշերի էլ բազում
ամբոխիւք և գնաց մղոնս Ի. և առաքեաց
հրեշտակս առ կայսրն զի ծանուսցէ նմա
զգալուստն աղէքսանդր Թագաւորին ՚ի յե-
գիպտոսէ։ Եւ Թագուհին լուեալ ուրախ
եղև յոյժ և ասէ ցկայսրն. էլ դու ընդ ա-
ռաջ նր բազում զօրօք. և ես զկնի քո ելցեմ
իմ աղախնեօքս և ծառայիւք իմովք. և
զմահ տղայոց իւրոց ոչ գիտէր։ Եւ կայսրն
էլ մեծ զօրօք և մեծաւ պատուով ընդ ա-
ռաջ նր. և Թագուհին զկնի. և եկին առ ա-
ղէքսանդր Թագաւորն։ Եւ տեսեալ զմի-
մեանս անկան զպարանոցէ. և մեծ ժամս
համբուրեցին զմիմեանս։ Այնպէս և Թա-
գուհին. և եկին ՚ի պաղատն արքունի։ Եւ
յորժամ եղև ճաշ՝ բազմեցուցին զաղէք-
սանդր արքայ ՚ի մէջ իւրեանց. այսինքն.
՚ի մէջ կայսերն և ՚ի մէջ Թագուհւոյն։ Եւ
Թագուհին յոյժ ուրախ եղև. և զուարթ-
երես և պայծառ սիրտ ցուցանէր նմա որ-
չափ և կարէր։ և ինքն ձեռամբ իւրով մա-

տուցանէր նմա ուտել։ Տեսեալ զայն կայսրն
ասէ ցնա. ո՜վ սիրելի տիկին իմ Փլորենցի
եայ. ուրախեմ 'ի բանըդ զոր դու առնես.
եւ սէր ցուցանես աղեքսանդր արքային։ Ասէ
Թագուհին. տէր իմ, առաւել արժանի սէր
ցուցանել քեզ վն գալոյ Թագաւորիս մերոյ
աղեքսանդրի. քան զի այլ ոչ ինչ իրաց՝ մի-
այն վն այն, զի 'ի ձեռն սորայ ետ մեզ ած
հասանիլ մեծութես այս։ Ասէ կայսրն. ո՜վ
Փլորենցիայ՝ լուր բանից իմոց. տեսեր դու
զբորոտն զայն որ անցեալ աւուրն նստեալ
կայր առաջի մեր. եւ ըմպեաց 'ի սըկհոյն իմմէ։
Ասէ Թգուհին. տեսի. որ ոչ երբէք տեսեալէ
իմ այնպէս գարշ այր եւ վիրաւորեալ. ո՜վ
այրն այն. Ասէ կայսրն. այն աղեքսանդր ար
քայ ինքնէր՝ որ այժմ իմիջի մերում նստ
եալ կայ։ Ասէ ցնա Թագուհին. քա՜ւ լիցի եւ
հեռի եղիցի. աղեքսանդր արքայէ մերում
այնպիսի աղտեղի կերպարանք. Ասէ կայսրն
Ճշմարիտ ասեմ քեզ ո՜վ Թագուհի. որ ա-
ղեքսանդր արքայ ինքնէր։ Ասէ Թագուհին
ապա եթէ այնէր՝ վն էր ոչ ասացեր ինձ։
Ասէ կայսրն. վն այն ոչ ասացի քեզ որ չի
վշտանայիր։ Ասէ Թագուհին. իւ իւիք
եղեւ դեղ առ ողջութե սորայ։ Ասէ կայսրն
յորժամ ստուգիւ իմացայ որ աղեքսանդր
արքայնէր. նոյն ժամայն ետու կոչել որ չափ
որ բժիշկ կայր. եւ նք յորժամ տեսան զամ
ասացին թէ նմա մահադեղէ արբուցած.

 Ճար

ճա՛ր չի լինար։ Յայնժամ ապաւինեցայ յա՟ծ
և իւր ամենակարող զօրութե՟ն․ կոչեցի զաղ
քատս․ և զկրօնաւորս, և զքահանայս․ և ե_
տու ն՟ց պարգևս զի աղօթս արասցեն վ՟ն
ն՟ր։ Եւ ես այլ պահօք և աղօթիւք խնդրէի
ա՟յ տալ սմա առողջութի՟։ Եւ յաւուր մի
ում մինչ կայի յաղօթս և աղաղակէի․ նոյն
ժամայն ձայն եղև առ իս որ ասաց՝ զի՞ աղա
ղակես․ աղէքսանդր թագաւորն ինքնին գի
տէ զդեղ առողջութե՟ն իւրոյ։ Եւ յառաջ
մանէ ա՛զդ եղեալէր եղբօրս իմոյ․ և սա՛ յի
նէն թագուցեալէր և ոչ ասէր։ Եւ իմ ե_
կեալ բռնադատեցի զսա՛․ և երդմնեցուցի
մինչև պատմեաց ինձ․ և ասաց թէ վ՟ն այն
թագուցի՝ որ յոյժ դժուարինէ բանս։ Եւ
իմ հարցաքննեալ թէ ո՞վ․ և ասաց․ եղբայր
իմ թէ զհնգեսին որդեակն քո զենցես ձե
ռամբ քով․ և ն՟ց արեամբն լուասցես զիս՝
նոյն ժամայն բժշկիմ։ Եւ իմ ապասէի գտա
նել ժամ պարապոյ՝ որ սպանանէի զն՟ա․ և
դու յորժամ գացիր յեկեղեցին՝ նոյն ժա
մայն սպանի՝ և արեամբն լուացի․ յայնժամ
ճեղքեցաւ մո՛րթ նորայ․ և թափեցաւ ո՟պ
կեղևանք։ Ապա՛ տեսեալ և ճանաչեցի․ և
ագուցի ն՟մ բեհեզս թագաւորական։ և ա_
սացի գնասցես և հեռասցիս մղոնս ի․ և ա_
ռաքեսցես հրեշտակս որ եկեալ հռչակես
ցէ զգալուստ քո․ և ես ելանեմ ընդ առաջ
քո․ և եկեալ բնակեսցուք ՚ի միասին։ Եւ

որդ՝ ով թագուհի իմ. եթէ յառաջմանէ իմացեալ էիր՝ տայիր հրաման որ սպանանէին զորդեակքն իմ վս առողջութն նր։ Բայց թագուհին. ընդէ՞ր փորձես զիս՝ ոչ զհինգն այլ թէ լինէր տասն ևս, տայի սպանանել վս առողջութն արքայիս իմոյ։ Եթէ հոգի սորայ երթայր՝ այլ ոչ դառնայր. բայց որդիքն իմ եթէ մեռան՝ այլքն տայ ած ինձ փոխանակ նց. քան զի դեռ ևս ոչէմ ծերացեալ։ Զայս լուեալ դայեակք մանկանցն՝ ողբալով մեծաձայն մտին առ մանկունսն ՚ի սենեակ անդր։ Եւ իբրև մտին՝ և տեսին զմանկունսն որք պարառեալ խաղային և օրհնէին զած. և ելեալ պատմեցին առաջի կայսերն, և առաջի ամենեցուն թէ մանկունքն կենդանիեն. և երգեն զերգս օրհնութն։ և ամենեքեան մտեալ ՚ի սենեակն տեսին և փառս ետուն այ. որ այնպիսի սքանչելիս արար առաջի ամենեցուն։

[illegible]

Յետ այնորիկ կայսրն բազում զօրս գումարեալ և գնաց յեգիպտոս. և ըմբռնեաց զթագուհին աղեքսանդրի. և հրամայեաց հրով այրել ընդ սիրաւն իւրում։ Եւ ունէր կայսրն քոյր մի. ետ զնա աղեքսանդրի ՚ի կնութն։ և արքայ աղեքսանդ-

սանդր հնազանդեցոյց զամ՟ երկիրն ինքն
քոյ ձեռին իւրում. և կայսրն դարձաւ յեր
կիրն իւր։ Իսկ արքայ աղեքսանդր իմաս
տութբ՟ վարէր զերկիրն իւր. և զթշնամիս
իւր զամ՟ կոտորեաց։ Յետ այնորիկ ՚ի մի՛ա
եած զհայր և զմայր իւր, որ ընկեցին զինքն
՚ի ծով. և բնակութի նց՟ էր իւր հրամանին։
Ուղարկեաց առ նս՟ հրեշտակս և ասէ. թէ
այս ինչ օր թագաւորն գայցէ առ ձեզ.
և նստիցի ընդ ձեզ ՚ի ճաշ։ Իսկ հրեշտակն
գնաց ՚ի սահմանն այն որ էին ծնօղք թա
գաւորին. և ոչ ոք գիտէր թէ ծնօղքն էին
արքային։ Իսկ եկեալ առ նս՟ հրեշտակն. ող
ջոյն մատուցանէր նց՟ արքայէն աղեքսանդ
րէ. և ասէ ցնս ո՞վ սիրելիք իմ տեսէք զպատ
րաստութի ձեր. Տր՟ իմ արքայ կամի ընդ
ձեզ այս նիշ օրն սեղան նստել և ճաշակել
ընդ ձեզ։ Ասէ զինուորն. որ է հայր թագա
ւորին. ո՞վ սիրելի իմ որ հնեալ եղիցի ժամն
այն յորում աւուր նստելոցէ Տր՟ մեր արքայ
ընդ մեզ ճաշ։ Իսկ ասէ մայրն ցհրեշտակն.
այսպս՟ ասասցես Տն՟ մերոյ. եթէ ո՛չ լինի մեզ
ցնծութի և առաւել ուրախութի մեծ քան
զայն, որ նստիցի ընդ մեզ ՚ի ճաշ. քան զի ծա
ռայ նր՟ եմք։ Իսկ դարձաւ հրեշտակն առ
արքայն և ասէ. Տր՟ արքայ՝ ծանուցի զհրա
մանն քո. և նա ուրախ եղև յոյժ վն՟ գնալոյն
քո առ նոսա։ Յետ այնորիկ ոչ բազում ա
ւուրց՝ եկն արքայ բազում զօրօք առ հայր

իւր. և հայրն էր ընդ առաջ նորա: Իսկ իբրև
եհաս առ արքայ էջ ՚ի ձիոյն և անկեալ երկիր
եպագ արքային. և ոչ գիտէր թէ իւր որ
դինէ որ ընկեց զնա ՚ի ծով: և յարոյց զնա ար
քայ ՚ի գետնոյ. և հրամայեաց հեծնուլ ՚ի ձի:
Իսկ նա հեծեալ և երթային երկոքեանն
իմիասին. մինչև եկին ՚ի տուն զինուորին:
Իսկ մայրն նա էր ընդ առաջ նորա. և անկեալ
երկիրեպագ նմա. և արքայ յարոյց զնա: Իսկ
ասէ մայրն. տէր արքայ ուրախութիւն է մեզ
մեծ այսօր. որ տէրն մեր արքայ փառաւաշուք
անձամբն իւրով նստելոց է ընդ մեզ ՚ի ճաշ:
Իսկ իբրև պատրաստեցաւ ճաշն՝ ասէ զի
նուորն ցարքայն. տէր արքայ՝ ժամ է ճաշելոյ.
և էլ արքայ նստիլ ՚ի ճաշ: Յայնժամ զինուո
րն եառ ՚ի ձեռն իւր ջուր ծառայել ար
քային. և կինն նորա որ էր մայր արքային՝ առեալ
սրբիչ ՚ի ձեռն կայր յանդիման արքային:
Իսկ իբրև ետես արքայ զայս՝ ծիծաղեցաւ
և ասէ ընդ միտս իւր. ահա կատարեցաւ
բանն պիւղպիւլին. զի ահա հայր իմ և մայր
իմ առ ջուր և սրբիչ և սպասէ լուանալ ձե
ռաց իմոց: Ասէ թագաւորն ցծառայս իւր
առէք զջուրն ՚ի ձեռանէ զինուորին. և
զսրբիչն ՚ի ձեռանէ կնոջն. և դուք ծառայ
եցէք ինձ: Ասէ զինուորն ցարքայն. տէր
ընդ էր ոչ համարիս արժանի զմեզ ծառայ
ել քեզ. և եղիցի մեզ փառք յաւիտենից.
Ասէ թագաւորն. նստարուք դուք՝ քան զի

ծերացեալ էք. և վն̃ ծերութե̃ ձերոյ պա
տուեմ զձեզ: Իսկ իբրև բազմեցաւ արքայ
'ի սեղանն. նստոյց զհայրն 'ի յաջմէ. և զմայ
րըն 'ի յահեկէ: և նոքա որ չափ և կարէին ու
րախացուցանէին զարքայն: Իսկ յետ ճաշոյն
եմուտ արքայ 'ի ներքսագոյն սենեկի. և
հրամայեաց զինուորին և կնոջ նորա մատնել
զկնի իւր: և ամենեցուն հրամայեաց արտա
քըս ելանել և փակել զդուռն: Իսկ ասէ ցն̃ս
արքայն. սիրելիք իմ աղաչեմ զձեզ. հարցից
ձեզ բանմի՝ և ասացէք ինձ զճշմարիտն:
Ունէիք զաւակ իվ̃ր երկրի՝ թէ ոչ: ԵՒն̃ք
ասեն ոչ որդի և ոչ դուստր: Ասէ թագա
ւորն. բնաւ ոչէ ծնեալ ձեզ որդի: Ասէ զի
նուորն. ունէաք որդի մի և մեռաւ: Ասէ
թագաւորն. որպիսի մահուամբ մեռաւ:
Ասէ զինուորն. իւր մահուամբ: Ասէ թագաւո
րըն. եթէ լուայց որ այլ մահուամբ մեռեա
լէ՝ յայնժամ դարձուցից զպատութն ձեր 'ի
գլուխ ձեր: Ասէ զինուորն. տ̃ր արքայ՝ ըն
դէր քննելով հարցանես վն̃ որդւոյ մերոյ:
Ասէ թագաւորն. ոչէ առանց պատճառա
նաց. և կամիմ գիտել թէ ոպ̃ մեռաւ. լուեա
լէ իմ եթէ սպանեալէք դուք զորդին ձեր.
և եթէ ոչ պատմէք ինձ զստոյգն՝ մեռանի
ցիք և դուք: ԵՒն̃ք լուեալ զբանն արքայի
անկան իվ̃ր երեսաց իւրեանց երկիր՝ և խըն
դրէին զներումն: Իբրև ետես զն̃ս արքայն
անկեալ երկիր առաջի իւր. յարոյց զնոսա և

 ասէ

ասէ. կարծեմ թէ սպանեալ էք դուք զոր
դին ձեր։ Ասէ զինուորն. տէր արքայ ողոր
մեա՛ մեզ. էր մեզ որդեակ մի՝ և մեկնեաց մեզ
զխօսս պիղպիղին. իբր թէ լինելոցէր ին
քըն մեծատուն. որ ես և մայր նր ծառայ
եղոցեմք նմա։ և մեք լսեալ նախանձու ընկե
ցինք զնա ՚ի ծով։ Ասէ թագաւորն. զի՞նչ
չար լինէր եթէ կատարէր այդպէս. բայց
թէ պատիւ և փառք ձեր յաւելուին։ Եւ
արդ՝ մեղս ծանրագոյնս գործեցիք առաջի
այ. քան զի յոյժ յիմարութիւն է հակառակ լի
նել կամացն այ։ Յետ վճար խօսիցն՝ ասէ
ցնոսա թագաւորն. ո՞վ քաղցրիկ ծնօղք իմ.
ես եմ աղէքսանդր որդին ձեր զոր ընկեցիք
՚ի ծով։ Եւ ած ողորմութեամբն իւրով փրկ
եաց զիս՝ և հասոյց այսպիսի մեծութեան։ և
կատարեցաւ խօսքն պիղպիղին՝ որ հայր
իմ ջուր առեալ ՚ի ձեռուին՝ լուանալ զձեռս
իմ. և մայրն իմ զսրբիչն. և խօսքն այ ոչ խա
փանեցաւ։ Եւ նք լուեալ զայս երկեան եր
կիւղ մեծ. և անկան իվերայ երեսաց իւր
եանց առ յոտս որդւոյն իւրեանց. և խնդրե
ին ներումն և ողորմութիւն։ Ասէ ցնս թագա
ւորն. մի՛ երկնչիք. ոչ ինչ լինի ձեզ չար. ե
թէ ոչէիք ընկեցեալ զիս ՚ի ծով՝ ոչ հասա
նէի այս մեծութեան։ Եւ համբուրեաց
զհայր և զմայր իւր. և մայրն առաւել խնդու
թեն՝ լայր։ Ասէ ցնոսա թագաւորն. մի՛ լայք՝
այլ քաջալերացարուք։ Եւ ամ ինչ որ ինէր

քոյ ձեռւին իմոյ՝ հնազանդ լիցի ձեզ։ Եւ
առեալ զնոսա մեծաւ պատուով և ոսկիա
կազմ կառօք դարձաւ յետս ՚ի քաղաքն և ՚ի
պալատն իւր։ Եւ էին ծնօղք նորա ՚ի պատուի
զամենայն աւուրս կենաց իւրեանց։ Յայն
ժամ ասէ որդին ցկայսրն. տէր արքայ և
հայր իմ սիրելի. ՚ի միտ առեր զբանս իմ զոր
ասացի։ Ասէ ցնա կայսրն. այո՞ իմիտ առի։
Ասէ որդին. այսպէս թէ և ինձ շնորհէր ա̃ծ
իմաստութիւն. ես ոչ հանէի ՚ի ձէնջ ըզ տ̃ր
ութին ձեր. և ոչ պակասեցուցանէի զպատիւ
ձեր. այլ որ ըստ օրէ յաւելուի զպատիւ
ձեր. որպ̃ տրարնամ ծնողաց իւրոց։ Ասէ կայս
րըն. ո՞վ քաղցրիկ որդեակիմ. լաւ առակ
ասացեր մեզ։ Այսու հետ և ՚ի քեզ յանձն
եմ զթագաւորութիւս իմ. և ես ընակ իմ ա-
ռանձին. վ̃ զի ծերացեալ եմ։ Ասէ որդին.
հայր իմ. արդ՝ լիցին իրաւունք թագուհ
ւոյն։ Եւ հրամայեաց կայսրն դատաւո
րաց քննութիւն առնել։ Ասեն դատաւոր
քըն ցկայսրն. տէր արքայ. զի՞նչ քննես
ցուք զդա. զի ինքնին բերանով իւրով խոս
տովան եղև։ Եւ այլ մեծագոյն վկայ սի
րաւն իւր, որ դտաւ կանացի սգեստին.
Եւ նոյն ժամայն հրամայեաց որդի արքայ
ին որ կապեցին զթագուհին ամեհի ձիոյ
ագի. և քարշեալ փողոցէ ՚ի փողոց՝ տարեալ
այրեցին ընդ սիրաւն իւրում։ Եւ ամենե
քեան օրհնէին զա̃ծ. որ զանպարտն փրկ

 եաց՝

նայ՝ և զԹագուհին պատժեաց։ Զհետ այ
նորիկ ոչ բազում աւուրց՝ մեռաւ կայսրն։
և Թագաւորեաց ի տեղի նր որդի արքային
դիոկղետիանոս։ Նաև զդպրապետքն մեծա
ցոյց ևս քան զևս յոյժ։ Նաև իմաստութեամբ վա
րէր զամենայն երկիրն որ ի ներքոյ տէրու
թե իւրոյ էին։ և ամենեքեան օրհնէին
զնա։ և գովէին զիմաստութիւն դիոկղէ
տիանոսի կայսերն։ և սիրէին զնա որ այնպի
սի քաղաքավարութեամբ վարէր զաթոռն
իւր։ Նա՛ կեցեալ բարի կենօք։ ծաղկեալ
որդովք և դստերօք։ լի՛ աւուրբք հանգեաւ
խաղաղութեամբ։ Նաև Քի մարդասիրին եղիցի
փառք։ որ առնէ զօրութիւնս և սքանչելիս ան
բաւս։ որ է օրհնեալ ան զրաւ յաւիտենիւ

Ամէն։

---

# Ցանկ գրգկանս։

## Ա.

Առաջին առակ, Թագուհւոյն։ Ս͞ն Ջիւ-
ղոյ ծառոյն չորացելոյ։ սկսանի երեսն։ 19

Երկրորդ առակ, Թագուհւոյն։ Ս͞ն հով-
ւին, և վարազի խոզոյն վայրենացելոյ։
սկսանի երեսն 28

Երրորդ առակ, Թագուհւոյն։ Ս͞ն զին-
ուորին աղքատացելոյ, և գողանալն ոսկւոյն
յաշտարակէ։ սկսանի երեսն 40

Չորրորդ առակ, Թագուհւոյն։ Ս͞ն Թագա-
ւորի միոյ, և յեօթեանց իմաստասիրաց նո

րին, և մանկանն Եէրիլնոսիս. սկսանի երեսն 52
Հինգերորդ առակ, Թագուհւոյն։ Մ̅ Օգդա՜խանոսի կայսերն ագահութե, և վիր կիլիյոսի իմաստասիրի արարեալ հնարիցն։ սկսանի երեսն 73
Վեցերորդ առակ, Թագուհւոյն։ Մ̅ ջրգողեալ Թագաւորին, և իւր սենեկապետին, և կնոջն նորա. և 'յեօթեանց իմաստասիրացն։ սկսանի երեսն 90
Չեօթներորդ առակ, Թագուհւոյն։ Մ̅ Թագաւորի ումեմն, և սիրելի զինուորին, որ էառ զԹագուհին և փախեաւ։ սկսանի երեսն 108

Առաջին առակ, Պանցիլիասայ դպրոտն։ Մ̅ զինուորին, և բազէյին, և շանն նորա. սկսանի երեսն 23
Երկրորդ առակ, Ձենթուլոսի դպրոտն։ Մ̅ս կնոջ միոյ շնացողի, որ ետ զայրն անմեղ 'ի դատապարտութի։ սկսանի երեսն 33
Երրորդ առակ, Գաթոնի դպրոտն։ Մ̅ անծեղին 'ի զուր սպանմանն, խորամանկութե կնոջն։ սկսանի երեսն 46
Չորրորդ առակ, Մալխիօրախայ դպրոտն։ Մ̅ս կնոջ միոյ, որ կամէր սիրել զքահանայն։ սկսանի երեսն 62
Հինգերորդ առակ, Յօսէփոսի դպրոտն։ Մ̅ Բուքրատեսի բժշկին, և կալենոսի Թոռին, և բժշկելն զորդի Թագաւորին Մաճարաց։ սկսանի երեսն 83

Վեց երորդ առակ, Կղէօպատրայ դշխոյն․ վասն կնոջ ումեմն, որ սպան երիս զինուորս․ սկսանի երեան 99
Յեօթն երորդ առակ, Յովակիմայ դշխոյն․ Վն զինուորին, որ մեռաւ ի վս սակաւու արեան կնոջն, և կնոջն անզգամութե, որ խայտառակեաց զայրն իւր․ սկսանի երեան 122

Գ․

Գոչերն զիմաստասէրսն, և տալ զդիոկղետիանոս 'ի ձեռս նց, զի ուսանիցի իմաստութի․ սկսանի երեան 5

Ժ․

Ժողովումն դպրապետացն, և առնուլ զորդի արքային, և ըղձումն ժողովրդոք բերելն առ կայսրն, և խօսիլն․ սկսանի երեան 130

Խ

Խնդիրք Թագուհւոյն 'ի կայսերէն, զի բերցէ զորդին․ սկսանի երեան 10
Խայտառակելն դիոկղետիանոսի զԹագուհին, և մերկացուցանելն զերիտասարդն 'ի կանացի զգեստէն․ սկսանի երեան 133
Նաւակ դիոկղետիանոսի արքայ որդւոյն ասացեալ․ 'ի լուր ամ հրապարակի․ Վն մանկանն աղեքսանդրի, և Թագաւորելն․ սկսանի երեան 137
և Վն Տիւրոսի Թգրին․ սկսանի երեան 144
և Վն լուդվիկի որդւոյ Թագաւորին իէլլացւոց․ սկսանի երեան 146
և վն գալըյն Սեդոնի որդւոյ արքային

 սպա

տպանիացնոյ․ սկսանի երեսն 155
Եւ Սն գնալոյն լուծմնքի կայսերն զօրօք յեգիպտոս, և նուաճելն զեգիպտոս ընդ ձեռ ւամբ աղեքսանդրի, և ածելն զԹագու հին․ սկսանի երեսն 175

Վ․Ե․Ր․Ջ․

---

Աւարտեցաւ գրգուկս պատմութե շահաւէտ և օգտակար ամի ՚ի փրկութեան հանուրց արարածնեաց եղբարց․ յամի ներմարմնութեան Տն 1696․ և հայոց 1145․ յուլիսի 20․ ՚Ի հայրապետութեանն Տեառն Նահապետի դխտղեսի ամենայն հայոց․ Արդ՝ որք հանդիպիք սորա վայելելով կամ զբօսնլով յիշեսջիք յաղօթս ձեր զմատակարարս գործոյս․ ոյք յիշէք յիշեալ լիցիք ՚ի նոյ սոյն մերմէ․ ամէն․

Համահաւանութբ Տն Եփրեմ Արհի եպիսկոպոսի, և պատրիարքի կոստանդնուպօլսոյ․

Հոգաբարձութբ, ծախիւք, և արքաւգութբ Նուսատի ուստեան․

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм.ССР
им. А. Мясникова
ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.

1924
1696
228

